

25.788

334 .

h-56

1927

557(02)
L-59

55 JAN 2010

Վ. ԼԻՆՏԿԱՐԵՎ

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

Թարգմանեց յեվ ծանոթություններով լրացրեց
ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՊՐԱԿ Բ.

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1927

334

L-56

Վ. ԼԻՆՏԿԱՐԵՎ

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՅԲՈՒԲԵՆԸ

527

Թարգմանեց յեզ Ժանորթություններով լրացրեց
ՄԱՆՈՒԿ ԳԱԶԱՐՅԱՆ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ-1927



4832-88

R.

(Շարունակութիւն)

կիրպով զարգացաւ: Յետեւ անգլիական սպառողական ընկերութիւնները համեմատելու լինենք ուրիշ յերկիրներէ նման ընկերութիւններէ հետ, այն ժամանակ կերևա, Վոր իսկապէս առաջիններն իրենց ուժով մյուսներէց շատ առաջ են անցել: Այդ բանը մեզ ցույց կտան հետեւյալ համեմատական թվերը.

1922 թ. չերկրագնդի վրա հաշված է 50,000-ից ավելի սպառողական ընկերություններ¹⁾:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԻՎԵ Սպառողական ընկերություններն առավելագույն տարածված են Արևմտյան Ֆեվրոպայում, վորտեղ, 22 չերկիրներում հաշված են 22,000-ից ավելի ընկերություններ:

1922 թ. սպառողական ընկերություններն առանձին չերկիրներում բաժանվում են այսպես.

1 Իտալիա . . .	2.300 ընկ.	12 Շվեյցարիա . . .	608 ընկ.
2 Վենգրիա . . .	2.007 »	13 Ֆինլանդիա . . .	583 »
3 Ֆրանսիա . . .	1.961 »	14 Նորվեգիա . . .	411 »
4 Դանիա . . .	1.805 »	15 Լատվիա . . .	348 »
5 Գերմանիա . . .	1.784 »	16 Իսպանիա . . .	319 »
6 Հարավ-Սլավա . . .	1.371 »	17 Եստոնիա . . .	255 »
7 Անգլիա . . .	1.331 »	18 Լիտվա . . .	242 »
8 Շվեցիա . . .	898 »	19 Բուլգարիա . . .	206 »
9 Լեհաստան . . .	885 »	20 Ավստրիա . . .	173 »
10 Չեխո-Սլովակ. . .	835 »	21 Բելգիա . . .	151 »
11 Ռումինիա . . .	617 »	22 Հոլանդիա . . .	141 »

Խ. Ս. Հ. Մ. 1922 թ. համարում էր 19.000 ընկ. իսկ 1923 թ. 22,480 ընկ.: Արևելյան չերկիրներից առաջին տեղը բռնում է Ֆապոնիան, վորտեղ գոյություն ունեն 2000-ից ավելի սպ. ընկերություններ: Հստ ընկերությունների քանակի՝ Անգլիան բռնում է Արևմտյան Ֆեվրոպայի չերկիրների մեջ 7-րդ տեղը:

Հետևյալ աղյուսակները չերեան են հանում անգլիական սպառողական ընկերությունների իսկական ուժը:

ԱՆԳԱՄՃՆԵՐԻ ՔԻՎԵ 1922 թ. համաշխարհային սպառողական կոոպերացիայի անդամների թիվը 25,000,000-ից անցնում էր, իսկ ընտանիքների անդամների հետ միասին՝ այդ թիվը հասնում էր, հավանորեն, մինչև 125,000,000 հոգու, վոր կազմում էր չերկրագնդի վորջ ազգաբնակչության մի տասնուհին գերորդ մասը (70%):

¹⁾ 1922 թ. այդ թիվը հասավ մինչև 70—75 հազարի, զլխավորապես Խ. Ս. Հ. Մ. և արևելյան չերկիրների հաշվին:

Զ մտրոյ .իլ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Վերոհիշյալ թվից Արևմտյան Յեվրոպայի 22 յերկիրներին հասնում էր 15,000,000-ից ավելի անդամ (ընտանիքի անդամներով՝ մոտ 60—70 միլիոն)։ Բացի դրանից Խ. Ս. Հ. Միության սպառողական կոոպերացիան ուներ 5,000,000-ից ավելի անդամ։

Անգլիական սպառողական ընկերություններն իրեն կազմի մեջ ունեին 4. 548,567 անդամ, այսինքն, արևմտյան յեվրոպական սպառողական ընկերությունների բոլոր անդամների մոտ $\frac{1}{3}$ մասը։

1922 թ. առանձին յերկիրների մեջ սպառողական ընկերությունները բաժանվում էին հետևյալ ձևով.

1 Անգլիա . . .	4.548.567 անդ.	12 Ֆինլանդիա	337.148 անդ.
2 Գերմանիա . . .	3.161.794 »	13 Շվեցիա . . .	259.388 »
3 Ֆրանսիա . . .	1.398.708 »	14 Բելգիա . . .	225.000 »
4 Վենգրիա . . .	900.855 »	15 Ռումինիա	157.338 »
5 Չեխո-Սլովակ. . .	858.002 »	16 Հոլանդիա . . .	137.244 »
6 Իտալիա . . .	600.000 »	17 Բուլգարիա	136.975 »
7 Ավստրիա . . .	512.017 »	18 Եստոնիա . . .	94.732 »
8 Հարավ-Սլավ. . .	509.637 »	19 Նորվեգիա . . .	93.189 »
9 Լեհաստան . . .	395.582 »	20 Լատվիա . . .	91.258 »
10 Շվեյցարիա . . .	371.354 »	21 Լիտվա . . .	51.575 »
11 Դանիա . . .	337.535 »	22 Իսպանիա . . .	33.727 »

(Խ. Ս. Հ. Մ. հասնում էր 1922 թ. մոտ 5.000,000 անդամի, իսկ 1924 թ. այդ թիվը հասավ մինչև 7,000,000-ի)։

Առանձին ընկերությունների մեծությունը Անգլիայում համեմատաբար փոքրաթիվ ընկերություններին անդամների ահագին մասսա լե ընկնում. այդ հանգամանքը ցույց է տալիս, Վոր անգլիական սպառողական ընկերությունները հանգիստանում են չափազանց խոշոր կազմակերպություններ։

Այսպես, 1915 թ. հասնում էր՝			
մի անգլիական ընկերության . . .	2.400 անդամ		
» Գերմանական . . .	1.080 »		
» բելգիական . . .	800 »		
» շվեյցարական . . .	711 »		

» ֆրանսական	»	275	»
» իտալական	»	225	»
» դանիական	»	152	»

(Խ. Ս. Հ. Միության մի ընկերության հասնում է 314 անդամ):

Ս.գգաբնակչության
**կոոպերացման «աս-
սիաներ»**

Արեւմտյան Յեվրոպայում ազգաբնակչու-
թյան մի հինգերորդ մասը (20%) մաս-
նակցում է սպառողական կոոպերացիային:

Այս թիվն Անգլիայի վերաբերմամբ պակաս է, վորովհետեւ այն-
տեղ ազգաբնակչության $\frac{4}{10}$ մասն անդամագրված է սպառող-
ական ընկերություններին: Դանիայում, Վենգրիայում, Ֆին-
լանդիայում, Շվեյցարիայում և Ավստրիայում կոոպերացման
աստիճանը նույնն է, այսինքն՝ 40%: Գերմանիայում հավա-
սար է 18%-ի, Ֆրանսիայում, 11%-ի (Խ. Ս. Հ. Միության
մեջ կոոպերացված եր ազգաբնակչության $\frac{1}{4}$ մասը):

Շրջանառություններ Անգլիական սպառողական ընկերություն-
ների հզորությունը պարզորեն յերևում է նրանց կատարած
ըրջանառություններից:

1922 թ. ամբողջ աշխարհիս սպառողական ընկերություննե-
րը վաճառել են ապրանք 3.000,000,000 վոս. ուրբի գումարից
ավելի: Այս 3 միլիարդից ընկնում է Արևմտյան Յեվրոպայի
22 յերկիրներին—2 միլիարդ, այսինքն մեծ մասը: (Զնաշված
Խ. Ս. Հ. Մ. սպառողկոոպերացիայի 400,000,000 ո. ըրջանա-
ռությունը):

Առաջին տեղը բռնում է Անգլիան՝ վաճառելով իր սպա-
ռողական ընկերությունների միջոցով 1 միլիարդից ավելի
ապրանք (ուրիշ խոսքով, արևմտյան յեվրոպական կոոպերա-
ցիայի ըրջանառության կեսն ընկնում է Անգլիային):

1922 թ. զանազան յերկրներում սպառողական ընկերու-
թյուններն ունեցել են հետևյալ ըրջանառությունները.

1 Անգլիա	915.705.000	մինչ-պատ. վոսկ.	ուրբի
2 Գերմանիա	250.621.000	»	»
3 Ֆրանսիա	125.000.000	»	»
4 Շվեյցարիա	65.062.000	»	»
5 Շվեդիա	65.000.000	»	»

6 Դանիա	57.043.327	»	»
7 Ֆինլանդիա	58.000.000	»	»
8 Բելգիա	20.415.625	»	»
9 Նորվեգիա	23.406.472	»	»
10 Ավստրիա	16.113.000	»	»

Առանձնապես հետաքրքիր էր, Խ. Ս. Հ. Միության սպառողական
կոոպերացիայի ըրջանառությունը. 1922 թ. հա հավասար է 400,000,000
ո. իսկ 1922—1924 տ. տ. բարձրացավ մեկ միլիարդ ուրբի գումարի:

Յեթե ի նկատի ունենանք, վոր ներկայումս խորհրդային ուրբ-
ով կարելի յեր ձեռք բերել յերկու անգամ պակաս ապրանք, քան
պատերազմից առաջ, նշանակում է՝ պետք է ընդունել, վոր խորհրդա-
յին սպառողական կոոպերացիայի ըրջանառությունն ավելի պակաս էր
անգլիական կոոպերացիայի ըրջանառությունից (մոտ 500-600 միլ.
վոսկ. ո.) բայց հա արագ կերպով հասնում է անգլիականին: Խորհր-
դային կոոպերացիայի մասին տրվում են տվյալներ՝ մյուսներից ա-
ռանձին, վորովհետև խորհրդային կոոպերացիան զարգանում է առանձ-
նահատուկ պայմաններում՝ քան բուրժուականը: Արևմտյան յեվրոպա-
կան կոոպերացիայի մասին բերված թվերը վերաբերում են 1922 թ.,
վորովհետև մեր ձեռքի տակ չկան հետևյալ տարիների մասին ստուգ-
ված տվյալներ: Խ. Ս. Հ. Միության կոոպերացիայի մասին բերված
թվական տվյալները վերաբերում են վերջին տարիներին: Խորհրդային
կոոպերացիայի մասին մանրամասն տես 8-րդ զրուցում:

Մի անգամի բարե-

կան գնումը

Անգլիական սպառ. ընկերություններն
անդամներին լիովին բավարարելու տեսա-
կետից ես կանգնած են կոոպերացիայի սուաջին շարքերում:
Այդ տեսակետից վերջին ժամանակներն Անգլիայից առաջ է
անցել Նորվեգիան:

Այսպես, որինակ, մի անգամի տարեկան միջին գնումը
կազմում է՝

1 Նորվեգիայում	216 ո.	5 Գերմանիայում	132 ո.
2 Անգլիայում	204 »	6 Բելգիայում	100 »
3 Դանիայում	200 »	7 Ավստրիայում	100 »
4 Շվեյցարիայում	177 »	7 Խ. Ս. Հ. Մ.	61 »

Փայագրամագուլուր Անգլիական սպառողական կոոպերացիան
ահագին զրամական ուժ ունի, անհամեմատ ավելի մյուս յերկիր-
ների կոոպերատիվներից¹⁾:

¹⁾ Այս գումարը կազմվում է բաժնեվճարներից, ոգուտի հատկա-
յություններից և ավանդներից:

1915 թ. անգլիական սպառողական ընկերություն մի անգամին հասնում եր 130 ու. մինչդեռ նույն ժամանակում Իտալիայում 20 ու. ավելի չեր, Գերմանիայում՝ 9 ու. Շվեյցարիայում 7 ու. Բելգիայում՝ 4 ու. 50 կ. Ս. Մ. Հ. Մ. 2 ու. 50 կոպ.:

Ո զ ու լ թ ք Նույն տարում՝ անգլիական սպ. ընկերություն մի անգամին ընկնում եր 42 ու. ոգուտ, մինչդեռ նույն ժամանակում դանիական սպ. ընկ. մի անգամին ընկնում եր միայն 13 ու. ոգուտ, շվեյցարական սպ. ընկ. անգամին՝ 12 ու. գերմանական՝ 11 ու. 50 կոպ., Բելգիայի՝ 11 ու.:

Սեփական արտադրություն Դրամական միջոցների առատությունը հնարավորություն տվեց անգլիական սպառողական կոոպերացիային ստեղծել, բացի առևտրից, անագին չափերով ապրանքների սեփական արտադրություն: Անգլիական կոոպերատորները յերազմում ելին ազատել սպառողին վոչ միայն առևտրական, այլև արդյունաբերական կապիտալի ճնշումից: Անգլիական սպառ. ընկերությունների միությունն ունի 150-ից ավելի սեփական արդյունաբերական ձեռնարկություն:

Այդ ձեռնարկություններից գլխավորներն ելին. 8 ալրադաց, 2 թխվածքի գործարան, 1 մարգարինի գործարան, 4 ապուխտի ու ճարպի գործարան, 10 մանվածային ձեռնարկություն, 19 հագուստի գործարան, 16 վոտնամանի, 1 ավտոմոբիլի գործարան և այլն:

Սպառողական կոոպերացիային պատկանող գործարանները, վերջին տարիներին, տալիս ելին մոտ 400 միլիոն մինչպատերազմյան ուղբու գումարի ապրանք: Սպ. ընկերությունների վաճառած ապրանքների մի յերրորդ մասը սեփական կոոպերատիվ արտադրությունիցն եր:

Անգլիական կոոպերացիայի արդյունաբերական ձեռնարկությունների ուժի մասին կարելի չե գաղափար կազմել հետևյալ փաստերից: Վոտնամանեղենի անգլիական կոոպերատիվ գործարանները տարեկան արտադրում են $3\frac{1}{2}$ միլիոն զույգ վոտնաման, չրադացները աղացել են 1916 թ. $2\frac{1}{2}$ միլիոն պարկալուր, այսինքն՝ Անգլիայում սպառվող ալյուրի քանակության

¹/₃-ը: Անգլիական սպառողաբերացիայի ազարակներում ցանվում ե 10.000 դ. ավելի ցորեն: Միությունն ունի թեյի սեփական պլանտացիաներ (հազար դեսյատին) Հնդկաստանում, Յեյլոնում և Աֆրիկայում:

Առանձին քննարկում Անգլիայի առանձին սպառողական ընկերությունների կազմակերպությունը ընկերություններն ունեն տասնյակ հազար անգամներ և խոշոր առևտրական շրջանառություն: Այսպես, որինակ, Լինդսի սպ. ընկերությունն ունի իր կազմի մեջ 50.000 անգամից ավելի: Վորովհետև Լինդս քաղաքն ունի ընդամենը 400.000 բնակիչ, նշանակում ե, յեթե հաշվելու լինենք անգամների ընտանիքներն ևս, այն ժամանակ ազգաբնակչության մեծամասնությունը կոոպերացված ե: Լինդսի ընկերությունն ունի 243 խանութ և պահեստ, վորից՝ 95 կոտնալնապարեղենի խանութ, 76 մսի, 25 մանուֆակտուրայի, 19 վոտնամանեղենի, 7 պատրաստի հագուստեղենի, 15 ածուխի պահեստներ, 5 ձկնեղենի և բանջարեղենի խանութ: Քաղաքի բոլոր մասերում ընկերության խանութներ կան: Տարեկան վաճառվում ե 15 միլիոն ու. ապրանք:

Սանութները կահավորված են տեխնիկայի վերջին խոսքով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊԵՌՈՒՆՔ

1. Հաշվեցեք՝ քանի անգամ ունի տեղական սպ. ընկերությունը:

2. Շրջանի ազգաբնակչության վոք մասն անգամ ե սպառողական ընկերություններին:

3. Ինչ գումարի ապրանք ե վաճառում ընկերությունը մի տարվա ընթացքում:

4. Վոքքան ե գնել զանազան ապրանք մի անգամը, միջին հաշվով, մի տարվա ընթացքում:

5. Վոքքան բաժնեվճար ե մուծել անգամն ընկերության մեջ՝ միջին հաշվով:

6. Վոքքան ե յեղել ոգուտը և լինչպես ե բաշխվել:

7. Տեղական ընկերությունն ունի՞ սեփական արտադրություն:

8. Համեմատեցեք բոլոր ստացած տվյալներն անգլիական և ուրիշ յերկիրների կոոպերացիայի միջին թվերի հետ:

«Կոոպերացիայի սեփական» Այդպիսով, անգլիական սպառողական ռեսուրսները կոոպերացիան ամենահարուստ և ամենազարգացած կոոպերացիան է վողջ աշխարհում:

Հարց է առաջ գալիս. ի՞նչ տվեց բանվոր դասակարգին, աշխարհիս ամենաուժեղ կոոպերացիան: Նրան վճարեց հաջողվեց ազատել բանվորին կապիտալիզմի ճնշումից:

Առաջին հայացքից մեզ թվում է, իբր թե, Անգլիայում բանվոր սպառողը լիովին բավարարվում է կոոպերացիայով և նա ազատված է վոյ միայն մասնավոր առևտրական կապիտալի ճնշումից, այլև շնորհիվ իր կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկությունների, սկսում է ազատվել նաև արդյունաբերական կապիտալի ճնշումից: Յեվ գծվար չի այստեղից յեղրակացնել, վոր, ընդհանրապես, բանվոր դասակարգին կապիտալի տիրապետությունից ազատելու համար՝ բավական է միայն կոոպերացիայի խաղաղ զարգացումը:

Իսկ վրամանք ավելի յեն առաջ գնում և մտածում են այսպես. — «բոլոր մարդիկ հանգիստանում են այս կամ այն միջերի սպառող և նրանք շատ թե քիչ չափով տառապում են մասնավոր առևտրի թերություններից: Ընդհանուր սպառողական շահը համախմբում է սպառողական ընկերությունների շուրջը բոլոր մարդկանց՝ առանց տարբեր դասակարգերի, կուսակցությունների, կրոնների խտրության: Բավական է բարձրացնել ազգաբնակչության գիտակցությունը, նրան ապացուցանել կոոպերացիայի ոգուտը, բոլոր մարդիկ ինքնաբերաբար կանգամադրվեն ընկերություններին: Հետո, յեթե կարելի լինի, սպառողական ընկերությունների ոգուտներն անմիջապես անդամներին հանձնել, այլ կուտակել վորպես հատուկ դրամագլուխներ, այն ժամանակ, այդ դրամագլուխների ոգնությունը, կարելի կլինի վրտարել ասպարեզից վոյ միայն ամբողջ մասնավոր առևտուրը, այլև, աստիճանաբար, ձեռք բերել բոլոր գործարանները: Կոոպերացիան առևտուրը և արդյունագործությունը տիրելուց հետո՝ կտիրի նաև հողին»:

Այսպիսով, կոոպերացիան խաղաղ ճանապարհով, իր տնտեսություն զարգացման ուղիով, իր դրամագլուխների աճման միջոցով և իր անդամների գիտակցության բարձրացմամբ՝ իր ձեռքը կառնի ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Կյանքի վողջ կառուցվածքը կոոպերատիվային է դառնալու:

Այդպիսի աշխարհահայացք ունեցող մարդկանց «Կոոպերատիվիստները» են անվանում¹⁾:

Սպառողական կոոպերացիայի դասատաժանում իրականություն ձիշտ է, վոր կարգային բնույթը կոոպերացիայում միացվում են հասարակության բոլոր դասակարգերի շահերը:

Իհարկե, բոլոր դասակարգերի բոլոր մարդիկ սպառողներ են, բայց հարցը նրանում է, վոր սպառման չափը յեվ նյութը զանազան դատակարգերի համար տարբեր են:

Մինչդեռ վորևե հարուստ սնվում է ախպիսի հազվագյուտ կերակուրներով, վոր կարող է ստեղծել հնարագետ խոհարարը, ուսս գյուղացու ուտելիքը հացն է, կվասը, սելյուկան և նման բաներ:

Մինչդեռ հարուստի մի ճաշով կարելի յե կերակրել տասնյակ քաղցածներ, գյուղացին շարունակում է «ճաթ կոծել»:

Հարուստ մարդու բյուջեյում անձնական սպառման համար արված ծախսերն աննշան մասն են կազմում, իսկ չքավոր գյուղացու բյուջեյում—այդ ծախսերը կազմում են նրա աչքի ընկնող մասը: Չքավորն ամեն ոք իր ուտելիքի մասին է մտածում, իսկ հարուստի համար՝ այդ ամենահետին հոգսըն է:

Գործարանատերի, կալվածատերի, նույնիսկ գյուղացի-կուլակի ամբողջ ուշադրությունը կլանվում է իր արտադրությունը, իր տնտեսության զարգացմամբ. նրա համար անձնական սպառման հարցը յերկրորդական տեղ է բռնում: Բանվորի ու գյուղացու համար սպառման հարցերը նույն նշանակություն ունեն, ինչ վոր աշխատավարձի խնդիրը:

¹⁾ Այդպիսի հայացքներ են քարոզում Ֆրանսական հայտնի պրոֆեսոր Շ. Ժիլը և ուրիշ մանր բուրժուական կոոպերատորներ:

Նշանակում է, սպառողական կոոպերացիայով, վորը բարելավում է անձնական սպառումը, շահագրգռված են, գլխավորապես բանվորը, չքավոր գյուղացին և միջակը (վերջինս ախրան, վորքան նա սպառման միջերջները ձեռք է բերում շուկայից):

Կալվածատերը, գործարանատերը և կուլակը կոոպերացիայով այնքան էլ չեն շահագրգռված, ընդհակառակն, ավելի շուտ շահագրգռված են նրանք կոոպերացիայի կործանումով: Որինակ, գործարանատերը, վոր ձգտում է իր արտադրանքները բարձր գներով վաճառելու, կամ կալվածատերը, վոր պահպանում է հացի թանգ գներ — թշնամի յեն կոոպերատիվներին, վորոնք կազմակերպում են սպառողներին՝ պայքարելու հոգուտ միջերջների արժանացման:

Նշանակում է, սպառողական ընկերությունները դասակարգային բնույթ ունեն, վորովհետև նրանք գլխավորապես ծառայում են սոցիալատավոր դասակարգերի և վոչ թե հասարակության մյուս դասակարգերի շահերին: Իսկապես, սպառողական ընկերություններն առավելապես տարածված են այն յերկիրներում, վորտեղ կա բազմամարդ և ուժեղ բանվոր դասակարգ, կամ վորտեղ գյուղացուության մեջ շատ են միջակներն ու չքավորները:

Յեթե վերցնենք մեր բերած որինակը — անգլիական սպառողկոոպերացիայի մասին, կտեսնենք, վոր բանվորական սպառողականների հետ միասին գոյություն ունեն նաև չինովնիկների սպառողական ընկերություններ, վորոնք ունեն ապրանքների հատուկ տեսակավորում, առանձին շահեր և այլն: Տասնյակ տարիների ընթացքում չինովնիկական սպառ. ընկերությունները չեն ունեցել և չեն կամեցել ունենալ բանվորական կոոպերատիվների հետ վոչ մի կապ, վոչ մի առնչություն: Ճիշտ է, չինովնիկական ընկերությունները միացնում են 100.000-ից վոչ ավելի անդամներ, բայց և այնպես, փաստն այն է, վոր հին սպառողկոոպերացիայում գոյություն չունի մինչև որս լիակատար միություն, վոր մի անգամ ևս ապացուցանում է կոոպերացիայի դասակարգային բնույթը:

Սպառողական կոոպերացիան ասենք: Յերբ Անգլիայում դեռ պերացիան չեղ գագոյություն չուներ բանվորական կուսակա-
սակարգային պայ-
քարը
դական կոոպերացիայի քաղաքական չեզո-

քությունը հայտարարել են, բայց վորքան ավելի յեր սրվում դասակարգային պայքարը, սպառողկոոպերացիան իրականում պետք է միանար պայքարող կողմերից մեկին: Որինակ, բանվորական սպառողական ինչպես կարող էր հրաժարվել գործադուլի կամ գործարանների փակման ժամանակ իր անդամներին ոգնելուց (վարկով, փոխառությունամբ և այլն): Բանկոոպն ինչպես կարող էր չաջակցել այն կուսակցությունը, վորը պայքարում էր նրա անդամների քաղաքական իրավունքների համար:

Յեղ իսկապես, պատմությունը մեզ ցույց է տալիս, վոր սպառողական ընկերությունները, նայած իրենց անդամների կազմին, անցնում էյին այս կամ այն կուսակցության կողմը և պաշտպանում նրան: Այսպես, որինակ, վերջերս Իտալիայում, Փաշիստների հաղթությունից հետո, մի շարք բանվորական սոցիալիստական կոոպերատիվներ ավերվեցին, և նրանց տեղ հիմնվեցին Փաշիստական կոոպերատիվներ: Բելգիայում գոյություն ունեն կաթուղիական սպառողական ընկերություններ, վորոնք հենվելով ունևոր գյուղացուության վրա՝ առանձնացած են սոցիալիստական սպառողական ընկերություններից: Մենք վերևում տեսանք, թե ինչպես «ստորադաս» սպառողական ընկերությունները, գործարանատերերի հրամանով, իրենց գործունեությունը բանվորների շահերին հակառակ էյին տանում: Վերջերս Անգլիայում, սպառողական ընկերությունները մասնակցում են քաղաքական պայքարին և նույնիսկ առաջ են քաշում իրենց թեկնածուները պարլամենտի համար: Գերմանիայում, նույնպես և ուրիշ յերկիրներում բանվորական սպառողականները խզել են իրենց կապը մենշեիկական կուսակցության հետ և կանգնել են կոմունիստների դրոշակի տակ:

Նշանակում է՝ սպառողկոոպերացիան չի յեղել և չի կարող լինել քաղաքական պայքարում չեզոք (վոչ մասնակցող): Նա-

յաժ իր անդամների կազմին՝ նա անցնում է կովող կուսակցության թյուններից վորեն մեկի կողմը: Դատակարգային կոնվը տեղի յե ունենում կոոպերացիայի ներսում:

Անգլիական սպառ- Բայց, մի գուցե, սպառնալուքներից կոոպերացիայի կա- միանգամայն ավելորդ է վատնում իր ու- պիսալիսական աշ- ժերը դատակարգային պայքարում: Մի լանգակուրյունները գուցե, նա իզուր է շեղվում տնտեսական աշխատանքից: Մի գուցե, կոոպերացիայի տնտեսական նվա- ճումներն, առանց քաղաքական կռիվ յեւ կարող են կործանել կապիտալիզմի ամբողջը:

Հենց, որինակի համար, վերցնենք անգլիական կոոպերա- ցիան: Նա վաճառում է ապրանքներ իր անդամներին շուկայի գներից բարձր, բայց դրա փոխարեն պարգևատրում է իր գնորդ-անդամներին՝ խոշոր զեղչերով (պրեմիա): Այդ հատկա- ցումները, մնալով ընկերությունների տրամադրության տակ, ոգտագործվում են սեփական գործարանների կառուցման հա- մար: Միթե այդ բոլոր նվաճումները բավականին չեն թեթե- վացնում բանվոր-սպառողների դրությունը:

Այո, թեթևացնում են: Բայց բանն այն է, վոր բոլոր բանվորները, անգլիացու նման չեն կարող ապրանքին շուկա- յից բարձր գներ վճարել և սպասել մինչև տարվա վերջը, վոր- պեսզի ոգուտից զեղչ ստանան և այն ել՝ ընկերության շրջա- նառության մեջ թողնելու պայմանով: Այդպես կարող է վար- վել միայն համեմատաբար ապահովված բանվորը: Սովորաբար, սպառողական կոոպերացիայի շրջանառությունները սահմանա- փակվում են նրա անդամների չափազանց սուղ աշխատավար- ձի չափերով: Անգլիական պրոլետարիատի մի մասի համեմա- տական բարեկեցությունը նրանից է առաջ գալիս, վոր ան- գլիական կապիտալիստները, գաղութների հետամնաց տեղա- կան ազգաբնակչությունից հսկայական շահեր (գերոգուտ) ստանալով հնարավոր են համարում վորոշ չափով բարձրացնել բանվորական մասսայի բարձր շերտերի աշխատավարձը: Այդ համեմատաբար ապահով բանվորական խավերի ոգնությունը՝ կապիտալիստները վորոշ չափով զսպում են բանվորական մյուս մասսային:

Յեւ անա բանվորների ավելի ապահովված մասը տիրում Ե կոոպերացիային, յեւ սպառումն եժանացնող այդ կազմակեր- պությունը՝ խնայողություններ կուտակող կազմակերպության է վերածում:

755 միլիոն սեփական գրամագլխից, վոր ունեն իրենց տրամադրության տակ անգլիական սպ. ընկերությունները, մոտ 740 միլիոնը «ցաֆանշի» ավանդներ են համարվում և միայն 15 միլիոնը՝ վորպես փայադրամագլուխ:

Նշանակում է՝ ոգուտներից կազմվող գրամագլխի կախու- մը՝ չազատեց կոոպերացիան մասնավոր անձանց կախումից, այլ ընդհակառակն, կախման մեջ դրեց նրան մի շարք մանր սեփականատերերից, վորոնք իշխում են մյուս սպառողների վրա:

Յեւ իսկապես, մենք գիտենք, վոր ի շեղումն «Ռոչդեյան կանոնների», անգլիական սպ. ընկ. վարչություն մեջ կարող է ընտրվել միայն նա, ով վոր ընկերության մեջ առնվազն 20 փայեր—ավանդներ ունի:

Այդ բանից հետո զարմանալի չէ, վոր անգլիական սպա- ռողական ընկերությունները շեղվեցին իրենց ուղիից և մաս- նակեցեցին գաղութների կապիտալիստական շահագործմանը:

Այսպես, մոտիկ ժամանակներում, կոոպերատիվները բա- ժին ձեռք բերին Հնդկաստանի յերկաթուղիների ընկերության մեջ: Կոոպերացիայի Յեյունում գտնված թեյի սեփական պլան- տացիաներում ոգտագործվում է մեծ չափով տեղական ազգա- բնակչության աժան աշխատանքը, վորոնց թվում նաև կա- նանց, յերեխաների և այլն¹⁾:

Զնայած իր ամբողջ հզորության՝ անգլիական սպառնո- պերացիան համեմատաբար փոքր նշանակություն ունի յերկրի առևտրական շրջանառությունների մեջ: Ըստ զլխավոր ապ- բանքների՝ ամբողջ մանրածախսի միայն $\frac{1}{10}$ մասն է կատար- վում կոոպերացիայի միջոցով: Բացի դրանից, կոոպերացիան համարյա չի մասնակցում Անգլիայի արտաքին առևտրին:

¹⁾ Պետք է ասել, վոր անգլիական գաղութների 400 միլիոն ազ- գաբնակչության մեջ կոոպերացիան դեռևս թույլ է զարգացած:

Մինչդեռ, գաղութների և ոտար լերկիրների հետ կատարած առևտուրն առգլիական բուրժուազիայի յեկամտի գլխավոր աղբյուրներն են կազմում: 1920 թ. ներմուծված են Անգլիա 6,750,000,000 ռ. ապրանք, իսկ արտահանվել են՝ 3 միլիարդ 590 միլիոն ռուբլու:

ա) Հենց միայն ներմուծման շրջանառությունը 7 անգամ շատ է անգլիական բոլոր սպառողական ընկերությունների տարեկան շրջանառությունից¹⁾:

բ) Կոոպերատիվ արդյունաբերությունը թղուկ է՝ մասնավոր արդյունաբերության հանդեպ:

1920 թ. 3 ամսվա ընթացքում անգլիական մասնավոր արդյունաբերությունը 4 անգամ ավելի ոգուտ է կուտակել, քան սպառողական կոոպերացիան կարողացել է կուտակել՝ 70 տարվա ընթացքում:

«Կոոպերատիվիստները» ուսմունքը խաղաղ հաղթական լերթի մասին, ինչպես կյանքը ցույց տվեց հենց նույն Անգլիայում, սխալ արդյունք ունեցավ: Կոոպերացիան խաղաղ ճանապարհով կապիտալին չի կարող հաղթել: Ընդհակառակը, կոոպերացիան իր «խաղաղ զարգացման» ժամանակ կապիտալի ազդեցության տակ է ընկնում:

Այս բոլորից հետո պարզ է մեզ համար, թե ինչու ընկերներն մինչհեղափոխական կոոպերատիվները «կոլլեկտիվ կապիտալիստական հիմնարկությունների» մի առանձին տեսակն են համարում:

Սպառողական բնկե- վերոհիշյալ հանգամանքը միթե նշա-
րուքյան ճշգրտակու- նակում է, վոր կապիտալիզմի շրջանում
բյուրե պրոլետարիա- կոոպերատիվները վոչ մի նշանակություն
եի հեղափոխական չունեն բանվոր դասակարգի համար: Կոո-
պալարի համար պերատիվները, նամանավանդ սպառողա-
կան կոոպերատիվները, վորոնք ավելի հարազատ են բանվոր-

¹⁾ Ուրիշ յերկիրներում կոոպերացիայի բաժինն ընդհանուր առևտրական շրջանառության մեջ ավելի պակաս է:

Գերմանիայում—5% ($\frac{1}{20}$), Բելգիայում—3,6% և այլն (1913 թվի տվյալներով):

ներին, սովորեցնում են պրոլետարիատին՝ վարել ընդհանուր տնտեսությունը, թուլացնում են վորոշ չափով առևտրական կապիտալի ճնշումը և բարելավում են կոոպերատոր աշխատակիցների դրությունը: Կոոպերատիվները, ի հաշիվ ստանալիք խնայողությունների (ոգուտների), հնարավորություն են տալիս բանվորներին աշակցելու իրենց քաղաքական կուսակցությունը, վոր միայն կարող է կործանել կապիտալիստական հասարակարգի հիմքերը (յեթե կուսակցությունը, իսկապես, հեղափոխական պայքար է մղում):

Յեթե կոոպերատիվները հանդիսանում են ոժանդակող զենք աշխատավորների ազատագրության պայքարում, յերբ նրանք ամբողջովին ծառայում են այդ պայքարի նպատակներին ու խնդիրներին՝ վորոշ ժամանակ նույնիսկ զրկանքներ ու կորուստներ կրելով, այդ դեպքում կոոպերատիվներն իսկապես հանդիսանում են բանվորների յեվ չքավոր գյուղացիների համար կապիտալիստական զարգերում հարկավոր յեվ նույնիսկ անհրաժեշտ կազմակերպություններ:

Իսկ, յեթե կոոպերատիվները շեղվում են այդ նպատակներից, սկսում են անկախորեն գործել՝ կարծելով, վոր այդպիսով նրանք վոչնչացնելու յեն կապիտալը, այդ դեպքում նրանք խաբում են և՛ իրենց, և՛ բանվորական մասսաներին՝ շեղելով նրանց իսկական հեղափոխական պայքարից: Այդպիսի կոոպերատիվները, վերջ ի վերջո, վերածվում են կիսա-կապիտալիստական կազմակերպությունների:

Սպառողական կոոպերացիան և, ընդհանրապես, կոոպերացիան բոլորովին տարբեր նշանակություն ձեռք է բերելու սոցիալական հեղափոխությունից հետո, յերբ բանվորների և գյուղացիների տրամադրության տակ անցնելու յեն արդյունաբերությունը, հողը և արդյունաբերության բոլոր հիմնական գործիքները և միջոցները: Այդ հարցը մանրամասնորեն կըննվի հետևյալ պարագամունքի ընթացքում:

ԳՈՐԾՆԱԿՍՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1. Մանրամասն վերլուծեցեք «կոոպերատիվիստների»



սպառնառաքանությունները և սրանց դեմ յեղած առարկությունները:

2. Վերլուծման ժամանակ տեղական սպառկոողերացիայի կյանքից այնպիսի փոստեր բերեք (Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և հետո), վորոնք ապացուցանեն կոողերացիայի կախուժը մասնավոր կապիտալից կամ, ընդհակառակը, նրա հաղթանակը մասնավոր կապիտալի հանդեպ:

ԶՐՈՒՅՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային սպառողական կողերացիան 80 տարվա ընթացքում, Ռոչդեյլյան ընկերության հիմնվելու ուրից սկսած, հետևյալ նվաճումներին է հասել.

Ամբողջ աշխարհում հաշված են 50,000-ից ավելի սպառկող, վորոնք միացնում են իրենց հետ մոտ 25 միլիոն անդամ, վորոնք ընտանիքների անդամների հետ միասին հավասար են 125 միլիոն մարդու, կամ յերկրագնդի վողջ ազգաբնակչության $\frac{1}{5}$ (20%) մասին: 1922 թ. բոլոր սպառողական ընկերությունները վաճառել են 3 սիլիարդ վոսկի ռուբլու գումարից ավելի ապրանքներ:

Սպառկողերացիան առավելապես զարգացած է Արևմտյան Յեվրոպայում (22,000 սպառկողից ավելի, 14 միլիոն անդամով և 2 միլիարդ շրջանառությամբ): Կողերացիայի զարգացման տեսակետից բոլոր յերկիրների մեջ առաջնակարգ տեղն է բռնում Անգլիան (1.331 սպառկող, $4\frac{1}{2}$ միլիոն անդամ. ազգաբնակչության $\frac{4}{10}$ (40%) մասը կողերացված է. շրջանառությունը 1 միլիարդ ռուբլուց ավելի է. սեփական արդյունաբերություն՝ 150 ձեռնարկություններով, վորոնց արտադրողականությունը հասնում է 400 միլիոն վոսկի ռուբլու):

Սպառկողերացիայի հաղողություններն Արևմտյան Յեվրոպայում ստեղծել են մի առանձին ուսմունք այն հնարավորության մասին, վոր կողերացիայի միջոցով, խաղաղ ճանապարհով, կարելի է հաղթել կապիտալիզմը: Այդ ուսմունքի կողմնակիցներն ապացուցում են («կողերատիվիստներ»), վոր բոլոր դասակարգերը մի ընդհանուր սպառողական շահ ունեն,

«կողերատիվիստների» կարծիքով, յեթե սպառկողերացիան, քաղաքական ու կրոնական չեզոքություն պահպանելով, կարողանա համախմբել իր շուրջն ազգաբնակչության մեծամասնությունը և կուտակել իր մեջ սուտորից ստացվելիք ոգուտները, նա այդ գումարներով ձեռք կբերի աստիճանաբար բոլոր գործարանները և գավոզները, իսկ ապա՝ նաև ամբողջ հողը: Այդպիսով աշխարհում հաստատվելու է «կողերատիվ» հասարակարգ: Այստեղից ել բղխում է «կողերատիվիստների» գործողությունների գործնական ծրագիրը, հատուկ ուշադրություն դարձնել սպառկողերացիային, վորպես ապադասակարգային կազմակերպության, պահպանել սպառկողերացիայի քաղաքական ու կրոնական չեզոքությունը, ուժեղացնել գուտկողերատիվ պրոպագանդան հասարակության բոլոր խավերում, առևտրից ստանալիք ոգուտներից կուտակումներ անել հասարակական անբաժանելի դրամագուլիսների համար, սպառկողերատիվներին կից կազմակերպել արդյունաբերական ձեռնարկություններ:

«Կողերատիվիստների» ուսմունքի մանրամասն վերլուծման ժամանակ յերևում է, վոր այդ ուսմունքը զրված է սխալ հիմքերի վրա և կյանքին անհամապատասխան է:

Սպառկողերացիան, առավելապես պրոլետարիատի և կիտապրոլետարիատի շահերին ծառայելով, հանդիսանում է դատակարգային կազմակերպություն, վորի հետ կալվածատերերը և խոշոր բուրժուազիան, իրենց եյությամբ, ընդհանուր կապ չեն ունեցել և չունեն: Կողերացիան չեզոք չի մնում քաղաքական պայքարում: Կողերացիան համաձայն իր դասակարգային կազմին (պրոլետարիատի կամ մանր բուրժուազիայի գերազանցությունը) անցնում է այս կամ այն պայքարողի կողմը: Սպառկողների շրջանառությունները սահմանափակվում են բանվոր-սպառողների աշխատավարձով և մանր սեփականատերերի յեկամուտներով: Հետևապես, խոսք չի կարող լինել ոգուտների այնպիսի կուտակման մասին, վորով կարելի լինի ստեղծել ավելի ուժեղ կողերատիվ արդյունաբերություն քան մասնավոր արդյունաբերությունն է: Անգլիական սպառ-

կոոպերացիայի խոշոր միջոցները («կոոպերատիվիստ»-ներին համար ծառայած որինակներին մեկը) կուտակվել են այն պատճառով, վոր անգլիական բանվորական դասակարգի ամենաապահով մասն իր խնայողությունը հանձնել է կոոպերատիվներին: Անգլիական բանվորների մի մասի համեմատական ապահովությունն ստեղծվել է ի հաշիվ գաղութների և տեղական ազգաբնակչության վրա կատարած թալանի, վոր արել է անգլիական կապիտալը՝ բաժին հանելով իր ոգուտներին մի մասը բանվորական մասսայի բարձր խավերին: Կոոպերացիայի 80-ամյա գոյությունը ընթացքում Անգլիայում մասնավոր առևտուրը և արդյունաբերությունը պահպանել են իրենց ամբողջ ուժն ու հզորությունը: Ընդհակառակը, սպառողական կոոպերատիվներն ընկնում են կապիտալի ազդեցություն տակ և վերածվում են մանր բուրժուազիայի կողմից կառավարվող կապիտալիստական կազմակերպությունների:

Զուտ բանվորական կազմ ունեցող սպառողական ընկերություններն այն նշանակություն ունեն, կապիտալիզմի տիրապետության ժամանակ, վոր պրոլետարիատին սովորեցնում են ղեկավարել ընդհանուր անտեսությունը, վորոշ չափով թուլացնում են առևտրական կապիտալիզմի ճնշումը, բարելավում են իրենց աշխատակիցներ դրությունը և բանվորական կազմակերպություններին տալիս են (կուսակցության և արհմիություններին) նյութական միջոցներ այն նպատակով, վոր կապիտալի դեմ հեղափոխական վճռական պայքար մղվի:

Սպառողական կոոպերատիվները դրական նշանակություն կունենան միայն այն դեպքում, յեթե նրանք իրենց նեղ խնդիրներով չեն շեղի բանվոր դասակարգին ուղիղ հեղափոխական պայքարից, չեն կատարի բոլորովին անջատ աշխատանք, վորը կազմավորված է բանվորական շարժումը, այլ կհետևեն կապիտալի դեմ մղվող հեղափոխական կռվի նպատակներին ու խնդիրներին և այն կուսակցության, վոր ղեկավարում է այդ կռիվը:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Քանի՞ սպառողական կոոպերատիվ կա յերկրագնդի վրա:

2. Այդ սպառողականները քանի՞ անգամ ունեն:

3. Համաշխարհային սպառողականության 1922 թ. վերջին տարանք է վաճառել:

4. Ինչո՞ւ Անգլիայում շատ ուժեղ է սպառողականությունը:

5. Բերե՞ք անգլիական սպառողականության մասին թվական տվյալներ — սպառողական քանակի, դրամագույունների, շրջանառությունների, ձեռնարկների և ուրիշ փաստերի վերաբերմամբ:

6. Ինչո՞ւ սպառողականները դասակարգային կազմակերպություն են համարվում:

7. Ինչո՞ւ անգլիական կոոպերատիվն մանր-բուրժուական բնույթ է կրում:

8. Ինչո՞ւ վորոշ կոոպերատիվներ հնարավոր են համարում տապալել կապիտալիզմը խաղաղ ճանապարհով — կոոպերացիայի միջոցով:

9. Ինչո՞ւ անգլիական կոոպերացիան անկարող չեղավ մաքառել կապիտալիզմի դեմ՝ խաղաղ ճանապարհով:

10. Ի՞նչ պայմաններում սպառողականության կարող է կապիտալիզմից ազատվելու գործում ոգնել բանվորներին և գյուղացիներին:

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Ա.

ԱՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԽՍՆՄ ՄԵՁ

Յուրիզային կոոպերացիայի ուսումնասիրման կարեւորությունը

Բոլոր յերկիրներին սպառողական կոոպերացիան աշխատում է կապիտալիստական անտեսության պայմաններում — հողի, գործարանների ու զավոդների մասնավոր սեփականության գոյության և անաշխատ դասակարգերի տիրապետության ժամանակ:

Մինչդեռ, խորհրդային կոոպերացիան աշխատում է հողի, գործարանների ու զավոդների մասնավոր սեփականության բացակայության և բանվորների ու գյուղացիների տիրապետության ժամանակ: Այդպիսով, խորհրդային

կողպերացիան ունի մի շարք առանձնահատկություններ և ուսումնասիրվելու համար առանձին հետաքրքրություն: Բայց նախքան ժամանակակից սպառնալիքների մասին խոսելը, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել նրա անցյալի մասին՝ համեմատելով այդ՝ նրա ներկա դրություն հետ:

Սպառնալիքներից Սպառնալիքներից հեղափոխությունից զարգացումը միջառաջ Ռուսաստանում ունեցել է հետևյալ փոփոխությունը թվական աճումը.

Տարիներ	Ընկերությունների թիվը	Տարիներ	Ընկերությունների թիվը
1865	1	1898	419
1873	9	1903	875
1878	15	1908	2.675
1883	36	1913	10.080
1888	68	1918	25.000
1893	169	1919	47.000

Մինչև 1892—3 թվականները սպառնալիքային ընկերությունները շատ դանդաղ ելին զարգանում: Այդ ընկերությունները մեծ մասամբ կազմակերպվում էին պատահաբար պետական պաշտոնյաների, սպաների, բժիշկների, փաստաբանների և գանազան գրադավունների տեղ ինտելիգենտների (մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ) շրջանում: Ավելի ուշ կազմակերպվեցին այսպես կոչվող «ստորնդաս» բանվորական ընկերություններ, վորոնց մասին արդեն խոսել ենք նախորդ գրությունների մեջ:

Բանվորական լիակ 90-ական թվականներից սկսած, Ռուսաստանում գործարանների ու գավոզների ու ժողովրդական կենտրոնների, իսկ դրան գույժը ընթաց՝ ավելանում է արդյունաբերական բանվորների թիվը: Գյուղացության մեջ, 1891—92 թ. թ. սովորից հետո, խիստ շերտավորում է նկատվում, գյուղացիների

մի մասն սկսում է հարստանալ ի հաշիվ առավելագույն քայքայվող խավերի:

Այս յերևույթի իբրև անմիջական հետևանք լինում է այն, վոր բանվորներն ու գյուղացիները (չբանվորները, մասամբ ել միջակները) ձեռնարկում են կազմակերպել իրենց սպառողական ընկերությունները, վորպեսզի վերջիններս միջոցով կարողանան գտնել մասամբ թուլացնել մասնավոր առևտրականների թալանը: Ավելի շատ կազմակերպվեցին ու տարածվեցին գյուղական սպառողական ընկերությունները, չնայած, վոր ցարական կառավարությունն ամեն կերպ խանգարում էր նոր սպառողական ընկերությունների բացումը: Այդ մասին յեղած միջնորդությունները և դիմումները մնում էին նահանգապետների մոտ՝ առանց ընթացք ստանալու և անհետևանք: Հիմնադիրների մասին հատուկ հետախուզություններ ու հարցաքննություններ ելին տեղի ունենում: Յեվ ամենանշան կասկածանքի, «կրամոլ»-ի համար՝ փակում էին կազմակերպությունն՝ առանց դատի և քննության: Սպառողական ընկերություններին բոլորովին արգելվում էր կազմակերպել իրենց միությունները: Նիժեգորոդի խորհրդ- Միայն 1898 թ., Նիժեգորոդի տոնագավոցությունը վաճառում գումարված սպառողական ընկերությունների առաջին խորհրդակցությունից հետո, հնարավոր չեղավ ձեռք բերել սպառողական ընկերության «նորմալ» կանոնադրության¹⁾ գործադրման իրավունքը, վորն ավելի հեշտացրեց ընկերության բացման համար թույլտվություն ստանալը, քանի վոր կառավարությունն այդ կանոնադրությունից հատուկ խնամքով դուրս էր ձգել այն ամենը, ինչ վոր հիշեցնում էր «կրամոլ» ասած բանը:

Այդ նույն խորհրդակցությունը վորոշեց կազմակերպել սպառողական ընկերությունների առաջին միությունը, վոր գործի անցավ 1899 թ.:

¹⁾ «Նորմալ» կոչվում է այն կանոնադրությունը, վորի բոլոր կետերն ընդունելի չեն բոլորի համար բացառությամբ չլրացրած կետերի:

Համառուսական ա- 1905 թ. հետո, յերբ հեղափոխութիւնն
ռաջիճ կոոպերատիվ ըստ յերևութիւն, պարտւել եր, այն ինչ՝
համագումարը ցարական կառավարութեան ուժերը բավա-
կանին ջլատվել ելին, կոոպերացիան հնարավորութիւն ունե-
ցավ գումարել իր անդրանիկ համառուսական կոոպերատիվ հա-
մագումարը (Մոսկվա 1908 թ.) և մտածել իր դրութեան մա-
սին: Այս համագումարում ընդունվեց այն հանգամանքը, վոր
սպառողական ընկերութիւններն առավել հաշոգութեան հաս-
նելու յեն այն դեպքում, յերբ կիրառեն «Ռոչդելյան կանոն-
ները» կյանքում: Համագումարն այդպես ել վորոշեց:

Բանվորական «ան- Ռուս-յապոնական պատերազմից հետո՝
կախ» սպառողական կապիտալիստների ձեռքում արժեքների
ընկերութիւնների կուտակումը դարձավ մեր արդյունաբե-
գարգացումը ռութեան զարգացման ու ծավալման հա-
մար մի նոր խթան: Հեղափոխութեան հետևանքով ավելացավ
բանվորների թիվը, բարձրացավ աշխատավարձը և ընդլայնա-
ցավ նրանց գիտակցութիւնն ու կազմակերպչական մակար-
դակը: Ընդհանրապես, այդ մոմենտին նկատվում է բանվորա-
կան «անկախ» սպառողական ընկերութիւնների յերևան գալը
և աճումը («Хамовническое», «Солидарность» Մոսկվայում,
սպառողական ընկերութիւն «на Московском Шоссе» կոչ-
վողը Պետերբուրգում և ուրիշները):

Միևնույն ժամանակ շարունակում է զարգանալ և աճել
գյուղական սպառողակերացիան: Առաջ են գալիս սպառողակո-
ոպեր նմանապես ազգային փոքրամասնութիւնների շրջանում՝
Ուկրաինայում, Թուրքեստանում, Կովկասում և այլ վայրերում:
Համառուսական յերկ- Համառուսական յերկրորդ կոոպերատիվ
րորդ կոոպերատիվ համագումարում (1913 թ. Կիյեվում) գըր-
համագումարը վում և վորոշվում են մի շարք կազմա-
կերպչական ու տնտեսական բարդ խնդիրներ, կոոպերատիվ չի-
նարարութեան, կոոպերատիվ որենքի անհրաժեշտութեան, ար-
բեցողութեան դեմ կազմակերպվելիք պայքարի և այլի այլ
խնդիրների մասին:

Համաշխարհային պատերազմը (1914 թ.), իր հետ բերելով

կենսամթերքների պակասութիւն և սրանց արժեքների բարձրա-
ցում, ստիպեց ազգաբնակչութեան լայն խավերին համախմբվել
կոոպերացիայի շուրջը: Կոոպերացման այդ ձգտումն առանձ-
նապես ուժեղացավ այն ժամանակ, յերբ սպառողական կոոպե-
րատիվներին հաշոգվեց ձեռք բերել մի շարք արտոնութիւն-
ներ ու առավելութիւններ՝ կենսական առաջնակարգ ապրանք-
ների հաշթայթման ու բաշխման ասպարիզում:

Սպառողակոոպների յեվ Սպառողակոոպերացիայի իսկական պատկե-
նրանց անգամների յրբ հեղափոխութիւնից առաջ և պատերազ-
թիվը պատերազմից մի հետևանքով առաջացած փոփոխութիւն-
ու հեղափոխութեան յերբ առաջ ներք բերում
հետևյալ թվերը.

Տ ա ր ի ն ե ր	Սպառող- կերի թիվը	Անդամների թ ի վ ը
1/1 1914 թ.	10.080	1.500.000
1/1 1918 »	25.000 (1)	9.000.000

Ինչպես տեսնում ենք, այդ ժամանակամիջոցում սպառող-
կոպերի թիվն աճում է $2\frac{1}{2}$ անգամ, իսկ անդամների թիվը՝ վեց
անգամ: Յեթե յուրաքանչյուր անգամի ընտանիքի անդամների
թիվը հաշվելու լինենք 4—5 հոգի, այդ դեպքում սպառողակոոպե-
րի շուրջը համախմբված եր 1918 թ. 40 միլիոն կոոպերացած
ազգաբնակչութիւն կամ Ռուսաստանի վորջ բնակչութեան $\frac{1}{4}$
մասը²⁾:

Սպառողակոոպները բավականին փոքր կազմակերպութիւններ
եյին, միջին հաշվով մի ընկերութեանն ընկնում եր 797 ան-
դամ³⁾:

Նյութական միջոցներ Սպառողակոոպերացիայի սեփական միջոց-
ները կազմում ելին.

1) 1919 թ. սպառողակոոպերի թիվը հասնում է 47.000-ի:

2) Սպառողակոոպների անդամների $\frac{1}{6}$ մասը բանվորներ ելին, իսկ
մնացած մասան բաղկացած եր գյուղացիներից:

3) 1918 թ. մի բանվորական սպառողակոոպին ընկնում եր 2.611 ան-
դամ, իսկ մի գյուղական սպառողակոոպին՝ 443 անդամ:

Տ ա Ր Ի Ն Ե Ր	Մի ընկեր. ընկ- նում եր փայա- դրամագլուխ	Մի անդամին ընկ- նում եր փայադրա- մագլուխ
1913 թ.	9.088 ո.	22 ո.
1917 »	11.992 »	15 »

Առաջին հայացքից թվում է, վոր մեր սպառնողներացիայի փայադրամագլուխը պակաս չէ Արևմտյան Յեվրոպայի սպառնողներացիայի նույնանման դրամագլխից, նամանավանդ, վոր Խալիսայում մի անդամին հասնում է 20 ո., Գերմանիայում՝ 9 ո., Բելգիայում՝ 4 ո. 50 կոպ.:

Բայց պետք է նկատել, վոր շնորհիվ այն հանգամանքին, վոր մեր սպառնողներացիայում լայն չափերով գործադրվում է վարկավորման սխտեմը, մեր անդամներն իրենց բաժնեվճարների դիմաց պարտքով զանազան ապրանքներ են վերցնում: Այսպես, որինակ, անգլիացի կոոպերատորը իր մի ուրիշ բաժնեվճարից թողնում է ընկերության շրջանառության մեջ 97 կոպեկ, գերմանացին՝ 91 կոպ. իսկ ուսն՝ ընդամենը 3 կոպեկ:

Յեթե ավելացնելու լինենք և այն, վոր պատերազմի ժամանակ գյուղատնտեսական մթերքների գները բարձրացան 6 անգամ, իսկ գործարանային ապրանքների գները՝ 10 անգամ, այն ժամանակ կպարզվի այն յերևույթը, վոր մեր սպառողական ընկերությունների փայադրամագլուխները, պատերազմի ժամանակ նվազեցին և վոչնչացան: Յեվ իսկապես, 1917 թ. բաժնեվճարները սպառողական ընկերության տարեկան միջին շրջանառության միայն $\frac{1}{30}$ մասն ելին կազմում, մինչդեռ, փոխառիկ միջոցները սեփական միջոցներից 5 անգամ ավելի ելին:

Շրջանառությունը Սպառողական ընկերությունների շրջանառությունը հասնում էր 1913 թ. 300 միլիոն ուրբլու (կամ յերկրի բոլոր շրջանառությունների $\frac{7}{100}$ մ.). 1917 թ. հասնում էր 2.500 միլիոն ուրբլու: Բայց յեթե ի նկատի ունենենանք, վոր մի ուրբլու ինքնարժեքն ընկած էր 4 անգամ, նշանակում է, 1917 թ. կոոպերացիայի շրջանառությունը հաս-

նում էր 500 — 600 միլիոն ուրբլու (կամ յերկրի բոլոր շրջանառության $\frac{20}{100}$ մասին):

Այդպիսով մի ընկերության և մի անդամին ընկնում էր.

Տ ա Ր Ի Ն Ե Ր	Մի ընկերու- թյան միջին շրջ- անառությունը	Մի անդամի շրջա- նառությունը
1913 թ.	105,321 ո.	310 ո.
1917 »	(272,939 »)	(342 »)
Դրամի անկման (արժեքազրկման) ժամանակ 1917 թ.	70,000	87 »

Սպառնողներացիայի Վերոհիշյալ աղյուսակներից ինչ յեզրա-
բնգհանուր գրութու- կացություններ կարելի չէ հանել: Ապրան-
քը պատերազմից յեվ քասակավության և թանկության տիրա-
հեղափոխությունից առաջ պետման ժամանակ սպառնողներացիայի
նշանակությունը բարձրանում է յերկրի
ապրանքային շրջանառության մեջ. դեպի կոոպերացիան են
ձգտում ազգաբնակչության խոշոր մասնանները: Բայց ընդհա-
նուր չքավորության և ուրբլու արժեքազրկման որերին՝ կոո-
պերացիայի սեփական դրամագլուխները սկսում են նվազել ու
կրճատվել և ավելի պակաս չափով ծառայել անդամին: Այժմ
կոոպերատիվի անդամն իր ընկերությունից չորս անգամ ավե-
լի պակաս ապրանքներ է ստանում, քան նա ստանում էր պա-
տերազմից առաջ:

Նշանակում է, պատերազմի ժամանակ սպառնողներացիա-
յի նշանակությունը յերկրի շրջանառության մեջ բարձրանում
է, բայց, դրամի արժեքի անկման հետևանքով, կոոպերացիայի
սեփական միջոցները համարյա թե վոչնչանում են: Կոոպերա-
ցիան սկսում է գործել պետական հիմնարկությունների կան-
խավճարներով. նա դառնում է կիսով չափ պետության կապա-
լառուն: Կոոպերացիայի կապն իր անդամների, փայտերների
հետ սկսում է թուլանալ:

Հենց այդ ժամանակն էլ բանվորական և գյուղական սպառ-
կոոպերացիայի մեջ բավականին սուր տարբերություններ են
նկատվում:

Բանվորների համար հարկավոր ե ասպրանքների վորոշ չափով տարբեր ընտրություն քան գյուղացիների համար, և յերբ ասպրանքները սկսում են պակասել, այն ժամանակ կոոպերացիայի «ընդհանուր կաթսան» դառնում ե բանվորների և գյուղացիների համար անձեռնտու. այդպիսով, յերբեմն մի կողմն ե զուրկ մնում ասպրանքից, յերբեմն ել՝ մյուս կողմը:

Բացի դրանից, գյուղական կոոպերացիայում ազդեցություն են ձեռք բերում հարուստ գյուղացիներ, վորոնք, մնալով գյուղում, պատերազմի տարիներին սկսում են շատ հարստանալ ի հաշիվ մյուսների: Գյուղացության ունեւոր խավերն ավելի շահագրգռված եյին գյուղատնտեսական մթերքների վաճառահանման գործով, քան գյուղում սպառումը կազմակերպելով: Շնորհիվ նրանց կողմից սահմանած գյուղատնտեսական մթերքների բարձր գների, գյուղացիների և բանվորների շահերն սկսում են միմյանցից տարբերվել ու բաժանվել. բանվորների համար անհրաժեշտ եր, վոր պարենավորման գներն ավելի քան ցածր, ավելի քան պակաս լինեյին: Բանվորները հարուստ գյուղացիներից ավելի սուր եյին գգում պատերազմի հետեանքները և որեցոր ավելին յեն հեղափոխականանում, իսկ հարուստ գյուղացիներն որեցոր ավելի յեն գիտակցում իրենց անտեսական անմիջական շահերը:

Այս հանգամանքն ունեցավ և իր հետեանքները. 1918—1919 թ. թ. բանվորական կոոպերացիան ժամանակավորապես անշատվեց համաքաղաքացիական կոոպերացիայից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Պարզեցեք տեղական սպառողական ընկերության դրությունը պատերազմից և հեղափոխությունից առաջ՝ համեմատելով.

1. Անդամների թիվը
2. Սեփական և փոխառիկ միջոցները:
3. Շրջանառությունների չափը:
4. Ոգուտը և փաստը:

Սպառկոոպերացիան Փետրվարյան հեղափոխությունից հետո փեթվարյան հեղափոխությունից հետո կոոպերացիան միանգամից ձեռք բերեց միջառք արտոնություններ և առավելություններ: Հրատարակվեց կոոպերատիվ որենքը, (1917 թ. մարտի 20-ին), վոր մշակված եր կոոպերատորների կողմից. կոոպերացիան կառավարությունից ավելի շատ պատվերներ ե ստանում պարենավորման հայթայթման ու պատրաստման ասպարիզում և այլն:

Վորովհետեւ սպառկոոպերացիայի սեփական միջոցները, ինչպես տեսանք վերևում, աստիճանաբար նվազում ու պակասում են և այդպիսով աննշան ոգնություն ե հասցվում անդամներին, այդ պատճառով սպառկոոպը զբաղվում ե առավելապես պետական պատվերներով և գործում ե պետական միջոցներով:

Յեւ վորովհետեւ ժամանակավոր կառավարությունը զրանվում եր խոշոր և մանր բուրժուազիայի ձեռքին, այդ պատճառով սպառկոոպերացիան ընկավ տիրապետող դասակարգերի անմիջական ազդեցության տակ:

Հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ կոոպերատորները մեծ մասամբ սոցիալիստական կուսակցությունների ամենաաջ թևն անցան:

Սպառկոոպերացիան Իշխանությունը խորհուրդների և բայուազմական կոմունիստների կուսակցության ձեռքն անցնեցիզմի ժամանակ լուց հետո (1917 թ. հոկտեմբեր), կոոպերացիայի ղեկավարները փորձեցին պաշտպանել նոր իշխանության առաջ իրենց ինքնուրույնությունն և ակախությունը:

«Խորհրդային իշխանությունը, ասում եյին նրանք, անհատատ ե: Յեթե կապվենք նրա հետ—կարող ենք սայթաքել և տապալվել իշխանության հետ»:

Կոոպերացիայի և խորհրդային իշխանության փոխհարաբերությունների հարցը քննվում ե բանվորական կոոպերացիայի III-րդ համագումարում (1918 թ. դեկտ. 17-ին): Համագումարում խոսեց ընկ. Լենինը. նրա ճառի իմաստը հետևյալն եր.

«Ով վոր իր ձեռքն ունի պետական իշխանությունը, չի

թույլ տալ, վոր մի ուրիշը կառավարի յերկրի տնտեսությունը, ալլապես կստացվի յերկիրշխանություն»:

«Այսպես եւ և այժմ. անթույլատրելի չե, վոր իշխանությունը պատկանի խորհուրդներին, իսկ մեր տնտեսությունը՝ խորհուրդներից կախում չունեցող կոոպերացիային»:

«Ձանազան յերկիրներում կատարված դեպքերը ցույց են տալիս, վոր իսկապես գալիս եւ միջազգային հեղափոխությունը»:

«Ամբողջ աշխարհում պայքարում են յերկու ուժ—կապիտալը եւ աշխատանքը: Այդպիսի ժամանակ չի կարելի կանգնել մի վորեւե միջին տեղ, ալլ անհրաժեշտ եւ վորոշակի բռնել վորեւե սեկի կողմը: Այդ պատճառով, կոոպերացիան եւ պետք ե իսկույն ևեթ լուծի այն հարցը, թե ում հետ նա պետք ե գնա—բանվորներին, թե կապիտալիստներին»: Ընչոր Լենինը միևնույն ժամանակ բացատրեց և այն, վոր խորհրդային իշխանությունը բնավ մտադրություն չունի կոոպերատիվների փոխարեն բանալու իր պետական պարենավորման խանութները: Ընդհակառակը, միջերբների բաշխման ամբողջ գործը պետք ե անցնի սպառնողներացիային, վորովհետև սպառնողները հիմնված են մասսաների ինքնագործունեություն վրա եւ տնտեսավարական խոշոր փորձառություն ունեն»:

Բանվորական կոոպերացիայի III համագումարը համաձայնեց ընկ. Լենինի պատճառաբանության:

Այս համագումարից հետո, շուտով հրատարակվեցին մի շարք գեկրեաներ¹⁾ (խորհրդային իշխանության վորոշումներ), վորոնք սպառնողներացիան նոր դրության ու նոր պայմանների մեջ դրին: Այդ դրությունը թելադրում եր հետևյալը.

Քաղաքային ազգաբնակչության, կարմիր բանակի եւ գյուղական չքավորության համար անհրաժեշտ կենսամիջոցների սուր պակասության հետևանքով, գյուղատնտեսական արտադրանքները ստացվում եյին գյուղացիներից՝ բռնագրավման ճանապարհով: Այդպիսով, կոոպերացիան հնարավորություն չունե

¹⁾ 1918 թ. ապրիլի 10-ի եւ նոյեմբերի 21-ի ու 1919 թ. մարտի 20-ի (պիսավոր գեկրեաներ):

զբաղվելու գյուղամիջերբների սեփական հայթայթման ու պարտաւորման աշխատանքով: Պարժոկոմից ստացված միջերբները պետք ե բաշխվեյին սպառնողների ինչոցով առանձին կարտերով ամբողջ ազգաբնակչությանը: Աշխատավորությունը պարենավորվում եր առաջին հերթին, իսկ անաշխատ տարրերը՝ յերկրորդ հերթին:

Հետևապես, սպառնողներացիան ռազմական կոմունիզմի շրջանում (1918—1921 թ. թ.) փաստորեն վերածվեց Պարժոկոկոմաի բաշխող ապարատի:

Սպառնողներացիան Քաղաքացիական կոմիտեներից հետո «պրո-ԿԵՊ-ի օրջանում ըողրագվերատկան» փոխարինվեց «պարեն-տուրքով»: Ուրիշ խոսքով, գյուղացությունը, փոխանակ գյուղատնտեսության արտադրանքների վողջ ավելցուկը պետությանը հանձնելու, այժմ պարտավորվեց միայն տուրք վճարել, իրավունք ունենալով մնացած միջերբները շուկայում ազատ վաճառելու:

Այսպիսի պայմաններում կոոպերացիան տնտեսական ինքնուրույնություն եր ձեռք բերում: Նա դարձյալ իրավունք ունեցավ շուկա դուրս գալ եւ վաճառահանել գյուղատնտեսական միջերբներ (1921 թ. ապրիլի 7-ի գեկրեանը): Սրանից հետո Պարժոկոկոմաան ինքնալուծարքի յենթարկվեց:

Ժամանակակից Այժմ տեսնենք, ի՞նչ հիմունքներով ե սպառնողներացիական աշխատում ժամանակակից խորհրդային կոոպերացիան, ի՞նչպես ե նա կազմակերպված ե ի՞նչ նվաճումներ ե նա արել:

Ռազմական կոմունիզմի ժամանակ գոյություն ունեցող քաղաքացիների պարտադիր գրվելն այս կամ այն կոոպերատիվին՝ փոխարինեց անդամների կամավոր անդամագրման րակցունքին (1923 թ. դեկտ. 28-ի եւ 1924 թ. մայիսի 20-ի գեկրեաները):

Սպառնողական ընկերություն հիմնելու համար բավական եր, վոր 30 քաղաքացի գրավոր դիմում անեյին նահներբառ (գուրմուտորդ) հատուկ հանձնաժողովին: Յեթե հիմնարկները սպառ-

ընկերութիւն համար ընդունում ելին «նորմալ» — կանոնադրութիւնը, այդ դեպքում հանձնաժողովը իրավունք չունի մերժելու՝ ընկերութիւնը գրանցման յենթարկելը, ընդհանուր ցուցակում անցկացնելը:

Գրանցումից հետո ընկերութիւնը դառնում է «իրավական անձ», այսինքն՝ իրավունք է ունենում կատարելու զանազան գործարքներ — գնումներ, վաճառումներ և այլն, և այլն: Ընկերութիւն հաստատման այս կարգը կոչվում է ծառայողական կարգ («ЯВОЧНЫЙ ПОРЯДОК»), վոր նախկին «Թուլտվութիւն» կարգից այն առավելութիւնն ունի, վոր ընկերութիւնը բանալու կամ փակելու վերաբերմամբ ազատ էր նախկին «նահանգապետի» հայեցողութիւնից:

Կամավոր անդամագրութիւն անելով՝ չի նշանակում, վոր սպառողական ընկերութիւնները դարձան համադասակարգային կազմակերպութիւններ, ինչպես հեղափոխութիւնից առաջ էր, վորոնց մեջ տեղ ունեւին աշխատավոր և անաշխատ տարրերը: Խորհրդային կոոպերացիայում, վորպես վոչ միայն պաշտպանվող, այլ և մասնավոր կապիտալի վրա հարձակվող կազմակերպութիւն մեջ, անաշխատ տարրերը տեղ չունեն: Այդ պատճառով ել, 1924 թ. մայիսի 20-ի դեկրետի համաձայն, սպառողական անդամներ կարող են լինել միայն նրանք, վորոնք խորհուրդներ ընտրելու իրավունք ունեն՝ ըստ ԽՍՀ Միութիւն սահմանադրութիւն:

Ուրիշ խոսքով, սպառողական անդամ չեն կարող լինել տերաւերներն, առևտրականները և, ընդհանրապես, այն անձինք, վորոնք ապրում են անաշխատ յեկամութեամբ:

Նշանակում է՝ ԽՍՀ Միութիւն մեջ սպառողական ընկերութիւնները հանդիսանում են ինգնագործ, կամավոր, դասակարգային յեվ բանվորա-գյուղացիական կազմակերպութիւններ:

Բանվորական ընկերութիւնները չեն անջատված գյուղացական սպառողականներից: Կոոպերացիայի ասպարիզում գյուղացութիւնը բաժանված չի պրոլետարիատից և նրա ոգնութիւմբ պայքարում է մասնավոր կապիտալի դեմ:

Անգամներ իրա- Ընկերութիւն անդամ կարող է լինել վուճեցեր յեվ պար- ամեն մի քաղաքացի, վոր 16 տարեկանից տակաւ: Եւ, ապրում է ընկերութիւն գործունեութիւն շրջանում և ձայնի իրավունք ունի խորհուրդների ընտրութիւններին: Յուրաքանչյուր անդամ պարտավոր է մուծել ընկերութիւն գրամարկղը իրենից պահանջվելիք մուտքի և բաժնի վճարները: Ընկերութիւն անդամն ունի ընդհանուր ժողովում միայն մի ձայն, կարող է վարչութիւն կազմում ընտրել և ընտրվել, և ընկերութիւն մեջ, անդամների նկատմամբ մի շարք արտոնութիւններ ունի (բաժնեվճարի համար վորոշ տոկոսիք, գնումներից վորոշ զեղչ կամ ընդհանուր գնումների հաշվին ոգուտի հատկացում, խանութից ապրանք ստանալ առաջին հերթին և այլն, և այլն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ներկայումս առանձնապես խոշոր նշանակութիւն ունի կանանց և յերիտասարդութիւն ներգրավումը կոոպերացիայում:

Յերիտասարդութիւն մասնակցութիւնը կոոպերացիայում անհրաժեշտ է այն տեսակետից, վորպեսզի նա շուտով կարողանա սովորել և վարժվել հասարակական տնտեսական աշխատանքի ասպարիզում: Յերիտասարդութիւնը վորոշ աշխուժութիւն է մտցնում կոոպերատիւների կյանքում: Ընկ. Ռիկովը կոոպերացիայում կանանց մասնակցութիւն մասին հետևյալն է ասում.

«Վերջին ժամանակներս ուս գլուղներում կանայք իրենց բավականին ազատ են դրում: Նրանք իրենց պահում են ինչպես կարգն է, ինչպես տղամարդկանց համահավասար մարդիկ»:

«Կոոպերատիվ գործում կինը հաճախ գերազանցում է տղամարդուն: Կինն ավելի խնայող է, քան տղամարդը. կինը ըզգուշ է մի կոպեկի նկատմամբ. նա տնային գործերին ավելի լավ է նայում, քան տղամարդը: Այդ պատճառով ել՝ կանանց միջոցով ավելի հեշտ է հասնել այն բանին, վոր կոոպերատիվում թանկութիւնը վերացվի և վերջ տրվի անկարգութիւններին»:

ԸՆԿԵՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ Առ 1-ն հոկտեմբերի 1924 թ. ԽՍՀ Միութիւն յեվ անգամների կազմը սահմաններում գոյութիւն ունեւին 22,480 ընկերութիւն, վորոնք պահում ելին 34 հազար 88 սպառիւնութ: Անդամների թիւը — 7,072,910 *) (վո-

*) Կատարված վորոշ հետազոտութիւններից յերևում է, վոր գյուղում սպառողականներից գրավում է դեպի իրեն առավելապես չքավորներին: Այսպես, որինակ, Նովո-Նիկոլ. նահանգի սպառողականների կեսը (50%) չքավորներն են:

րից մոտ 400,000-ը կանայք): Այդպիսով, սպառնականագրա-
յի շուրջն են համախմբված 135 միլիոն ազգաբնակչությունից
35 միլիոն հոգի (հաշված անդամի ընտանիքի անդամները) աշա-
խենք խՍՀ Միության ամբողջ ազգաբնակչության $\frac{1}{4}$ մասից
քիչ պակաս կամ 25% -ը:

Անդամներն ընկնում են ինքնաշահության յեզ գյուղին այսպես.

Սպառնականությունների տեսակը	Ընկերու- թյունների թիվը	Խանութ- ների թիվը	Անդամ-բաժ- նետերերի թիվը
Քաղաքային և բանվորական	1,560	7,010	3,001,207
Գյուղական և զանազան տիպի	20,086	27,078	3,523,156
Ցերկաթգծի և ջրափոխադր.	834	—	548,547

Քաղաքում կոոպերացիան և ազգաբնակչության կեսը (48%),
վորի $\frac{3}{4}$ մասը արհմիության անդամներն են (21 միլիոնից՝ 15
միլիոնը):

Գյուղում կոոպերացիան և գյուղացույթյան $\frac{1}{6}$ մասը ($12-15\%$) կամ 112 միլիոնից՝ $17\frac{1}{2}$ միլիոնը:

Մի քաղաքային կամ բանվորական սպառնական միջին հաշ-
վով ընկնում և 1917 անդամ, իսկ մի գյուղական սպառնական՝
176 անդամ: Միջին թվով մի սպառնական ընդհանուր առմամբ
314 անդամ:

Այս թվերը ցույց են տալիս, վոր ժամանակակից սպառ-
նականները կրկնապատիկ մեծ են մինչ-պատերազմյան և կրկնա-
պատիկ փոքր են մինչ-հեղափոխական ժամանակվա սպառնակա-
ններից:

Այդպիսով տեսնում ենք՝ ժամանակակից սպառնականագրա-
ցիան, թե իր միավորների և թե իր անդամների քանակով,
պերազանցում և 1914 թ. և արդեն հասել և 1917 թ. մակար-
դակին (մինչ-հեղափոխության շրջան) (տես նկ. № 6):

Վերջին քառամյակում (1921—1925 թ. թ. ՆԵՊ-ի տարի-
ներին) կոոպերացիան բավականին խոշոր չափերով և աճել:

Բանվորության և, ընդհանրապես, քաղաքի ազգաբնակչու-
թյան մասնակցությունը կոոպերացիային՝ ներկայումս ավելի



Նկար 6. Նկարի թվերը ցույց են տալիս, վոր խՍՀՄ-ի աշխատողական կո-
ոպերացիաներն մտնում և անել մի փոքրիկ ճիգ ևս, վորպեսզի ընկերությունների և
անդամների քանակով նրանք կարողանան հասնել 1918-ի սկզբի թվերին:

յե, քան մինչ-պատերազմյան և մինչ-հեղափոխության տարի-
ներին:

Գյուղն այդ ասպարիզում դեռ ևս շատ և յետ մնացել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Նկարագրեցեք տեղից սպառնական ժամանակակից գրու-
թյունը՝ պարզելով—

1. Անդամների թիվը.
2. Սեփական և փոխառիկ դրամագլուխները.
3. Շրջանառությունները.
4. Ոգուտը և վիսալը.
5. Տեղական բնակչության վոր մասն և անդամ սպառ-
կողին:

ԽՍՀ Միութեան սահմաններում գոյութիւն ունեյին 22,480 սպառկոող 7,072,910 անդամով: Կոոպերացիաժ եր ազգաբընակչութեան $\frac{1}{4}$ մասը. այդ ժամանակ քաղաքում կոոպերացիայի շուրջն ե համախմբել բնակիչների $\frac{3}{4}$ մասը, իսկ գոլդում՝ միայն $\frac{1}{6}$ մասը: Գյուղում սպառկոողերացիայի շուրջն են կազմակերպվում առավելապես չքավորները:

ՀԱՐՅԵՐ

1. Ինչո՞ւ անհրաժեշտ ե ուսումնասիրել ժամանակակից կոոպերացիան ԽՍՀ Միութեան մեջ:

2. Յէրբ հիմնվեցին Ռուսաստանում առաջին սպառողական ընկերութիւնները:

3. Ինչո՞ւ սպառողական կոոպերացիան թույլ եր զարգանում XIX դարի 90-ական թվականներին:

4. Ի՞նչը նպաստեց 90-ական թվականներին սպառողական կոոպերացիայի զարգացմանը:

5. Ինչպե՞ս եր վերաբերվում ցարական կառավարութիւնը սպառողական ընկերութիւններին կազմակերպմանը:

6. Յէրբ ե վճռեղ գումարվեց սպառողական ընկերութիւնների առաջին խորհրդակցութիւնը, ե ի՞նչ արդշունքներ ունեցավ:

7. Ի՞նչ վորոշեց 1908 թվին գումարվաժ համառուսական կոոպերատիվ առաջին համագումարը:

8. Յէրբ սկսեցին զարգանալ բանվորական անկախ սպառողական ընկերութիւնները:

9. Յէրբ գումարվեց ե ի՞նչ վորոշեց համառուսական II համագումարը:

10. Քանի՞ ընկերութիւն գոյութիւն ունեյին 1914 թ. պատեղազմից առաջ:

11. Ընկերութիւնները քանի՞ անդամ ունեյին:

12. Ի՞նչ միջոցներ ունեյին սպառ. ընկերութիւնները պատերազմից առաջ:

13. Կորբան շրջանառութիւն ունեյին սպառընկերութիւնները 1913 թ.:

14. Ի՞նչ փոփոխութիւններ առաջ յեկան սպառընկերութիւնների կյանքում պատերազմի ժամանակ՝ հետևյալ խնդիրների նկատմամբ—ընկերութիւնների թվի, անդամների թվի, միջոցների չափի ե շրջանառութեան վերաբերմամբ:

15. Ինչո՞ւ համար սպառողական ընկերութիւնները հեղափոխութիւնից առաջ մեժ չափով կախումն ունեյին բուրժուական պետութիւնից ե թույլ կապ՝ անդամների հետ:

16. Ի՞նչ ձեռք բերեց սպառկոողերացիան Փետրվարյան հեղափոխութիւնից հետո:

17. Ինչո՞ւ սպառկոողերացիան ձգտում եր պահպանել իր անկախութիւնը, յերբ իշխանութիւնը խորհուրդներին անցավ:

18. Ի՞նչպե՞ս ապացուցեց ընկ. Լենինը կոոպերացիայի չենթարկման անհրաժեշտութիւնը՝ խորհրդային իշխանութեան:

19. Ի՞նչ դրութիւն մեջ եր կոոպերացիան «ռազմական կոմմունիզմի» ժամանակ:

20. Ինչո՞ւ ե ի՞նչպե՞ս փոփոխվեց կոոպերացիայի դրութիւնը ՆեՊ-ի ժամանակ:

21. Յէրբ հայտարարվեց կամավոր անդամագրութիւնը սպառողական ընկերութիւններում:

22. Ի՞նչպե՞ս ե հիմնվում սպառողական ընկերութիւնը:

23. Ո՞վ չի կարող անդամ լինել սպառկոողին:

24. Ինչո՞ւ համար առանձնապես ցանկալի յե կանանց ե յերիտասարդութեան մասնակցութիւնը սպառկոողներում:

25. Քանի՞ անդամ ունեյին սպառկոողները 1924 թ. հոկտ. 1-ին:

26. Քանի՞ սպառկոող կային ԽՍՀ Միութեան մեջ 1924 թ. հոկտ. 1-ին:

27. Ազգաբնակչութեան վճռ մասն ե կոոպերացիաժ ներկայումս:

28. Կոոպերացիան վճռեղ ե ուժեղ,—քաղաքում թե գոլդում:

29. Կոոպերացիան յերբ եր ուժեղ—պատերազմից առաջ, թե այժմ:

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Բ.

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՁ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒՅՈՒՆԵ)

Սպառնալիցի
դեկլարացիաներ. կապից սպառնալիցի կազմակերպության
ա) ընդհանուր մասին:
ժողովը

Անդամների ընդհանուր ժողովը հանդիսանում է սպառնալիցի տերն ու տնտեսներ:

Ընդհանուր ժողովը¹⁾, գումարվելով տարեկան առնվազն չորս անգամ և վոչ պակաս բոլոր անդամների $\frac{1}{3}$ -ի մասնակցությամբ, զբաղվում է հետևյալ հարցերի քննությամբ—հաստատել առաջիկա տարվա գործունեության ծրագիրը և ծախսերի ու չեկաժուանների նախահաշիվը, քննել և հաստատել անցած տարվա հաշվետվությունը, բաշխել ստացված ոգուտները, վորոշել յեղած ֆնասները ծածկելու կարգը, ցուց տալ մուտքի և բաժնի վճարների չափը, հեռացնել անարժան անդամներին ընկերությունից, մշակել և հաստատել ընկերության տնտեսավարական աշխատանքների ծրագիրը, վոչ անդամներին ապրանքներ բաց թողնելու պայմանները, փոխառությունների չափը և նրանց հանգցնելու կարգը, լուծել կայք ու գույք ձեռք բերելու, վաճառման, գրավ դնելու վերաբերյալ հարցեր, ընտրել ընկերության ղեկավարող վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, նշանակել նրանց վարձատրությունը, քննել վարչական մարմինների գեմ յեղած բողոքներն ու զանգատները, փոփոխել կամ լրացնել ընկերության կանոնադրության այս կամ այն կետերը, վորոշել ընկերության ձուլման կամ միացման հարցը մի ուրիշ նման ընկերության հետ, անդամագրվել և մըտնել կոոպերատիվ և զանազան կազմակերպությունների շարքերը և այլն, և այլն:

1) Յերը ընկերության անդամների թիվը մեծ է, այդ դեպքում հրավիրվում է լիազորների ժողով, ընտրելով յուրաքանչյուր 10 անդամից մի լիազոր:

Ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են ինչպես ներկա յեղող, այնպես ել ժողովից բացակայող անդամների համար:

Ժողովում հարցեր վճովում են ձայների հասարակ մեծամասնությամբ և բաց քվեարկության միջոցով՝ բացառությամբ առանձին կարևոր հարցերի—ինչպես են՝ կանոնադրության փոփոխությունը, վարչության վերընտրությունը, ընկերության լուծարքը կամ նրա ձուլումը մի ուրիշ ընկերության հետ և այլն—վորոնց որինական վորոշման համար պահանջվում են երկա յեղող անդամների ձայների $\frac{2}{3}$ մասը:

բ) Վարչություն Ընկերության ընթացիկ աշխատանքները վարելու համար ընդհանուր ժողովն իր անդամների միջից ընտրում է 3—5 հոգուց բաղկացած վարչություն մի տարի ժամանակով:

Վարչությունն ընկերության ղեկավարության հետ կապված հարցերը քննում և վճում է իր նիստերում, իսկ ընթացիկ, առորյա աշխատանքները բաշխվում է վարչության անդամների միջև. վարչության անդամներից մեկը զառնում է նախադան և վարում է ընկերության ընդհանուր գործերը՝ յերկրորդը վարում է զանձապահի պաշտոնը, յերրորդը՝ քարտուղարությունը և այլն¹⁾:

Վարչության պարտականությունն է—ապրանքներ գնել, պահել և վաճառել, ստանալ, պահել և վերադարձնել՝ դրամներ, արժեքներն և ընկերության կայքն ու գույքը. ընկերության անունով զանազան պայմանագրեր կնքել, պաշտպանել դատարանում և այլ կազմակերպություններում ընկերության շահերը. հիմնել, կազմակերպել ընկերության համար բաժանմունքներ, պահեստներ, խանութներ, գրասենյակներ և զանազան

1) Համաձայն 1924 թ. մայիսի 20-ի դեկրետի՝ թույլատրվում է մի քանի վարչանդամների աշխատելու փոխարեն՝ ընտրել մի ընդհանուր կառավարիչ: Կոոպերացիայի գործնական կյանքի անսովոր այդ շեղումն արված է, ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր պուղական փոքր սպառնալիցները չեն կարող վարձատրել մի քանի վարչանդամների:

ձեռնարկութիւններ. ընդունել և արձակել ծառայողներ. գե-
կուցել ընդհանուր ժողովներում ընկերութեան գործերի մա-
սին, ի կատար ածել ընդհանուր ժողովի վորոշումները և այլն,
և այլն: Վարչութիւնն իր աշխատանքները համար պատասխա-
նատու յե ընդհանուր ժողովի առաջ:

գ) Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում
նախագահ և ընդհանուր ժողովում 3 և ավելի ան-
դամներից և նրա պարտականութիւնն է՝ դիտել ու հսկել վար-
չութեան և յենթաբաժիններին, վերստուգել ընկերութեան հաշ-
վետութիւնները և հետևել բոլոր գործերին:

Վերստուգիչ հանձ. պարտավոր է տարվա ընթացքում մի
բանի անգամ ստուգել ընկերութեան դրամարկղը, ապրանքնե-
րը, հաշվապահութիւնը և մյուս գործերը. բացի դրանից, նա
պարտավոր է ընդհանուր ժողովին տալ իր յեզրակացութիւնը
և անել իր դիտողութիւնները վարչութեան կողմից ներկայաց-
րած հաշվետութիւնների, նախահաշիվների և ուրիշ առաջա-
դրութիւնների մասին:

Վերստուգիչ հանձ. ընդունում և քննում է վարչութեան
անդամների և ծառայողների դեմ ուղղված բողոքները՝ ինչպես
ընկերութեան անդամների, այնպես էլ կողմնակի մարդկանց
կողմից¹⁾:

Սպառնալիցների մի- Սպառնալիցների միջոցները կազմվում են
ջոցների կուսակման — ա) անդամների մուտքի և բաժնեվե-
մասին ճարներից, բ) ավանդներից, գ) փոխառու-

թիւններից, դ) զանազան մուծումներից (նվիրատվութիւն-
ներ), ե) ընկերութեան գուտ ոգուտներից և ուրիշ յեկամուտ-
ներից: Մուտքի կամ անդամակցական վճարը 50 կոպեկից ա-
վելի չէ և մուծվում է իբրև ընկերութեան անբաժանելի սե-
փականութիւն: Բաժնեվճարը կամ փաշավճարը 5 ու ավելի չէ
և վերադարձվում է անդամներին, յերբ նա ցանկանում է հե-
ռանալ ընկերութիւնից: Բաժնեվճարը վերադարձվում է ան-
դամին տարեկան հաշվետվութեան հաստատումից հետո, 3 ամս-

¹⁾ Սպառ. ընկերութիւնը կարող է վերստուգման յենթարկվել
նաև Բ. Գ. Տեսչութեան և կոպեքատիվ Միութեան կողմից:

վա ընթացքում, յերբ հաշված ու պարզված է աչն բոլոր ո-
գուտը կամ փնասը, վոր ընկնում է փաշադքամագլխի վրա¹⁾:

Ավանդներն—անդամների կամ տվյալ վայրի բնակիչների
այն ազատ միջոցներն են, վոր հանձնվում են ընկերութեանը
հատուկ պայմաններով—վորոշ ժամկետով, ըստ առաջին պա-
հանջման և այլ արտոնութիւններով:

Փոխառութիւնները սովորաբար ընկերութիւնը վերցնում
է պետհիմնարկներից ու կազմակերպութիւններից—դրամով
կամ ապրանքներով:

Զուտ ոգուտի $\frac{1}{10}$ մասը, համաձայն կանոնադրութեան,
ավելացվում է ընկերութեան դրամագլուխների վրա՝ վորպես
անբաժանելի (անմասնատրելի) սեփականութիւն. ոգուտի մյուս
մասը հատկացվում է վորպես բաժնեվճարի տոկոսիք (միջին
բանկային տոկոսից վոշ ավելի), անդամների գնումների հա-
մար դեղչ, կուլտ-կրթական ձեռնարկութիւնների ոգտին հատ-
կացումներ և հատուկ դրամագլուխներ ստեղծելու և լրացում-
ների համար: Յեթե ընկերութիւնը փնաս է ունենալու, այդ
փնասը ծածկվում է պահեստի դրամագլխով, իսկ յեթե վերջի-
նըս չբավականացնի, այդ դեպքում՝ անդամների բաժնեվճար-
ներով:

ՍՍՀ Միութեան սպա- ՍՍՀ 1-ին հոկտեմբերի 1924 թ. բանվո-
ռոգական կոպեք- րագլուղացիական սպառողներն ունեյին 95
րաքիվների մի- միլիոն ուրբի սեփական միջոցներ (բան-
ջոցները վորական ու համաքաղաքային սպառնալից-
ները — 39 միլիոն ուրբի, գլուղականները — 56 միլիոն ուրբի):

Մի սպառնալից միջին սեփական դրամագլուխը հավասար
էր 4226 ու. (բանվորական ու համաքաղաքային սպառնալիցը =
25.634 ու., գլուղականը = 2800 ու.):

Մի սպառնալից մի անդամին ընկնում էր միջին հաշվով 2
ու. 50 կ. փաշադքամագլուխ, իսկ մյուս սեփական միջոցները
գոչանում էին սպառնալիցի ստացած առևտրական ոգուտներից:

¹⁾ Ընկերութեան փնասների դիմաց անդամը պատասխանատու յե-
լի բաժնեվճարով միայն. նրա անձնական հաշիվների դիմաց բաժնե-
վճարից յետ դնելը չի թույլատրվում:

Այդպիսով, ընդհանուր առժամբ, մի անդամին ընկնում է փայազրամագլուխ 13 ո. 50 կոպ. (անդամ քաղաքացուն — 13 ո., անդամ գյուղացուն — 6):

Մի սպառնալից և մի անդամին ընկնող սեփական մի-միջոցների և բաժնեվճարների գրութիւնը նախապատերազմյան (1913 թ.) հետեյալ պատկերն եր ներկայացնում.—մի անդամին՝ 22 ո., մի ընկ. 9088 ուրբլի:

1917-ին—անդամին՝ 15 ո., ընկ. 11992 ո..

1924 » » 2 ո., 50 » 4226 ո..

Բանվորա-գյուղացիական կոոպերատիվների 1924 թ. փոխառիկ միջոցները (պետութիւնից, բանկերից և կոոպերատիվ միութիւններից ստացված փոխառումները, ավանդները) հասնում էին 229 միլիոն ուրբլու: (Բանվորական ու քաղաքային կոոպերատիվները — 148 միլիոն, գյուղական կոոպերատիվներ — 81 միլիոն ուրբլի). փոխառիկ միջոցները $2\frac{1}{2}$ անգամ ավելի չեն սեփական միջոցներից: Ժամանակակից սպառնալիցներն ավելի պակաս են ոգտվում վարկերից, քան մինչ-հեղափոխական կոոպերատիվները: Ներկայումս մասնավոր անձինք չեն վարկավորում կոոպերատիվներին. գոյութիւն ունի գլխավորապես պետական և կոոպերատիվ վարկ:

Սպառնալից քաղաքային փոխառիկ յեւ սեփական միջոցները հավասար են 324 միլիոն ուրբլու (այդ գումարը հավասար է մոտ 162 միլիոն նախապատերազմյան ուրբլու):

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
	1923 թ.	1924 թ.
Քաղաքային Բանվորական Յերկաթգծի ու ճանապարհ. և ջրային փոխ. Գյուղական	289.867.000 ո.	764.736.000 ո.
	139.146.000 ո.	409.145.000 ո.
Ընդամենը	429.013.000 ո.	1.173.881.000 ո.

Սպառնալից քաղաքային ընկերութիւնները վե-
ջահառուրդները ընդհանուր միջոցներով 1924 տնտեսական տա-
րում 1.173.881.000 ուրբլու ապրանքներ են վաճառել: Ուրիշ
խոսքով, սպառնալիցներն իրենց դրամագլուխը շրջանառման մեջ
են դրել 4-անգամ (շատ դանդաղ): Ավելի մանրամասն տեղե-
կութիւններ և համեմատական տվյալներ 1923 թ. մասին բեր-
վում են վերևի աղյուսակում:

Շրջանառութիւնը մի տարվա ընթացքում հսկայական չա-
փով աճել է՝ 1923 թ. հետ համեմատած՝ համարյա չորս անգամ:
Գյուղական սպառնալիցների շրջանառութիւնն ավելի արագ է
աճել, քան բանվորական ու քաղաքային կոոպերատիվների
շրջանառութիւնը:

Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վոր 1924 թ.
մի ուրբլով հնարավոր եր յերկու անգամ ավելի պակաս ապ-
րանք գնել, քան 1913 թ., նշանակում է՝ 1914 թ. իսկական
շրջանառութիւնը կարող եր հասնել, որինակի համար, 600
միլիոն ուրբլու: Բայց յեւ այնպես, կարելի չե ընդունել այն,
վոր 1924 թ. շրջանառութիւնն արդեն հավասարվում է 1917 թ.
մինչ-հեղափոխական շրջանի շրջանառութիւնն չափին, յերբ մեր
սպառնալից կոոպերացիան հասել եր իր բարձր զարգաց-
մանը:

Մինչ պատերազմյան և մինչ-հեղափոխական ժամանակա-
շրջանների շրջանառութիւնները համեմատելու համար տալիս
ենք հետեյալ թվերը.

1913 թ. — ընդհանուր շրջանառութիւնը — 300 միլ. ո.,
1917 թ. — » » — 600 » »
1923 թ. — » » — 429 » »
1924 թ. — » » — 1173 » »

Մի ընկերութիւնն ընկնում է միջին չափով 1914 թ. —
53,000 ուրբլի *)

(մոտ 26,000 նախապատերազմյան ուրբլու չափով):

(Քաղաքային ու բանվորական կոոպերատիվները = 417,000
ուրբլի, իսկ գյուղական կոոպերատիվները = 20,000 ո.):

*) 1913 թ. = 105.321 ո., 1917 թ. = 70 000 ո.

Ժամանակակից սպառնալուծողները, վորպես տնտեսական կազմակերպություններ, դեռևս այնքան ել խոշոր չեն, առանձնապես, գյուղական կոոպերատիվները դեռևս չեն հասել նախկին, մինչև հեղափոխական կոոպերատիվի մակարդակին:

Անգամներին չեմ ազատակոոպի մի անդամին վաճառված գաբակյուրյան մասուցած ծառայությունը 1923 թ.— 61 ա. ապրանք.¹⁾ 1924 թ.— 167 ա. »

Ապառնողների մի անդամի նկատմամբ մատուցած ծառայությունը 1924 թ., նախորդ տարվա հետ համեմատած՝ $2\frac{1}{2}$ անգամ ավելի յե յեղել:

Մի անգամին ընկնող միջին շրջանառությունը բարձր է մինչև-հեղափոխական շրջանից (87 ա.) և յերկու անգամ ցած է մինչև-պատերազմյան չափից (310 ա.):

Յիթե ի նկատի ունենանք ուրբուր արժեքազրկումը (յերկու անգամ) այն ժամանակ կերևա, վոր մի անդամին ընկնող միջին շրջանառությունը չորս անգամ պակաս է քան 1914 թ. պատերազմից առաջ: Պատերազմի և բլոկադայի հետևանքով մասսաների ավերվածնքը այնքան խոշոր եր 2), վոր նրանք կարող եյին իրենց սպառողական խանութներում չորս անգամ պակաս ապրանք գնել. քան պատերազմից առաջ:

Բայց, մյուս կողմից, պատերազմի ժամանակվա նման, միջին շրջանառությունը զօշ թե պակասում է, այլ, ընդհակառակը, արագությունը բարձրանում է:

Այդ յերևույթը պրապական է իՍՆ Միության սպառնողութե-րացիայի առողջ լինելուն:

Քաղաքի և գյուղի ազգաբնակչությունը կոոպերացիայի մատուցած ծառայություն մասին ավելի մանրամասն տեղեկու-թյուններ տալիս է հետևյալ աղյուսակը. —

Տ Ա Ր Ի- Ն Ե Ր	Ք Ա Ղ Ա Ք		Գ Յ Ո Ի Ղ	
	Մի անգամին միջին շրջանառութ.	Մի հոգուն	Մի անգամին	Մի հոգուն
1923 թ.	—	12 ա. 80 կ.	—	1 ա. 43 կ.
1924 թ.	217 ա.	31 ա.	117 ա.	4 ա.

Մի անգամ-քաղաքացուն վաճառված է յերկու անգամ ավելի ապրանք, քան մի անգամ-գյուղացուն (217 ա. և 117 ա.): Այլ սյունակների համեմատությունից յերևում է, վոր 1923 թ. քաղաքացին և բանվորը սպառնողութեան ըստացել են 9 անգամ ավելի ապրանք, քան գյուղացիները (12 ուրբ. 80 կոպ. և 1 ա. 43 կոպ. գյուղացու գնումներն, ընդհանրապես, չնչին եյին (ընտանիքին 7 ա. տարեկան): Դրու-թյունը վորոշ չափով բարելավվում է 1924 թվին:

Քաղաքի բնակչի միջին շրջանառությունն ավելանում է $2\frac{1}{2}$ անգամ, իսկ գյուղի բնակչինը — 3 անգամ:

Ապառնողութեան ժամանակակից կոոպերացիան իր մի մասնակցությունը կողմով հարվածում է մինչև պատերազմյան և մինչև-հեղափոխական ժամանակի կոոպերացիաներին: Խորհրդային կոոպերացիայի մասնակցությունը յերկրի ընդհանուր առևտրական շրջանառությունների մեջ չափազանց խոշոր տեղ է բռնում. 1913 թ. սպառնողութեան շրջանառությունը կազմում եր ընդհանուր առևտրական շրջանառությունների $\frac{7}{100}$ մասը: 1917 թ. սպառնողութեան շրջանառությունը կազմում եր ընդհանուր առևտրական շրջանառությունների $\frac{20}{100}$ մասը:

1914 թ. սպառնողութեան շրջանառությունը կազմում եր ընդհանուր առևտրական շրջանառությունների $\frac{30}{100}$ մասը:

Այդպիսով, սպառնողութեան բռնել է խորհրդային տրնտեսությունից մեջ այնպիսի մի տեղ, վոր մինչև այդ ժամանակ չէր բռնել և վոր մի յերկրում դեռևս չի բռնում:

1) 1913 թ. վաճառված է մի անգամին 310 ուրբ.

1917 թ. » » » 87 »

2) իՍՆ Միության ռազմական պաշարումը՝ բուրժուական պետությունների կողմից:

Խորհրդային կոոպերացիան, համեմատած արևմտյան չեվ-
րոպական կոոպերացիայի հետ, բավականին խոշոր ուժ են երկա-
յանում: Մեր կոոպերացիայի շրջանառությունը պակաս չե-
լեվրոպական կոոպերացիայի շրջանառությունից և, մոտավո-
րապես, հավասար է անգլիական կոոպերացիայի շրջանառու-
թյանը: Կոոպերատիվների անդամներին մատուցած ծառայու-
թյունը մեզնում ավելի մեծ է, քան մյուս յերկիրներում: Խ. Ս.
Հ. Միուլթյան սպառնկոպերացիայի ուժերը տարեց տարի ա-
վելանում հա՛ ավելանում են: Առաջ բերենք դարձյալ ժամանա-
կակից կոոպերացիայի աշխատանքները լուսաբանող մի շարք
տվյալներ:

Ֆարագների գնման Սպառողական կոոպերատիվներն իրենց
ազդյուններ գնումները կատարում են գլխավորապես
պետական կազմակերպություններից: Այդ բանը խոշոր չափով
զանազանում է խորհրդային սպառնկոպներին՝ կապիտալիստա-
կան յերկիրների սպառնկոպներից: Վերջիններս, իրենց գնում-
ները կատարելով մասնավոր անձերից, հետևաբար, կախման
վիճակում են դնում իրենց:

1924 թ. Խ. Ս. Հ. Միուլթյան սպառնկոպերացիան ձեռք
է բերել պետարդյունաբերության արտադրությունների $\frac{1}{3}$ -
մասը: Այդ տեսակետից վորոշ ապրանքների նկատմամբ կոո-
պերացիան բռնել է առաջնակարգ տեղ, որինակ, բոլոր մա-
նուֆակտուրայի $\frac{1}{2}$ -ը, շաքարի $\frac{1}{2}$ -ը, աղի $\frac{1}{10}$ -ը վաճառվել է
սպառնկոպների միջոցով:

Գ Ե Ե Ը Սպառնկոպների նշանակած գները բա-
վական ցած են յեղել վոչ միայն մասնավորի, այլ և նույնիսկ
Պետառի գներից:

1924 թ. այն ապրանքից, վորից մասնավոր առևտրականը
վերցնում էր 1 ուրբլի, Պետառևտուրը վերցնում էր 93 կոպ.,
իսկ սպառողական կոոպերացիան 92 կոպեկ¹⁾:

¹⁾ Պետական առևտուրը գլխավորապես զբաղվում է մեծածախ
վաճառքով, մինչդեռ, կոոպերացիան զբաղվում է մեծածախ ու ման-
րածախ առևտրով:

Ֆարագների վերա- 1924 թ. Բանկոոպները վերադիր էլին
գիրները, ոգուսը զարիս ապրանքների վրա շրջանառության
 $14,4\%$ -ը, իսկ գյուղկոոպները $16,7\%$, այսինքն մի ուրբլու
վրա 14-ից մինչև 17 կոպեկ վերադիր:

Բանկոոպների ծախսերը կազմում էլին $11,7\%$ (շրջանա-
ռության), գյուղկոոպների ծախսերը՝ $15,5\%$ (մի ուրբլու վրա
11-16 կոպեկ):

Հետևաբար, քաղաքի կոոպերատիվների զուտ ոգուտը հա-
վասար էր $2,7\%$ -ի, իսկ գյուղկոոպներինը — $1,2\%$ (3 և 1 կո-
պեկ մի ուրբլուց*):

Կուլտուրական առ- Խ. Ս. Հ. Միուլթյան սպառնկոպերա-
խառանգ ցիան չի սահմանափակում իր գործու-
նեցությունը միայն տնտեսավարական աշխատանքով: Կոոպե-
րացիայի գործունեությունն մեջ մտնում են նաև՝ ժողովրդա-
կան կրթության գործին նպաստելը, կոոպերացիայի մասին
ընդհանուր գիտելիքների տարածումը և կոոպերատիվ առևտրի
ուսուցումը: Այս նպատակների համար, Խ. Ս. Հ. Միուլթյան
սպառնկոպերացիան իր միջոցներից տարեկան 2 միլիոն ուրբ-
լի չէ հատկացնում, կոոպերացիայի մասին լաջն ազիտացիա և
պրոպագանդա յե մղում՝ կազմակերպելով դասախոսություն-
ներ, գեկուցումներ, զրուցներ և ակումբներ. կատարում է
տոնակատարումներ (առանձնապես «Կոոպերացիայի Միջազգա-
յին Որը») և այլն և այլն. հրատարակում են թուղթիկներ, կո-
չեր, պլակատներ, կինո ժապավեններ և այլն: Պարբերաբար
լույս է ընծայում որաթերթեր և ամսագրեր: Հենց միայն վեր-
ջին տարին սպառնկոպերացիան տպագրել է 300 ավելի նոր
գրքեր կոոպերացիայի մասին և տարածել մի քանի միլիոն
որինակով: 1924 թ. կոոպերացիան դասավանդվել է 30 տեխ-
նիկումներում և II աստիճանի դպրոցներից շատերում (մոտ
500 դպրոց) բաց սպառնկոպերացիան, չբավականանալով միայն
այդ ձեռնարկներով, նոր աշխատավորներ շուտափուլթ պատ-

*) Անգլ. սպառնկոպ. ծախսերը կազմում են շրջան. $11,5\%$ -ը
գերմանական » » » $9,0\%$ »
ավստրիական » » » $10,0\%$ »

րաստելու և հին աշխատավորներին վերապտտրաստելու նպատակով պահուած և դասընթացների և դպրոցների մի ամբողջ ցանց՝ կոոպերատիվ առարկաներ ուսուցանելու համար:

1924/25 ուսումնական տարուած կոոպերացիա ս. վորոգ ուկնդիրների թիվն եր—բարձրագույն դպրոցների կոոպերատիվ բաժիններուած 240 հ.

Յենտրոսոյուզի դպրոցներուած 1134 »

Տեխնիկումներուած 6814 »

Կոոպերատիվ կուրսներուած 10495 »

Ընդամենը 18686 հոգի

Կոոպերացիայի կուլտուրական ամբողջ աշխատանքը լիովին համաձայնված է խորհրդային պետութեան համապատասխան որդաններին: Պետական աշակցութիւնը ապահովում է կոոպերացիային լայն չափով ծավալելու իր կուլտուրական աշխատանքները և տանելու այն ուղղութեամբ, վոր տարվում է վորջ պետութեան կողմից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Հետազոտեցեք տեղական սպառկոոպը և նրա անդամների թիվը, դրամագլուխները, գները և ալյն, սույն գրույցի մեջ բերված միջին թվերի հետ: Հարկավոր է կանգ առնել արհմիութիւնների և կուսակցական կերպութիւնների հետ կոոպերացիայի ունեցած կապի վրա ևս:

Արհեստակցական միութիւնը շահագրգռված է այն բանում, վորպեսզի բարձրացնի իր անդամների աշխատավարձի չափը:

Յեթե բանվորը չեռապատիկ ավելի չվճարի մասնավոր առևտրին իր գնած առարկայի իսկական արժեքի դիմաց, նա այդպիսով կպահպանի իր աշխատավարձի չափը բուն բարձրութեան վրա: Արհեստակցական միութիւնները, հետևապես, շահագրգռված են սպառկոոպերացիայի դարգացման գործով:

Խ. Ս. Հ. Միութեան արհմիութիւնները լսում են կոոպերացիայի մասին հաշվետու գեկուցումներ, տալիս են իրենց

ցուցմունքները, սպառկոոպների վարչութիւնների կազմում առաջ են քաշում իրենց թեկնածուները և ուրիշ միջոցներով պահպանում են սպառկոոպների հետ իրենց կապը:

Համկոմկուսը նմանապես ուշադրութեամբ հետևում է կոոպերացիայի զարգացմանն այնքան, վորքան, կոոպերացիան հրակաշական նշանակութիւն ունի բանվորա-գյուղացական մասսաների տնտեսութեան համար: Կուսակցութեան վերջին համագումարներում (որինակ 13-րդ և 14-րդ) քննվել են կոոպերացիայի հարցերը և տրվել են ղեկավար ցուցմունքներ ու հրահանգներ: Կուսակցութիւնը առաջ է քաշում, սպառկոոպների ընդհանուր ժողովներում, իր թեկնածուներին՝ ընտրովի պաշտոնների համար, կուսակցութիւնը համաձայնեցնում է սպառկոոպերացիայի գործունեութիւնը մյուս կազմակերպութիւնների հետ, ընդհանրապես, ցույց է տալիս կոոպերացիային այն տեսակի աշակցութիւն:

Խ. Ս. Հ. Միութեան Խորհրդային Միութեան ժամանակակից սպառկոոպերացիայի սպառկոոպերացիան միջազգային սպառկոոսարբերութիւնը միջպերացիայի շարքում առաջնակարգ տեղ է բռնում և կանգնած է այն բարձրութեան վրա, վորի վրա գտնվում էր հեղափոխութիւնից առաջ:

Հարց է ծագում, թե, արդյոք, ժամանակակից սպառկոոպերացիան ունի վորևե տարբերութիւն մինչ-հեղափոխական շրջանի կոոպերացիայից:

Չնայած գոյութիւն ունեն մի շարք արտաքին նմանութիւններ, բայց կան և մի շարք երկական տարբերութիւններ, վորոնք հետևյալն են.

Ռոշդելյան ջախախներն իրենց ընկերութիւնը հայտարարեցին գոյութիւն ունեցող կուսակցութիւնների վերաբերմամբ չեզոք: Ռոշդելցիները չուզեցին մասնակցել այն ժամանակվա բուրժուական կուսակցութիւնների պայքարներին: Բայց յերբ առաջ չեկավ բանվորական կուսակցութիւնը, սպառողական ընկերութիւնների խոշոր մեծամասնութիւնը հրաժարվեց անցնել նրա կողմը: Կոոպերատորները կարծում էին, վոր նրանք

մի շարք տնտեսական նվաճումներով, խաղաղ ճանապարհով կարողանալու յեն հաղթել կապիտալիզմը: Բայց այդ տեսակետը, ինչպես մենք տեսանք, (7-րդ պարագմունք) սխալ դուրս յեկավ և այն հետևանքն ունեցավ, վոր կոպերացիան դադարեց, ընդհանրապես, կապիտալիզմի դեմ պայքարելուց և բավականցավ միայն այն չնչին բարելավումներով, վորոնց հաջողվում եր ձեռք բերել: Ավելին ասենք. մինչ-հեղափոխության շրջանում, կոպերացիան, Արևմտյան Յեվրոպայում և Ռուսաստանում, մի շարք դեպքերում բուրժուազիայի դասակարգային տիրապետության զենքն եր դարձել ընդդեմ բանվորների և գյուղացիների (տես 7-րդ պարագմունք): Գոյությունն չունի «չեզոքություն» կոպերացիայում և նույնիսկ այնտեղ, վորտեղ կոպերացիան չի անցնում հեղափոխական պրոլետարիատի և գյուղացույթյան կողմը՝ փաստորեն ծառայելով բուրժուազիայի շահերին:

Կոպերատոր հեղափոխականները մերկացնում են կոպերացիայի կեղծ չեզոքությունը: Նրանց կարծիքով, կապիտալիստական հասարակարգը հենվում է խոշոր արդյունաբերության և հողային սեփականության տիրապետման վրա. տապալել այդ ուժը միայն կոպերացիայի միջոցով անկարելի չե, վորովհետև կոպերացիան ընդգրկում է միայն առևտուրը և մանր արդյունաբերությունը: Բանվորների և գյուղացիների միջոցներով անկարելի չե հավաքել այն խոշոր դրամագլուխները, վորոնք անհրաժեշտ են, ասենք, հենց ծանր արդյունաբերության համար: Միայն հեղափոխությունը, արտադրության գործիքների և միջոցների բանվորների և գյուղացիների կողմից ուղղակի տիրելը—պրոմատահան կանի կապիտալիզմը և կոպերատիվ շինարարության համար լայն հնարավորություն կստեղծի: Այդ պատճառով, իսկական բանվորագյուղացական կոպերացիան հրաժարվում է քաղաքական չեզոքությունից յեվ յենթարկվում է հեղափոխական կուսակցության ¹⁾ կապիտալիզմը վոչնչացնելու, հեղափոխության նվաճումները պահպանելու և սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար:

¹⁾ Խ. Ս. Հ. Միության մեջ կոմունիստներին:

Խ. Ս. Հ. Միության սպառնալիցաքիայում այս հանգամանքը «Ռոչդեյլյան կանոնների» առաջին և ամենաբազմաթիվ խոսքերից մեկն է:

Յերկրորդ փոփոխությունն այն է, վոր սպառնալիցաները, «ՆեՊ»-ի շրջանում ապրանքներ վաճառում են վոչ թե միջին շուկայի գներով, ինչպես ուղղելիները, այլ շուկայից պակաս:

Այդ արվում է նրա համար, վորպեսզի վերջնականապես թուլացվի և շուկայից դուրս քշվի մասնավոր առևտուրը: Կապիտալիզմի շրջանում սպառողական ընկերությունները, սուղ միջոցներ ունենալով, հետագա զարգացման համար դրամագլուխներ են կուտակում և այդ պատճառով ել չեն կարող գները շուկայից ավելի պակասեցնել: Պրոլետարիատի գերիշխանության միջոցին պետությունը պաշտպանում է կոպերացիան, և, այդ պատճառով սպառնալիցաները կարողանում են առանց վախի գները շուկայի գներից իջեցնել:

«Ռոչդեյլյան կանոնների»—չերրորդ փոփոխությունն այն է, վոր խորհրդային Միության սպառնալիցաները առավելություն են տալիս վոչ այնքան անգամների գնումների համար տրվող պրեմիաներին, վորքան հասարակական անբաժանելի դրամագլուխների համար զուտ ոգուտի խոշոր մասի հատկացումներին:

Ապրանքների բավ թողումը շուկայից, պակաս գներով բավարարում է սպառողի անհատական շահերը:

Հասարակական դրամագլուխների կուտակումը հիմք է ծառայում հասարակական տնտեսության համար:

«Ռոչդեյլյան կանոնների»-ի չորրորդ փոփոխությունն այն է, վոր սպառնալիցաները, համաձայնության գալով գործարանային վարչությունների հետ, բաց են թողնում իրենց անդամ-բանվորներին վորոշ գումարի ապրանքներ վարկով—ոռճկի հերթական վճարումներից յետ ստանալու պայմանով: Այս բանն արվում է՝ հեշտացնելու բանվորների դրությունը, վորոնք մինչև իրենց շաբաթական վարձագին ստանալը՝ ապրանքներ գնելու համար իրենց ձեռքին դրամ չեն ունենում: Գործարանային վարչությունը, ոռճիկները բաշխելիս, յետ է պահում բան-

վորները հաշվից վորոշ գումարներ և հանձնում ե սպառողական ընկերությունը: Մինչդեռ, ոռոգելիքները խուսափում եյին ոգտվել գործարանային վարչությունների վարկերից, և իրենք ել վոշ վորի ապառիկ բաց չեյին թողնում, վախենալով ընկնել կապիտալիստի ճնշման տակ: Բայց, վորովհետև խորհրդային Միության մեջ թե գործարանային վարչությունը և թե կոոպերացիան գտնվում են պրոլետարիատի ձեռքին, հետևապես, վերոհիշյալ տեսակի վարկավորումը չի կարող բանվորներին շահագործելու միջոց դառնալ¹⁾:

Խորհրդային իրավակարգում գործող սպառողականների և բուրժուական հասարակարգում գոյություն ունեցող սպառողականների ամենաեական տարբերությունը հետևյալն ե.

Կապիտալիզմը, սպառողականների գործունեության չտալով լայն ասպարեզ, ամեն տեսակի միջոցներով, առանձնապես բանկային վարկի ոգնությունը, իր ազդեցության ե յենթարկում կոոպերատիվ կազմակերպությունները: Կոոպերացիան կապիտալիստական կարգերում մասնավոր առևտրի նկատմամբ վոշ մի արտոնություն չունի: Կոոպերացիան, կամա թե ազամա, կապիտալի սպասարկուն ե դառնում: Խ. Ս. Հ. Միության մեջ սպառողական կոոպերացիան յենթարկում ե իր շահերը բանվորա-գյուղացիական պետության շահերին և դրա շնորհիվ կոոպերացիան ազատվում ե բուրժուական ազդեցությունից: Դեպի կոմունիզմը տանող անցողական ժամանակաշրջանում, պրոլետարիատի գերիշխանության միջոցին՝ կոոպերացիան իր գործունեության համար ահագին հնարավորություններ և լայն ասպարեզ ե ստանում: Այսպես, սպ. կոոպերացիան դառնում ե այն գլխավոր կազմակերպությունը, վոր ապրանքներ ե տանում քաղաքից գյուղ յեվ գյուղից քաղաք: Այդ տեսակետից, կոոպերացիան խորհրդային պլանային տնտեսության մեջ խոշոր և

¹⁾ Այս փոփոխությունը, բանվորական մանր-խանութային վարկը, ժամանակավոր բնույթ ունի, վորովհետև նույնիսկ խորհրդային հասարակարգում ապառիկը շատ ե կաշխատում բանվորին և դրա համար ել անհրաժեշտ ե հրաժարվել նրանից: Բանվորական վարկը վերանալու չեմիայն այն ժամանակ, յերբ աշխատավարձը բավականաչափ բարձր կլինի:

կարևոր տեղ ե բռնում: Մասնավոր առևտրի հետ համեմատած՝ կոոպերացիային մեծ վարկեր և մի շարք արտոնություններ ու առավելություններ են տրվում: Ազատելով բանվորին մասնավոր առևտրականին ավելի վճարելու, սպառողապը պահում ե նրա աշխատավարձի այն մասը, վորը, հակառակ դեպքում, մտնելու յեր առևտրականի գրպանը:

Սպառողական ընկերությունները, գյուղացուն ավելի աժան գներով և լավագույն վորակի քաղաքային ապրանքներ հասցնելով միացնում են գյուղացուությանը գնումների միջոցով, մոտեցնում են նրան բանվորին և գյուղացուության համար նոր ընդհանուր տնտեսավարության կարգի անցնելը դարձնում են ավելի հեշտ, պարզ և մատչելի:

Մի խոսքով, գործարանների, գավառների և հողի հասարակայնացման միջոցին բանվորա գյուղացիական իշխանության որերին՝ կոոպերացիան, իսկապես, աշխատում ե սոցիալիստական տնտեսության ստեղծման յեվ ամրապնդման վրա, նա դառնում ե, իսկապես, բանվոր դասակարգին սպասավորողը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1. Յույց տվեք՝ ինչ ե անում ձեր սպառ. ընկերությունն ապրանքները քաղաքից գյուղ և գյուղից՝ քաղաք տանելու համար:

2. Ընկերությունը հաշիվ ե կատարում այդ յեթե անհաշիվ — ինչո՞ւ:

ԶՐՈՒՅՑԻ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սպառողական ընկերության տերն ու տնորենը հանգիստնում ե նրա անդամների ընդհանուր ժողովը, վոր ընկերության ընթացիկ աշխատանքը դեկավարելու համար ընտրում ե վարչություն: Ընկերության գործերի ստուգման համար ընտրվում ե վերստուգիչ հանձնաժողով: ԽՍՀՄ սպառողական կոոպերացիայի սեփական միջոցները 1924 թ. հավասար եյին 95 միլիոն ռուբլու, իսկ փոխառիկ միջոցները՝ 229 միլիոն ռուբլու: Մի անդամին ընկնում ե 13 ռ. 50 կ. սեփական միջոց, վորոնց մեջ հաշված ե 2 ռ. 50 կոպ. փայավճարները:

Բոլոր սպառողական ընկերությունները 1923 թ. վաճառել են 429,013,000 ռ. ապրանք. 1924 թ. — 1,173,881,000 ռ. (միջին հաշվով մի անդամին ընկնում է 167 ռ. ապրանքի գնում):

ԾԱՆՈԹ.— Հարկավոր հիշել, վոր այս թվերը մինչ-պակերազմյան թվերի հետ համամետելիս, պետք և պակասեցնել մոտավորապես յերկու անգամ, վորովհետև ներկայումս մի ուրիշ յերկու անգամ պակաս ապրանք կարելի չէ ձեռք բերել, քան պատերազմից առաջ:

Մի ընկերությանն ընկնում է միջին թվով տարեկան 53,000 ռ. շրջանառություն (քաղաքային սպառկոող — 417,000 ռուբ. գյուղական սպառկոող — 20,000): Կոոպերատիվ գները 70/0-ով պակաս ելին մասնավորից:

Սպառողական կոոպերացիայի շրջանառությունը կազմում էր ԽՍՀ Միության ներքին առևտրի շրջանառությունների $\frac{1}{3}$ մասը: Ընդհանրապես, ժամանակակից սպ. ընկերությունների ուժը մոտենում է մինչպատերազմյան սպառկողների ուժին և շարունակվում է կոոպերացիայի զարգացումը:

ԽՍՀ Միության մեջ, կոոպերացիան, բացի առևտրից, նաև խոշոր կուլտուրական լուսավորական աշխատանք է տանում (Լուսժողկոմատի հետ միասին): Միության կոոպերացիան սերտ կապված է աջմիությունների և կուսակցության հետ ԽՍՀ Միության սպառկողերացիան տարբերվում է բուրժուական յերկիրների սպառկողերացիայից հետևյալ կողմերով.

Խորհրդային կոոպերացիան յենթարկվում է Համկոմկուսին (բ). և նրա ղեկավարությունը ու նրա աջակցությանը աշխատում է կապիտալիզմի վերջնական վոչնչացման համար:

Մինչ-հեղափոխական սպառողական ընկերությունները մեծ մասամբ կապված չեին բանվոր դասակարգի քաղաքական ուղիքների հետ և այդ պատճառով վոչ միայն չեին տապալում կապիտալիզմը, այլ, ավելի շուտ, ընկնում էին նրա ազդեցության տակ:

ԽՍՀ Միության սպառկողները, ոգավելով պետության պաշտպանությունից, առևտուր են անում շուկայի ցած գներով, վորպեսզի շուկայից վոնդեն մասնավոր առևտրին:

Մինչ-հեղափոխական ընկերությունները պահպանում էին միջին-շուկայի գները, վորպեսզի կարողանան բավականաչափ շրջանառության դրամագլուխ կուտակել:

ԽՍՀ Միության սպառկողները ձգտում են ստացած ոգուտները վերածել հասարակական-անբաժանելի դրամամագլուխների և այդպիսով նպաստել հասարակական տնտեսության զարգացմանը:

Իսկ արևմտա-յեվրոպական սպառողական ընկերությունների ստացած ոգուտի խոշոր մասը գործադրվում է վորպես անգամների գնման համար տրվող պարգևատվություն և այլն:

Վերջապես, ԽՍՀ Միության մեջ սպառկողները հնարալավորություն ունեն վարկավորելու իրենց անդամ-բանվորներին՝ ի հաշիվ նրանց ստանալիք ոոճիկների (մանր-խանութային վարկ) չհազործելով այդ դեպքում բանվորներին, վորովհետև գործարանային վարչությունները, վորոնք յետ են պահում բանվորի ոոճիկի վորոշ մասը՝ վարկը հանգցնելու համար, գտնվում են բանվորների ձեռքին, հետևապես, այստեղ զեղծալարություններ տեղի ունենալ չեն կարող:

Սպառողական կոոպերացիան հանդիսանում է քաղաքից գյուղը տանող գլխավոր ապրանքատար ապարատը և այդ տեսակետից նա ընդհանուր խորհրդային պլանային տնտեսության մի մասնիկն է:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞վ է սպառ. ընկերության բոլոր գործերի տերն ու տնորենը:

2. Ի՞նչ իրավունքներ ունի սպառ. ընկերության ընդհանուր ժողովը:

3. Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի սպ. ընկ. վարչությունը:

4. Ի՞նչ է անում վերստուգիչ հանձնաժողովը:

5. Ի՞նչ աղբյուրներից են գոյանում սպառ. ընկերության միջոցները:

6. Ի՞նչ տարբերություն կա անդամավճարների, բաժնեվճարների, ավանդների և փոխառությունների միջև:

7. Ինչպես է բաժանվում ընկերության մեջ գույք ոգուտը:
8. Վճրքան է ժամանակակից սպառնալիքներացիայի սեփական և փոխառիկ միջոցները:
9. Վճրքան է մի անդամի միջին փայտադրամագլուխը:
- 10 Վճրքան եր 1923 և 1924 թ.թ. սպառ. ընկերության շրջանառությունը:
11. Վճրքան ելին մի անդամին ընկնող միջին տարեկան շրջանառությունները նույն ժամանակակիցում:
12. Ինչ տեղ է բռնում ժամանակակից սպառնալիքներացիան յերկրի առևտրական շրջանառությունների մեջ:
- 13 Վճրագից է ստանում ապրանք ժամանակակից կոպերացիան:
14. Վճրքան պակաս են կոպերատիվ գները պետական ու մասնավոր գներից:
15. Խոշոր են սպառ. ընկերությունների ծախսերը:
16. Ինչ կուտուրական աշխատանքներ է տանում ժամանակակից սպառնալիքներացիան ԽՍՀ Միության մեջ:
17. Ինչո՞ւ ԽՍՀ Միության մեջ ժամանակակից կոպերացիան կապ ունի կուտակցության և արհմիությունների հետ:
18. Թվեցեք այն բոլոր տարբերությունները, վորոնք ունեն ԽՍՀ Միության սպառնալիքները՝ բուրժուական յերկրները՝ սպառնալիքների համեմատությամբ:
19. Ինչ տեղ է բռնում սպառնալիքներացիան ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Սպառնալիքներացիայի Սպառնալիքներացիան Հայաստանում յերկրի վրա կար կյանք չունի: Նրա գոյություն 25-ամյակը լրացել է անցյալ 1926 թ.: Սպառնալիքներացիայի պիտները հանդիսանում է Մեղրիի սպառնալիք, վորը հիմնվել է 1901 թվի առաջին կիսամյակում:

Սպառնալիքներացիան սկսում է արագ թափով զարգանալ և ծավալվել համաշխարհային պատերազմի տարիներին: Այսպես որինակ, առ 1-ն հունվարի 1917 թ. նախկին Յերևանի նահանգում գործում էին.

Յերևան	քաղաքում	3 սպառնալիք
»	գավառում	6 »
Եջմիածնի	»	3 »
Սուրմալիի	»	5 »
Շարուր-Դարալագյազի	»	3 »
Ալեքսանդրապոլի	»	12 »
Նախիջևանի	»	5 »
Նոր-Բալաղեզի	»	4 »

Ամբողջ նահանգում 41 սպառնալիք

Հետագա զարգացումը Հետագա յերկու տարում սպառնալիքներացիայի սկզբնական ցանցն ավելի ևս սկսում է ծավալվել ու խտանալ: Պարենավորման սուր և յերկա-

քառե տագնապն ուժեղ խթան է հանդիսանում սպառնալու-
րացիայի արագ զարգացմանը: Առ 1-ն հունվարի 1918 թ. գոր-
ծում էլին արդեն 196 կոոպմիավոր:

Յերևան քաղաքում	26	սպառնալու
» Գավառում	39	»
Եջմիածնի	»	39
Նախիջևանի	»	28
Շարուր-Դարալագյազի	»	24
Սուրմալիի	»	20
Նոր-Բայազեդի	»	20

Ամբողջ նահանգում 196 սպառնալու

Բացի դրանից՝ Լենինականի «Շիրակ» գավառում թիվ 1-ի
մեջ էլին մտնում 60 ընկերություն: Այդպիսով յերևու տար-
վա ընթացքում սպառնալուների թիվը հասնում է 256-ի կամ
6,2 անգամ ավելի նախորդ շրջանից:

Պատերազմի արհամիրքների հետևանքով՝ 1918 թ. ըն-
թացքում սպառնալուների թիվը միազանգամից նվազելով՝ հա-
սում է 27-ի:

Աճկումը

Հաջորդ 1919—20 թ. թ. սպառնալու-
րացիան սկսում է վերակազմվել ու գործել:
Բայց «վերածնված կոոպերացիան» այնքան եր տնտեսապես
ու կազմակերպչորեն քայքայվել ու ալլանդակվել, վոր սնան-
կություն ու վերջնական անկման դրանք եր կանգնել:

1920 թ. վերջերին, Հայաստանի Խորհրդայնացման նա-
խորդակին, սպառնալուրացիայի ցանցն անվանապես բաղկա-
ցած եր 290 սպառնալուից՝ 112,325 անդամներով:

Յերևան քաղաք	8	սպառնալու	11,478	անդամ
» Գավառում	54	»	11,548	»
Եջմիածնի	»	48	»	14,878
Նոր-Բայազեդի	»	14	»	4,092
Սուրմալիի	»	11	»	2,666
Լոռի-Փամբակի	»	25	»	14,686
Լենինականի	»	93	»	29,125
Դիլիջանի	»	22	»	11,535

Կարս-Կաղզվանի	»	5	»	6,772
Զանգեզուրի	»	1	»	490
Յերևան-գծի	»	1	»	5,225

Հայաստանում այդ անցողական շրջանում սպառնալուրա-
ցիան ծավալվում եր ի վրաս իր խորացմանը: Սպառնալուները
հանդիսանում էլին տնտեսապես զանազան թույլ կազմակեր-
պություններ:

Չնայած կոոպերատիվների, ըստ յերևույթին, չափազանց
խիտ ցանցին՝ կոոպկազմակերպությունները մատնված էլին
անգործության: Սեփական ֆինանսների և ապրանքի բացակա-
սանքի բացակայությունը, յերկրի տնտեսության աղետալից պայ-
մանները, ուղբուլ արժեքի գլխապտույտ անկումը, հաղորդակ-
ցության միջոցների անկանոն վիճակը և մի շարք այլ հանգա-
մանքներ՝ ստեղծել էլին սպառնալուրացիայի համար անելա-
նելի ու կատաստրոֆիկ վիճակ:

Ռազմական կոմուն- Սպառնալուրացիան Հայաստանի խոր-
հրդայն ցրճանում հրդայնացման առաջին ամիսներին ապրեց
ռազմական կոմունիզմի վերջին ետապը:

Սորհրդային իշխանությունն իր հատուկ վորոշումներով՝
(1920 թ. դեկտ. 7-ին) հիմնական վերակազմություն յենթար-
կեց գոյություն ունեցող սպառնալուները և նրանց կենտրոնա-
կան միությունը — «Հայկոոպ»-ը: Գավառական սպառնալուները
և նրանց միությունները միանգամայն անհամապատասխան լի-
նելով ՀԽՍՀ Հանրապետության կարիքներին և ավյալ մոմենտի
պահանջներին՝ Պարթոկոմի հատուկ կարգադրությամբ լուծ-
ված են համարվում: Լենինականի (նախկին Սյեքպոլի), Ղա-
մարվի, Դիլիջանի, Լոռու և Նոր-Բայազեդի կոոպերատիվ միու-
թյունները վերածվում են Հայկոոպի գավառական բաժանմունք-
ների: Բացի դրանից հրահանգվում է այդ միություններին՝ հաշ-
վել իրենց ամբողջ գույքն ու ապրանքները, վորոշել իրենց ալ-
տիվն ու պատսիվը և այդպիսին անհապաղ (մինչև առ 1-ն հուն-
վարի 1921 թ.) հանձնել Հայկոոպի նորակազմ վարչության
իսկուրներին: Վարկային կոոպերատիվների Միությունը — «Հայ-
վարկ»-ը նմանապես ձուլվեց Հայկոոպի հետ՝ հանձնելով վեր-

ջինին իր պարտքն ու պահանջը (12 միլիոն թղթադրամ կամ կամ մոտ 1,000 ու. փոսկու հաշվով)։

«Հայվարկ» ին անդամագրված փոխառու-խնայողական և վարկային կոոպերատիվներն իրենց հերթին պետք է ձուլվեյին Հայկոոպի տեղական բաժանմունքներին հետ։

Այսուհետև սպառնալից կոոպերացիան ժամանակավորապես առաջնորդվելու չեր ՌՍՖՍՀ, 1919 թ. մարտի 20-ի սպառնալից կոոպերացիային վերաբերող դեկրետով։

Պարտոդկոմին կից կազմված կոոպերացիայի Գլխավոր վարչությունը ղեկավարում էր կոոպերատիվ գործը. իր շրջաբերական-հրահանգի մեջ առաջարկում էր բոլոր կոոպիկազմակերպություններին, ա) վորպես բաշխման ու հայթայթման ապարատներ՝ չենթարկվել Պարտոդկոմի անմիջական կարգադրություն. բ) կոոպերատիվների ներքին կառուցվածքը թողնվում է նույնը, պահպանվում է ընտրողական սիստեմը և ժողովրդի ինքնագործունեությունը կոոպերացիայի ասպարիզում։

Այդպիսով սպառնալիցները վերածվում են Պարտոդկոմի՝ պարենավորման ղեկավար որդանի՝ մատակարարման ու բաշխման սեկցիաների, վորոշ չափով պահպանելով իրենց ինքնուրույնությունը։

Սպառնալիցերացիան Նոր տնտեսական քաղաքականությունն «ՆԵՊ»-ի օրհանգում ազատեց սպառնալիցերացիան ազգական կոմունիզմի կաշկանդումներից։ Կոոպերացիայի իրավունքներն ու անելիքները ձևակերպվում են ՀԽՍՀ Հանրապետության 2 դեկրետներով (1921 թ. հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի), վորոնք սպառնալիցերացիային տալիս են ինքնուրույն և ինքնավար կառավարվելու թյան բնույթ։

Խորհրդային իշխանությունն առաջադրեց իր բոլոր որդաններին, վոր ձեռք առնեն բոլոր հնարավոր միջոցները՝ վորպեսզի ուժեղանա և խորանա կոոպերատիվ շինարարությունը՝ գյուղացական և բաղադրային տնտեսությունների բնագավառում։

1921 թ. վերջերին սկսվում են ուժեղ թափով կոոպերացիայի միավորների և Հայկոոպի վերակազմակերպչական աշ-

խատանքները։ Շատ կարճ ժամանակամիջոցում ստեղծվում է կոոպերատիվ ցանց, վորը բաղկացած էր 121 սպառնալից։

1. Լոռի-Փամբակի գավառում	31	միավոր
2. Լենինականի	20	»
3. Յերևանի	12	»
4. Եջմիածնի	6	»
5. Նոր-Բայազետի	11	»
6. Դիլիջանի	16	»
7. Դարալագյազի	—	»
8. Չանգեզուրի	23	»
9. Մեղրիի	—	»

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքի վրա, վոր սպառնալիցերացիան Հայաստանում դեռևս հիմնովին չէր կազմավորվել, դեռևս չէր գտել իր կազմակերպչական անշեղ ուղին և չէր ստեղծել իր համար կայուն դրություն։

Սպառնալիցները և նրանց միությունը—Հայկոոպը «ՆԵՊ»-ի առաջին յերկու տարին զբաղված էին բացառապես ապրանքափոխանակությամբ։

1921—22 յերկամյակում Պարտոդկոմատը հանձնում է Հայկոոպին և նրա միավորներին հետևյալ ապրանքները.—

Մանուֆակտուրա	20,000	արշին — 55,500	ռուբ.
Քարալ	11,500	փուլ — 4,025	»
Գերանդի և մանգաղ	4,000	հատ — 2,000	»
Սապոն	340	փուլ — 1,500	»
Չանագան ապրանքներ	—	9,411	»

Ընդամենը = 72,436 ռուբ.

Սա կազմում էր կոոպերացիայի ապրանքափոխանակման ֆոնդը։

Պարտոդկոմատին հետզհետե հանձնվում է հայթայթած մթերքներից հետևյալ քանակությամբ.—

Հացամթերքներ	10,000	փուլ.
Ցուլ	400	»
Զոր մրգեղեն	2,500	»

Սպառն 1,600 »

Բուրդ և բամբակ 1,000 »

Հանձնած ապրանքների ընդհանուր քանակը հասնում էր մոտավորապես 53,000 փ.:

Սպառնություններից ապրանքափոխանակման շրջանում կատարեց անփոխարինելի դեր պարենավորման ասպարիզում:

Սպառնություններից Սպառնություններից վերջին բառամ-վերելք (1923 — յակում բռնեց վերածնման և կազմակերպ-1926 բառամակում) չական շինարարական անմիջական ուղին:

Հայաստանում կոոպերատիվ շարժումը ստացել էր մաս-սայական բնույթ: Մեր յերկրի աշխատավորական զանգված-ները փարվել են կոոպերացիային և դարձրել այն իրենց ամե-նահարազատ կազմակերպությունը:

1923 — 1926 թ. թ. սպառնություններիցիայի ցանցը բաղկացած էր հետևյալ միավորներից. —

№	ՍՊԱՌԿՈՊՆԵՐ	1923 թ.		1924 թ.		1925 թ.		1926 թ.		Աճումը % / %	
		Այս- կողմ	Խա- նութ.	Այս- կողմ	Խա- նութ.	Այս- կողմ	Խա- նութ.	Այս- կողմ	Խա- նութ.	Այս- կողմ	Խա- նութ.
1	Գյուղական . .	35	38	57	91	57	176	69	201	50,7	574,2
2	Գործարանային . .	5	10	2	8	2	14	3	18	66,6	225—
3	Գավկոոպներ . .			7	25	7	51	7	57	71,4	228—
4	Բանվ. կոոպեր . .	3	12	2	34	2	35	2	33	66,6	291,6
Ըստ Հանրապետ.		43	60	68	158	68	276	81	309	53,1	515

Վերոհիշյալ աղյուսակից յերևում է, թե վորքան ուժեղ թափով է զարգանում և խտանում սպառնություններիցիայի ցանցը Հայաստանում: Այստեղ ուշադրություն արժանի չե մի կարե-վոր հանգամանք, վոր այն դեպքում, յերբ կոոպերատիվները խտացել են միայն 188,4⁰/₀, մինչդեռ կոոպիսանությունները՝ 515⁰/₀:

Այսպիսով բազմախանութային սիստեմը գերակշռում է սպառնություններիցիայի սիստեմում:

Այժմ ծանոթանանք սպառնություններիցիայի անդամների թվի աճման հետ:

№	ՍՊԱՌԿՈՊՆԵՐ	1923 թ.		1924 թ.		1925 թ.		1926 թ.	
		Բա- ցար- ձակ	%	Բա- ցար- ձակ	%	Բա- ցար- ձակ	%	Բա- ցար- ձակ	%
1	Գյուղ. Սպառնություն.	4.280	100	13.269	310	27.061	632,3	42.448	991,7
2	Գործարանային . .	—	—	926	100	2.483	268,1	3.852	415,8
3	Գավ. կոոպերներ . .	1.784	100	4.176	234,1	7.065	395,8	8.827	494,8
4	Բանվորական . .	2.000	100	7.033	351,6	9.198	459,9	10.622	531,1
Ըստ Հանրապետ.		8.064	100	25.404	315	45.807	568	65.749	815,3

Այդպիսով սպառնությունների տոկոսային աճումը 1923 թ. հետ համեմատած բարձրացել է 815,3⁰/₀: Առավելապես աճել է գյուղկոոպների (991,7⁰/₀), բանկոոպների (531,1⁰/₀) և ապա գավկոոպների (494,8⁰/₀): Նշանակում է սպառնություններիցիայում անդամների թվի աճումն ընթանում է միանգամայն նորմալ ընթացքով:

Այժմ ծանոթանանք կոոպերացիայի աստիճանի և ծավալման հետ.

№	Գ. Ա. Վ. Ա. Ռ. Ն. Ե. Բ.	Տեսակետ- թյունների թիվը	1925 թ.		1926 թ.	
			Անդամ- ներ	Կոո- պեր. % / %	Անդամ- ների թիվը	Կոո- պեր. % / %
1.	Յերևանի գավառ . . .	26,288	7,629	29,0	11,823	45,0
	Յերևանի բանկոոպ . . .	11,068	6852	61,9	8003	72,3
	Գավառում . . .	37,356	14,481	38,8	19,826	53,1
2.	Լենինականի գավառ . .	26,468	3,314	12,5	4,548	17,2
	Լենինականի բանկոոպ . .	8,175	2,346	28,7	2,619	32,0
	Գավառում . . .	34,643	5,660	16,3	7,167	20,7
3.	Եջմիածնի գավառ . . .	27,317	7,272	26,6	10,140	37,1
4.	Լոռի-Փամբակի . . .	22,942	5,175	22,6	7,806	34,0
5.	Դիլիջանի . . .	14,425	4,772	33,1	7,662	53,1
6.	Ն. Բալայեանի . . .	18,684	1,867	10,0	3,981	21,3
7.	Զանգեզուրի . . .	14,048	4,242	30,2	6,031	42,9
8.	Դարբասի . . .	6383	1858	29,1	2,366	37,1
9.	Մ. Ե. Գ. Ռ. Ե. . . .	1,853	576	31,1	771	41,6
Ընդամենը . . .		177,651	45,903	25,8	65,750	37,0

Ընդհանուր առմամբ ամբողջ հանրապետության սահմաններում կոոպերացումը հետևյալ կերպով է աճել 1923—1926 թթ. քառամյակում.

Տարիներ	Տնտեսությունների թիվը	Անդամների թիվը	Կոոպերացման %
1923 թ.	177,651	8.064	4,5
1924 »		25.404	14,3
1925 »		45.807	25,8
1926 »		65.749	37,0

Դժբախտաբար մեր ձեռքի տակ չկա վերջին քառամյակում տնտեսությունների աճման աղյուսակը: Վերջին մարդահամարի արդյունքները նույնպես վերջնականապես ստուգված և ձևակերպված չեն դեռևս: Այդ պատճառով ել մեր տնտեսությունների թիվը թողել ենք անփոփոխ: Բայց և այնպես Հայաստանի կոոպերացման աստիճանն անհամեմատ բարձր է մյուս հանրապետություններից:

Այժմ ծանոթանանք սպառկոոպերացիայի փայլադրամագլխի և միջին փայլավճարի աճման հետ:

№	ՍՊԱԿՈՊՆԵՐ	1923 թ.		1924 թ.		1925 թ.		1926 թ.	
		Փայ-դրամ.	%	Փայ-դրամ.	%	Փայ-դրամ.	%	Փայ-դրամ.	%
1.	Գյուղական . . .	26.750	100%	65.000	242,9	77.760		141.188	
2.	Գործարանային . . .					9651		16.551	
3.	Գավ. կենտ.					25.735		34.397	
4.	Բանկոոպներ					23.708		43.130	
Ըստ Հանրապետ. . .		26.750	100	65.000	242,9	136854	511,8	235266	879,5

Սպառկոոպերացիայի փայլադրամագլխի աճումը կատարվել է անհամատալի արագությամբ: Հենց իսկ 1925 թվականի վերաբերմամբ աճել է փայլադրամագլուխը.

Գյուղկոոպներում 181,5 %
Գործկոոպներում 171,4 »

Գավկոոպներում 133,6 »

Բանկոոպներում 181,9 »

Նույն համաչափությամբ աճել է անդամների միջին փայլավճարները 1925—1926 թթ.:

№	ՍՊԱԿՈՊՆԵՐ	1925 թ.		1926 թ.	
		Միջին փայլավճ.	%	Միջին փայլավճ.	%
1.	Գյուղական . . .	2,86	100	3,35	117,1
2.	Գործարանային . . .	3,89	100	4,30	110,5
3.	Գավ. կենտ.	3,64	100	3,77	105,5
4.	Բանկոոպներ	2,58	100	4,06	157,3
Ըստ Հանրապետ. . .		2,98	100	3,58	120,1

Անշուշտ փայլավճարների աճումն ընթանում է անհամեմատ դանդաղ: Ինչպես հայտնի չէ, ներկայումս կոոպկենտրոնները տանում են փայլավճաների զանգվածի և ավելացման հատուկ կամպանիաներ, վորոնք անպայման հաջող հետևանքներ են տալու:

Այժմ ծանոթանանք սպառկոոպների տարեկան և միջին շրջանառությունների հետ:

Տարիներ	Տարեկան շրջանառութ.	Միջին շրջանառութ. (միջին)	
1923 թ.	1.116.000	100%	93.000
1924 »	5.400.000	483,8	450.000
1925 »	8.612.156	771,7	717.679
1926 »	13.564.968	1225,4	1.130.414
Գումար. . .	28.694.124		597.776

Սպառկոոպերացիայի ապրանքային շրջանառության այս հսկա աճումը պարզորեն ցույց է տալիս այն անփոխարինելի դերը, վոր ներկայումս կատարում է ընդհանրապես կոոպերացիան Հայաստանի տնտեսա-առևտրակ ն ասպարիզում:

Այժմ տեսնենք, թե սպառկոոպերացիան ներկայումս ինչ մասնակցություն ունի Հայաստանի առևտրի ասպարիզում:

Տարիներ	Առևտրի տեսակը	Ընդամենը	Մասնավոր	Պետական	Կոոպերատիվ	Պետական և կոոպերատիվ միասին
1923—24 թ.	Մեծաքան.	100	17,3	74,5	8,2	82,7
	Մանրածխ.	100	61,5	7,7	30,8	38,5
1924—25 թ.	Մեծաքան.	100	14,4	75,0	10,6	85,6
	Մ.	100	45,7	9,4	44,9	54,3
1925—26 թ.	Մեծաքան.	100	10,1	71,2	18,7	89,9
	Մանրածխ.	100	39,3	11,7	49,0	60,7
1926—27 թ. (յենթադրվ.)	Մեծաքան.	100	9,0	70,0	21,0	91,0
	Մանրածխ.	100	36,5	11,9	51,6	63,5

«Մասնավոր առևտրական կապիտալի դեմ կռիվը, — գրում է ընկ. Հ. Ազատյանն իր «Հայաստանի խորհրդայնացման 6-րդ տարեդարձը» գրքում, — գլխավորապես սպառողական կոոպերացիան է, վորը հաջողացրել է արդեն իր ձեռքում կենտրոնացնելու մեծաքանակ առևտրի 18,7%-ը և մանրածախ առևտրի 49%-ը, այսինքն իր գործունեությունը բնագավառում մեր տնտեսության սոցալիստական տարրերից մեկի զարգացմանն ուժեղ զարկ է տվել»:

ԻՆՏԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ

Բնակարանային կարիքը Արդյունաբերություն և նրա հետ կապված մեծ քաղաքների զարգացումն առաջ է բերում քաղաքային, առավելապես, բանվորական ազգաբնակչության աճումը: Վերջին դարում Արևմտյան Յեվրոպայի խոշոր քաղաքների ազգաբնակչությունն աճել է 3,600,000-ից մինչև 36,000,000, այսինքն՝ 10 անգամ ավելի:

Կապիտալիստական կարգերում քաղաքային հողերը և նրանց վրա յեղած շենքերն ընկել ենին մասնավոր սեփականա-

տերի, ազգաբնակչության ունեւոր մասի ձեռքը: Չբավորները և բանվորները տարեցտարի քշվում են քաղաքի ծայրամասերը և ընկնում բնակարանային ամենածանր պայմանների մեջ:

Ֆ. Ենգելսը, դեռևս 1872 թ., մատնացույց էր անում այն հանգամանքը, վոր բնակարանային կարիքը պատահական, ժամանակավոր լերևույթ չէ, ընդհանրապես, այդ յերնվույթը կապիտալիստական տնտեսությունից անխուսափելի ուղեկիցն է: «Բանվորները մասսաներով կենտրոնանում են քաղաքներում ավելի արագ, քան ավելանում է հարկավոր բնակարանների թիվը: Շնորհիվ այդ հանգամանքի, ամենակեղտոտ խոզաբուհն էլ վարձողներ ունի»:

Կապիտալիստական հասարակարգում ստեղծված բնակարանային կարիքի աստիճանը հետևյալ որինակներից կերևա. — 1902—1912 ժամանակաշրջանում այն տնվորների թիվը, վորոնք միայնակ ապրում են տնտեսների բնակարաններում, ունենալով մի-մի մահճակալ, Մոսկվայում 175 000 մարդուց հասավ մինչև 300,000-ի (համարյա կրկնապատիկը): 1912 թ. այդ թախտաբնակ-խցաբնակ տնվորները կազմում էին քաղաքի վողջ ազգաբնակչության $\frac{1}{5}$ մասը: Յուրաքանչյուր սենյակին ընկնում էր 10 «թախտաբնակ»: Այդ տնվորների $\frac{3}{10}$ մասն ապրում էր խոնավ բնակարաններում, վորոնց կեսը բուրովին չէր տաքացվում:

Զարմանալի չէր, վոր Մոսկվայում տարեկան մահացողությունը յուրաքանչյուր հազար բնակչին ընկներ 28 հոգի: Գործարանային բնակավայրերի բանն ավելի վատ էր:

Բախմուտի շրջանում 1910 թ. բանվորական բնակարանների $\frac{4}{10}$ մասը խոնավ և ցուրտ կիսանկուղներ էին. բնակարանների $\frac{2}{3}$ մասը հողի հատակներ ունեյին, իսկ $\frac{3}{10}$ մասը զուրկ էին առաստաղներից:

Արևմտյան Յեվրոպայում, բնակարանային պայմանները վորոշ չափով բարելավված են, բայց և այնպես, բնակարանային կարիքը չափազանց խոշոր է: Այդ յերևում է հենց այն բանից, վոր Բերլինում գոյություն ունեն բազմաթիվ տներ, վորտեղ վարձով են տրվում «գիշերային անկյուններ», փայ-

տյա «Թախտեր», վորոնց վրա հնարավոր է քնել մի քանի ժամով: Այդպիսի «Թախտեր»-ի վրա տեղ են գտնուում մի գիշերվա մեջ մի քանի «տնվորներ»:

Պատերազմը և նրա հետևանքներն ավելի սրեցին բնակարանային կարիքը: Այն վայրերում, վորտեղ պատերազմական գործողություններ եյին տեղի ունենում, կործանվեցին յերկու միլիոնից ավելի շենքեր: Միայն Ֆրանսիայում հրետանիներով 600 հազարից ավելի շինություններ քանդվեցին:

Նոր տների կառուցումը բոլորովին դադարեց: Անգլիայում, վորպեսզի կառուցվեն այնքան շենքեր, վորքան չեն կառուցվել պատերազմի տարիներին և բավարարեն ազգաբնակչության բնակարանային ամենակենսական պահանջը, անհրաժեշտ է միանգամից կառուցել 500,000 տուն, ապա տարեկան ավելացնել դարձյալ 100,000 տուն:

ԽՍՀ Միություն մեջ, 10 տարվա ընթացքում—1914 թ. մինչև 1924 թ. ավելացել է 200,000-ից ավելի տուն: Յերբ այդ տները դասավորելու լինենք մի տեղում, կստացվի մի քաղաք, վոր $3\frac{1}{2}$ անգամ մեծ կլինի Մոսկվայից:

Ավերված տների փասը հաշված է 8 միլիարդ վոսկի ռուբլի: Յեթե ՌՍՖՍՀ բաղադրային ազգաբնակչությունը տեղավորելու լինենք նույն իսկ բնակարանային ամենավորը մակարդակի վրա, վոր բժշկական գիտությունը կարող է թույլ տալ, դարձյալ հարկավոր կլինի յեղած բոլոր տների $\frac{1}{4}$ -ի չափով նորից կառուցել, վոր կարժենար 3 միլիարդ ռուբլուց վոչ պակաս:

Կապիտալիստները և գործարանատերերը կազմակերպում են իրենց ձեռնարկություններին կից բանվորական բնակավայրեր: Արևմտյան Յեվրոպայում այդ բնակավայրերից մի քանիսը հասել են բարեկարգության ամենաբարձր աստիճանին (որինակ, Գերմանիայում՝ Կրուպպի գործարանին կից բնակավայրը):

Բայց բանվորները հոժար կերպով չեն մտնում այդ «վոսկեգոծ վանդակները», վորովհետև նրանք շատ լավ հասկանում

են, թե կապիտալիստը, բանվորների համար այդ տները կառուցելիս, ինչպիսի գիտավորություններ է ունեցել:

Վերջերս ամերիկական գործարանատեր Ֆորդը անկեղծորեն արտահայտվել է բանվորական բնակավայրերի մասին: Նրա հաշվով, գործարանում մի բանվորին մյուսով փոխարինումը ձեռնարկության նստում է մի քանի հարյուր ռուբլի, վորովհետև հարկավոր է վորոշ ժամանակ, վորպեսզի նորեկը սովորի աշխատակցել իր ընկերների հետ, ընտելանա նոր մեքենային ու նոր կարգերին և այլն: Մի չեղանակով միայն հնարավոր է խուսափել հաճախակի փոփոխումներից—կապել բանվորին գործարանի հետ աքսորի շղթաներով, վոր անվանում են «բարեկարգ քնակարան»: Սովորական տնակը, պարտեզը և մյուս բարիքները պահպանելու համար, վոր տալիս է բանվորին գործարանը, նա ստիպված է կապիտալիստի հետ ընդհարումներ ունենալու գեպքում մի շարք զիջումներ անել նրան:

Բնակարանային կարիքը միայն բանվորներին չի ընդգրկելու, նա համարում է միջին շերտերին—ծառայողներին, գինվորներին, բժիշկներին, մանր առևտրականներին և այլոց: Այդ խավերն ունեն վորոշ ազատ միջոցներ, ունեն վորոշ վարկ բանկերում, վորը հնարավորություն է տալիս միացյալ միջոցով նոր շինություններ ստեղծել:

Բնակարանային կոպերատիվները, վորպես բնակարանային կարիքի դեմ պայքարելու մի միջոց, առաջ են դալիս մանրբուրժուական շրջանում, համարյա սպառողական ընկերությունների հետ միասին: Բանվորական կազմակերպությունները նույնպես սկսում են աստիճանաբար հիմնել իրենց բնակարանային կոպերատիվները:

Այդպես է առաջ դալիս բնակարանային կոպերացիան: Նրա հայրենիքը Անգլիան է, XIX դարում արդյունաբերության զարգացման տեսակետից ամենաառաջնակարգ յերկիրը, հետևապես, բնակարանային կարիքն ավելի խիստ զգացող մի յերկիր:

Բնակարանային

կոպերացիան

Մեծվմբյան

Յեվրոպայում

Անգլիական բնակարանային առաջին ընկերություններն իրենց կազմակերպչական կառուցվածքով նմանում են սովորական մասնավոր բանկերին: Այդ ընկերու-

թյուններն ընդունում եյին փայեր և ավանդներ, առնում և վաճառում եյին քաղաքներում հողամասեր և շնորհիվ քաղաքային հողերի գների աճման՝ նրանք ձեռք եյին բերում իրենց համար բավականին խոշոր գրամագուլիսներ: Ընկերությունների անդամներին սեփական տներ կառուցելու համար՝ ունեցած ազատ միջոցներից (վորոնք ստացված եյին անաշխատ ճանապարհով) յերկարատե փոխառություններ եյին լինում:

Անպիայում, պատերազմից առաջ, գոյություն ունեյին 2500 բնակարանային ընկերություններ՝ 600 միլիոն գրամագուլիս: Ամերիկայում այդպիսի ընկերություններն ունեյին 1 միլիարդ ուռլի գրամագուլիս և իրենց գոյության ընթացքում միջոցներ են մատակարարել անդամներին 400,000 տներ գնելու համար: Այդ կոոպերատիվները չեն ընդգրկում բանվորական մասսաներին:

Գերմանական բնակարանային ընկերություններն ավելի մատչելի չեն ազգաբնակչության լայն խավերին^{*)}: Այդ ընկերություններն իրենք զբաղվում են տների կառուցումով և իրավունք ունեն սեփականացնել կառուցած տները: Ընկերությունների անդամները բնակարանից ոգտվելու առավել իրավունք ունեն:

Ընկերությունների հիմնական միջոցները կազմում են մասնավոր բանկերում դրված տների գրավականը և տնվորանդամների բնակարանավարձը: Այդպիսով բնակարանային կոոպերացիան այս զեպքում կախումն ունի մասնավոր կապիտալից:

1913 թ. Գերմանիայում գոյություն ունեյին բնակարաններ կառուցող 1,157 կոոպերատիվ: Նրանք կառուցել են 25,000 տուն 100,000 բնակարաններով (յուրաքանչյուր բնակարանը՝ 3—4 սենյակից և խոհանոցից բաղկացած): Բնակ. կոոպերատիվների փախադրամագուլիսը 20 միլիոն ուռլուց ավելի չեր, իսկ փոխառիկ գրամագուլիսը՝ 180 միլիոն ուռլի չեր:

^{*)} Գերմանական բնակարանային ընկերության անդամ լինելու համար, պետք է մտցնել 50 կոպեկ անդամավճար և աստիճանաբար ձեռք բերել գոնե մի փայ, վոր արժե 100 ուռլի: Անդամը, կես տարի մնալով ընկերության մեջ, իրավունք ունի բնակարան ստանալու:

Այն քաղաքներում, վորտեղ զարգանում է բնակարանային կոոպերացիան, այնտեղ բնակարանի վարձը 10—25% -ով իջնում է:

Գերմանական ընկերության նման կազմակերպվում եյին ուսական միջպատերազմյան շրջանի բնակարանային կոոպերատիվները: Նրանք ավելի շատ զարգացան Կիյեվում:

«Այգեստան-բաղաբ-Նարկապոր է նկատել, վոր այն տեղ, վորտեղ բնակարանային կոոպերատիվները խոշոր հողային տարածություն են բռնում, նրանք շրջապատում են իրենց շենքերը պարտեզներով, անց են կացնում լայն փողոցներ, վորոնք պատած են ծառերով, հրապարակներում շինված են լինում ծաղկանոցներ, փոքրիկ անտառային պուրակներ և այլն: Ստեղծվում են, այսպես կոչվող «այգեստան-քաղաքներ», վորոնք ահազին առավելություններ ունեն հին, ձանձրալի տեսք ունեցող, կեղտոտ, ցեխոտ և աղմկալից քաղաքների հանդեպ: «Այգեստան-քաղաքը» քաղաքի ազգաբնակչությանը լավ ող, շուր և կանաչ է տալիս: Ամենահայտնի «այգեստան-քաղաքներից» մեկն ընկած է իտալական Միլան քաղաքի մոտերքը և կոչվում է «Միլանինո»:

Այդ, դեռևս սակավաթիվ «այգեստան-քաղաքները» պարզապես ցույց են տալիս, վոր ապագայում վորքան պետք է փոխվի քաղաքի ամբողջ տեսքը, յերբ նրա շենքերը կառուցվեն վոչ թե մասնավոր սեփականատերերի շահերը, այլ ազգաբնակչության պահանջները բավարարելու համար:

Բնակարանային կոոպերացիան կարող պեռացիան կապիտալի, արդյուր, լուծել բնակարանային հարցը լիսակա կարգերում բանվորների ոգտին՝ կապիտալիստական հասարակարգում: Բնակ. կոոպերացիայի զարգացման հանդեպ ծառացած են յերկու խոչընդոտ. առաջինը՝ քաղաքապետական հողերի մասնավոր սեփականությունը յեվ գների աճումը. յերկրորդը — բավական չափով բնակարանների կառուցման համար անհրաժեշտ միջոցների բացակայությունը:

XIX-րդ դարի վերջում քաղաքային հողերի գների աճումն անհավատալի չափերի հասավ:

Հոնդոնի առևտրական քաղաքաժամանակ (Միտի), մի քառասուն հոդամասը տասնյակ հազարներ արժեք: Մոսկվայում, պատերազմից առաջ, ցանկապատված մի փոքրիկ փողոցի մեջտեղ ընկած հողամասը (Կուզնեցկի պոստ) 3—4 քառասուն տարածությունը, վոր պատահաբար մնացել էր իբրև իր տիրոջ սեփականություն (Ն. Ա. Խոմյակովներին), ծախվեց քաղաքին 40 հազար ռուբլիով:

Այդ պատճառով բնակարանային կոոպերացիան հնարավորություն ունի կառուցելու տներ միայն քաղաքի հեռավոր ծայրամասերում, և այդ ել՝ այն դեպքում, չեթե քաղաքի վարչությունն ընդառաջ է գնում կոոպերացիային:

Ավելի դժվար է միջոցների խնդիրը:

Բնակարանային կոոպերացիան այն դեպքում, չեթե չի ըզբաղվում բանկային գործարքներով, հողային սպեկուլացիայով, չի վաճառում և վարձով չի տալիս մասնավոր մարդկանց իր շենքերը, այսինքն՝ չի շեղվում իր անմիջական նպատակներից և չի վերածվում կապիտալիստական կազմակերպության, նրա վիճակը, դրամական միջոցների տեսակետից, չափազանց ծանրանում է: Բնակարանային կոոպերատիվները, կապիտալիստական կարգերում, չնայած բանվորական կազմակերպություն-կան կարգերում, չնայած բանվորական կազմակերպություն-ների վարկավորման (որինակ, Գերմանիայում՝ ապահովագրական գանձարկղները), պետական բնակարանային ֆոնդերի կազմակերպման (Ավստրիա) կամ հատուկ բանկեր հիմնելուն (Բելգիա), — չեն կարողանում բավարարել բանվորների բոլոր կարիքները:

Բավական է մատնանշել, վոր այնպիսի համեմատաբար հարուստ յերկրում, ինչպիսին է Բելգիան, վորտեղ բանվորական կազմակերպությունների ազդեցությունը շատ խոշոր է, 1912 թ. փոխառություններ են բաց թողնված ընդամենը 57 հազար տների կառուցումների համար, մինչդեռ շինարարական պահանջը 350,000 տներից ավելի յեր:

Այդ պատճառով, իրավացի յեր գրում Ֆ. Ենգելսը, թե կապիտալիստական հասարակության մեջ բանվորների համար անխուսափելի բնակարանային կարիքը «կարելի չէ վերացնել

միայն այն դեպքում, յերբ այն հատարակարգը, վորի մեջ առաջացել է այդ կարիքը, հիմնովին վերափոխվի»:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Նկարագրեցեք բանվորի բնակարանային պայմանները կապիտալիստական կարգերում:

Բնակարանային կոո- Ս. Ս. Հ. Միության սահմաններում պերացիան Խ. Ս. Հ. բնակարանային կոոպերացիան զարգանում Միության մեջ է բոլորովին տարբեր պայմաններում քան կապիտալիստական հասարակության մեջ:

Նախ և առաջ, վորնչացված է հողի յեվ քաղաքային շենքերի խոշոր մասի մասնավոր սեփականությունը: Յերկրորդ, բոլոր դրամական միջոցները կենտրոնացած են բանվորա-գյուղացիական պետության ձեռքին: Այդպիսով, վերացված են այն բոլոր արգելքները, վորոնք կապիտալիզմի ժամանակ ծառանում էին բնակարանային կոոպերացիայի հանդեպ: Միայն իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի ընդհանուր քայքայման հետևանքներն են խանգարում բանվորական բնակարանային շինարարության արագ զարգացումը:

Խորհրդային բնակարանային կոոպերատիվները բաժանվում են յերկու կարգի. բնակարանա-վարձակալական յեվ բնակարանա-շինարարական ընկերությունների:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Սորհրդի 1924 թ. ոգոստոսի 19-ի վորոշման համաձայն. «բնակարանա-վարձակալական կոոպերատիվ ընկերությունները կազմակերպվում են մունիցիպալիզացիայի (քաղաքայնացման) յենթարկված շենքերի ոգտադործման նպատակով, վոր սեզական անտեսության կողմից վարձով տրվելու յե կոոպերատիվներին¹⁾»:

Այդ ընկերություններին կարող են անդամ լինել «տվյալ տանը մշտապես բնակվող քաղաքացիները, վորոնք, համաձայն

¹⁾ Մունիցիպալիզացիայի յենթարկված տներն այն տներն են, վորոնք մասնավոր սեփականություն չեն և գտնվում են քաղաքային խորհուրդների տրամադրության տակ:

10. Ս. Հ. Միութիւնի սահմանադրութեան, ոգտվում են ընտրողական իրավունքից: Ընկերութեան անդամները անվորներին կեսից պակաս չպետք է լինեն (համեմատյալ դեպք, 10 հոգուց վոչ պակաս): Ընկերութեան միջոցները կազմվում են. ա) անդամակցական ու փայլավճարներից. բ) բնակարանավարձի մուծումներից և մյուս շենքի վարձերից. գ) վառելի համար արժեքի վճարներից և այլն:

Անդամակցական վճարը պետք է լինի մեկ ուրբուց վոչ ավելի, իսկ բաժնեվճարները՝ 20 ուրբի: Թուլատրվում է ընկերութեան գործերի համար անդամների հնգապատիկ պատասխանատվություն (բաժնեվճարների դիմաց):

Ընկերութեան ղեկավար մարմիններն են՝ անդամների ընդհանուր ժողովը և վարչութիւնը, վոր ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից:

Բացի վարչութիւնից, ընտրվում է նաև վերստուգիչ հանձնաժողով:

Բնակարանային ընկերութիւններն իրավունք ունեն 12 տարի ժամկետով վարձով վերցնել քաղաքապետական շենքերը, վորտեղ ապրում են ընկերութեան անդամները:

Ընկերութեան անդամներն ոգտվում են Միութեան մեջ սահմանված բնակարանային մակարդակից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ինչպես է կազմված և ինչպես է աշխատում ձեզ ծանօթ վարձկալա-բնակարանային ընկերութիւնը:

Շատ հետաքրքիր են բնակարանա-շինարարական կոոպերատիվները, վորոնք գործում են Կենտգործկոմի 1924 թ. ոգոստոսի 19-ին նույն վորոշման համաձայն: Այդ կոոպերատիվները հիմնվում են իրենց անդամների բնակարանային կարիքը բավարարելու նպատակով՝ կառուցելով նոր տներ, վերս կանգնելով ավերվածները կամ ավարտելով կիսակառույց շենքերը: Բնակարանա-շինարարական ընկերութիւնները բաժանվում են յերկու տեսակի. ընկերութեան յեւ համաքաղաքացիական կոոպերատիվների: Առաջին տեսակի ընկերութիւնների կազմի մեջ մտնում

են միայն պետական, արհեստակցական, կուսակցական և կոոպերատիվ հիմնարկութիւնների ու ձեռնարկների բանվորներն ու ծառայողները, գործազուրկ բանվորները, պատերազմի և աշխատանքի հաշմանդամները: Յերկրորդ տեսակի ընկերութիւնների կազմի մեջ մտնում են 18 տարեկան հասակ ունեցող և դատարանով իրավունքներից չզրկված բոլոր քաղաքացիները:

Բանվորական ընկերութիւններին տրվում են պետութեան կողմից մի շարք արտոնութիւններ և զրամական աջակցութիւն: Այսպես, որինակ մասնավոր մարդկանց գանձումները ընկերութիւնների պարտավորութիւնների վերաբերմամբ չեն կարող տարածվել բանվորական կոոպերատիվների շենքերի, շեռուցման իրավունքի վրա: Մյուս կողմից, վորպեսզի պահպանվի ընկերութիւնների դասակարգային բնույթը՝ չի թուլատրվում ընտրողական իրավունքից զրկված անձանց՝ ընկերութեան կազմի մեջ մնալ և ոգտվել բնակարանից:

Կառուցված շենքերի բնակարաններում կարող են տեղավորվել միայն կոոպերատիվի անդամները, և կողմնակի մարդկանց վարձով չի տրվում:

Կոոպերատիվը հիմնվում է, յիրք 10 անդամ-հիմնադիր կա:

Ընկերութեան կանոնադրութիւնը, յեթե համապատասխանում է նորմալ կանոնադրութեան, առանց արգելքի գրանցվում է տեղական բնակարանային կոոպերատիվների միութեան կողմից, իսկ միութիւն չեղած դեպքում՝ կոմունալ անտեսութեան տեղական բաժնի կողմից:

Գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել՝ 2-ական որինակ կանոնադրութիւն, վորը հիմնադիրների կողմից պետք է ստորագրված լինի և, նրանց ստորագրութիւնները տեղկումը, զավկումը կամ նստարը պետք է վավերացնեն, ապա՝ հիմնադիրների անվանացուցակը և հիմնադիր ժողովի արձանագրութիւնը:

Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի ըստ իր տված բաժնեվճարի քանակի՝ մշտապես ոգտվելու բնակարանային մակարդակից, բայց վոչ ավելի սահմանված նորմայից: Ընդհա-

նուր ժողովում յուրաքանչյուր անգամ ունի միայն մի ձայնի իրավունք: Ընկերությունը կառավարում է ընտրովի վարչությունը և ունի նաև վերստուգիչ հանձնաժողով:

Ընկերությունն ինքնակամ հեռացող կամ հեռացված անդամին վերադարձնում է նրա բաժնեվճարը՝ դուրս գալով անդամի տրամադրության տակ յեղած կայքի կամ գույքի հանդեպ ման արժեքը: Անդամի գործազրկությունը և նրա փոխադրվելը մի ուրիշ ձեռնարկության մեջ՝ նրա արտաքսման համար առիթ ծառայել չի կարող: Ընկերության գործերի պատասխանատվությունը սահմանափակվում է անդամի ունեցած գույքով: Ընդհանուր ժողովն իրավունք ունի սահմանել լրացուցիչ պատասխանատվություն, վոր չի կարող փայադրամազլխից հնգապատիկ չափով ավելի լինել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Նկարագրեցեք ձեզ ծանոթ բնակարանային ընկերության կազմակերպությունը և նրա աշխատանքը:

Խ. Ս. Հ. Միուրյան Զոդի մասնավոր սեփականատիրության բնակարանային կոոպերացիայի միջոցները
Վոչնչացմամբ՝ վերանում է գլխավոր խոչընդոտներից մեկը, վոր կապիտալիստական հասարակության մեջ ծառանում եր բնակարանային կոոպերացիայի առաջ: Մնում է մյուս խոչընդոտը.— ծառայողների և բանվորների սեփական միջոցների բացակայությունը: Խ. Ս. Հ. Միուրյան մեջ բնակարանային կոոպերատիվների անդամակցական վճարը 3—5 ռ. ավելի է, իսկ բաժնեվճարը՝ 25—50 ռ.:

Շինարարական նյութերի և աշխատանքի խիստ թանկության որերին բանվորներին չի հաջողվում հարկավոր չափով միջոցներ հավաքել, յեթե նրանց ոգնությունը չզան պետությունը և բանվորական կազմակերպությունը:

«Աժան բնակարանների հարցը, աժան յերկարատե վարկի հարցն է» — ասում են Արևմտյան Յեվրոպայում: Բայց դրաբախտությունը հենց այն է վոր այդ վարկը չի հասնում լայն բանվորական մասսաների ձեռքը. այդ վարկից ոգավում են

ծառայողների և ավելի ապահով բանվորների, համեմատաբար վերին, փոքրաթիվ խավերը: Խ. Ս. Հ. Միուրյան մեջ այլ հողի վրա յե դրված այդ հարցը: «Բանվորական բնակարանների կոոպերատիվ շինարարության աջակցության» — մասին 1924 թ. ոգոստոսի 19-ին հրատարակված դեկրետի համաձայն՝ հիմնվում են հատուկ պետական դրամական ֆոնդեր՝ բնակարանա-շինարարական կոոպերացիայի վարկավորման համար: Կոոպերատիվ շինարարության տրվում են մի շարք արտոնություններ:

Այսպես, բոլոր տեղական խորհուրդները պարտավոր են բանվորական բնակար. կոոպերատիվներին հատկացնել ամենաարտոնյալ պայմաններով, աժան գներով, հողամասեր և նրանց հանձնել յերկարատե վարկի կարգով չոգտագործվող շենքեր և անբնակատներ: Ընկերություններին տրվում է յերկարատե վարկով, առաջին տարիներին հերթական նվազները չմոծելու պայմանով նաև փայտեղեն, բարավաղ և կավ: Բացի դրանից, բանվորական բնակար. կոոպերատիվները ազատ են արդյունաբերական և յեկամտագույքային հարկերից, դրոշմային ու նոտարային տուրքերից: Կոոպերացիային պատկանող շինարարական նյութերը փոխադրվում են արտոնյալ տարիքով:

Բանվորական շինարարության համար հատկացված հիմնական պետական ֆոնդը կազմվում է.

1) Ունևոր խավերից ստացվող (200 ռ. ամսական յեկամուտ ունեցող) յեկամտագույքային հարկի հատուկ վերադրից:

2) Տրեստների և պետհիմնարկների գուտ ոգուտների հատկացումներից:

Տեղական ֆոնդերը կազմվում են.

1) Անաշխատ տարրի դեղեցրած յուրաքանչյուր քառավուտի սաժենին 10 ռ. չափով վճարվող բնակարանային հարկից:

2) Տեղական արդյունաբերության գուտ ոգուտների հատկացումներից:

3) Տեղական խորհուրդների՝ վարձով տրված առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունների շենքերի յեկամուտների հատկացումներից:

Պետֆոնդը գտնվում է Ս. Ս. Հ. Միության Աշխատողներին կից գոյութիւն ունեցող կոմիտեի, իսկ տեղական ֆոնդերը՝ տեղական խորհուրդների տրամադրութեան տակ:

1924 — 1925 տարեշրջանում յենթադրվում եր կուտակել 3 — 5 միլիոն ռուբլու ֆոնդ:

Բանվորական բնակարանային կոոպերացիային աջակցում են կոմմունալ բանկերը: Բայց, վորովհետև այդ բանկերը բաց են թողնում միայն կարճատև վարկեր, վոր բնակար. կոոպերացիայի համար ձեռնտու չի, այդ պատճառով 1925 թ. սկզբում կազմակերպվեց հատկապես «կոմմունալ բնակարանային շինարարութեան կենտրոնական բանկ»:

Մի քանի տեղերում ավելի ևս առաջ գնացին: Որինակ, Մոսկվայում, 1924 թ. քաղխորհուրդը բնակարանա-շինարար. փոխառութիւն բաց թողեց: Փոխառութիւնը հավասար է 10 միլիոն ռուբլու, 15 տարվա ժամկետով, 5 և 10 ռուբլի որի. գացիաներով: Հավաքած փոխառութիւնից տրվում է փոխարինարար բնակար. կոոպերատիվներին՝ 15 տարով և տարեց-տարի հանգցնելու պայմանով:

Հերթական հարց է՝ գրավել լայն չափով, բնակարանային կոոպերացիայի գործում արհմիութիւնների միջոցները:

Առաջ բերած տվյալները վկայում են այն մասին, թե Ս. Ս. Հ. Միութեան մեջ պետութիւնը և հասարակութիւնը վոր. քան խոշոր աջակցութիւն են ցույց տալիս բանվորական բնակարանա-շինարարական կոոպերացիայի գործում:

Այդ բոլոր ձեռնարկած քայլերի հետևանքով, բնակարանային կոոպերացիան մատչելի յե դառնում նույնիսկ ավելի անապահով բանվորական ազգաբնակչութեան խավերին:

Բնակ. կոոպերացիայի ժամանակակից պերացիայի ժամա- գրութեան մասին (ըստ 1925 թ. մարտի 6-ականից գրութուհը 1-ի տվյալների) կարելի յե բերել հետևյալ թվերը. Ս. Ս. Հ. Միութեան 48 քաղաքներում հաշված են 22,500 բնակարանա-վարձակալական ընկերութիւններ՝ 615.000 անդամներով և 2.225.500 ո. փայադրամագլխով: Բնակարանա-շինարարական ընկերութիւնների թիվն ավելի քիչ է, բայց

իր փայադրամագլխով ավելի հարուստ է, քան բնակ. վարձակալական ընկերութիւնները: Ընդամենը գոյութիւն ունեն 790 բնակարանա-շինարարական ընկերութիւններ 166.700 անդամներով և 2.120.000 ո. փայադրամագլխով: Մոսկվան, այդ տեսակետից առաջին տեղն է բռնում: Բնակարանային շինարարութեան գործով ամենից շատ զբաղված են յերկաթուղային ծառայողները և մանածագործները: Բնակարանային կոոպերացիայի կառուցվածքների ծավալը Ռ. Ս. Ֆ. Հ. մեջ համարում է 87,000 խորանարդ սաժենի, 15,000,000 ո. արժեքով: Այդ քանակութիւնից Մոսկվային ընկնում է 30,000 խորանարդ սաժեն՝ 6,000,000 ո. արժեքով:

Անհրաժեշտ է բնակ. կոոպերացիայի հետագա լայն զարգացումը, վորովհետև Ս. Ս. Հ. Միութեան բանվորական ազգաբնակչութեան բնակարանային պահանջը լիովին բավարարելու համար հարկավոր է կառուցել վոչ պակաս քան 10 միլիոն խոր. սաժեն՝ 1,500,000,000 ո. գումարի արժեքով: Այդ հարցը հնարավոր է լուծել մի շարք տարիների ընթացքում՝ պետութեան, արհմիութիւնների և կոոպերացիայի յեռանգազին ուժերով, բանվորական մասսաների ինքնագործունեութիւնը կարող է արագացնել գործը:

Համկոմկուսի XIII-րդ համագումարը վորտեղ է՝ «Բանվորների նյութական կենցաղի կարևորագույն խնդիրն առավելապես բնակարանային հարցն է, վորը կարելի յե կանոնավոր ու արագ կերպով լուծել վոչ մի-

այն պետութեան կողմից ձեռնարկած միջոցներով, այլև իրեն ազգաբնակչութեան ինքնագործունեյությամբ և նյութական մասնակցությամբ: Աշխատավորութեան բնակարանային կարիքի վերացման ինքնագործունեյութեան լավագույն ձևը՝ բնակարանային կոոպերացիան է, վոր իր գործնական աշխատանքի կարճատև փորձով ապացուցել է իր կենսունակութիւնը և նպաստակահարմարութիւնը: Խորհրդային իշխանութեան բոլոր որդանները պարտավոր են ամեն կերպ աջակցել բնակարանային կոոպերացիայի աշխատանքին»:

ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԿՈՊՊԵՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

II

ԲՆԱԿՈՊՊԵՐԱՑԻԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՆ

Կազմակերպակաճ Հայաստանում բնակարանային կոոպե-
րացիաները կազմվել են դեռևս 1925 թ. բաց ավելի ուժեղ կերպով զարգացել են 1926 թ. ընթացքում՝ յերբ ձևակերպվել և գործի յե անցել Բնակարանային Կոոպե-
րատիվ Միությունը: Հատուկ «Ռժանդակիչ Կոմիտեի» նախա-
ձեռնությամբ 1926 թ. մարտի 3-ին գումարվում և առաջին լիազորական համագումարը:

Մինչև Բնակոոպմիության կազմակերպվելը Յերևան քա-
ղաքում գործում էին 11 բնաշինարարական և վարձկարական
կոոպ-երակերություններ՝ 343 անդամներով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս գոյություն ունեցող
բնակոոպների դուրսդուրը:

№	ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԸ	Վեր հիմնարկնե- րին կից	Տիպը	Անդամ- ներ
1	«Դինամո» . . .	Քաղ. վարչութ. կից	Շինարարական	53
2	«Աշխատանք» . . .	Ժողտնախորհի »	»	27
3	«Կուրսեղ» . . .	Հայկոոպի »	»	40
4	«Նոր-Ասպարեզ» . . .	Կառ. միության »	»	10
5	«Բնաշինկոոպ» . . .	Ֆինժողկոմատի »	»	67
6	«Աշխատանք» . . .	Աշխժողկոմի »	»	20
7	«Նախաձեռնութ.» . .	Յերքաղգավգործ. »	»	14
8	«Նորեր» . . .	Բանգյուղտեսչ. »	»	16
9	«Նայիրի» . . .	Հողժողկոմատի »	»	28
10	«Նոր կյանք» . . .	Գավֆինրաժնի »	»	11
11	«Հայ ջրանտեսութ.»	—	»	43
12	«Բնաշինկոոպ II» . .	Փոստ.-հեռ. »	Վարձակ.	14
Ընդամենը . . .			—	343

Բնաշինկոոպ Միությունը, բացի վերոհիշյալ բնակոոպների
աշխատանքներն ուժեղացնելուց զբաղվել և նրանց ցանցի ընդ-
լայնմամբ՝ կազմակերպելով դարձյալ Յերևանում—16 բնաշին-
կոոպներ—375 անդամով, Լենինականում 19 բնաշինկոոպներ
629 անդամով:

Այսպիսով առ 1 հունվարի 1927 թ. Հայաստանում գո-
յություն ունեին 47 բնաշինկոոպներ 1347 անդամով, վորոն-
ցից 633—բանվոր, 714 ծառայողներ:

Բնակոոպմիությունը հատուկ ուշադրություն է դարձրել
յերկրաշարժից տուժած Լենինականի վրա՝ ուժեղացնելով աչն-
տեղ իր շինարարական աշխատանքները:

Նյութական մի- Բնակոոպների սեփական միջոցները կազ-
ջոցները մում են անդամների մուծած մուտքի և
բաժնեվճարները: Մուտքի վճարների առավելագույն չափն ըն-
դունված է 3 ռ. իսկ փաշավճարներինը՝ 75 ռ.: Նվազագույնը՝
մուտքի—1 ռ. իսկ բաժնեվճարը—20 ռ.:

Բնակոոպների մուտքի վճարները Յերևանում առ 1 հուն-
վարի 27 թ.—հավասար են՝ 865 ռ. իսկ բաժնեվճարները՝ 9415
ռուբլի:

Բացի մուտքի և բաժնեվճարներից՝ բնակոոպերացիայի մի-
ջոցների աղբյուրներն են—ա) կենտկոմբանկից բաց թողնվող
յերկարատև վարկեր բ) բանվոր-ծառայողի կենցաղը բարելա-
վող ֆոնդից հատկացումները, գ) բնակարանային հատուկ տուր-
քի տոկոսները, (8⁰/₀). դ) առևտրա-արդյունաբերական շենքերի
յեկամուտների 5⁰/₀-ային հատկացումները, ե) սոցալվարչու-
թյունից ստացվող ⁰/₀-ները և զ) զանազան կարճատև վարկեր:

Բնակոոպմիության 1926 թ. ֆինանսական դրությունը
հետևյալ պատկերն է ներկայացնում.—

	Սպասվում էր	Սացվել է
1. Կենտկոմբանկից	100 000 ռուբ.	54,600 ռուբ.
2. ՀՍԽՀ Կոմբանկից	30,000 »	31,000 »
3. Գավգործկոմից 5 ⁰ / ₀ — բնակաուրք	32,000 »	17,000 »
4. Լենգավգործկոմից	16,000 »	35 850 »

5. Ոժանդակիչ կոմիտեից 64,850 » 39,850 »

6. Բանվ. կենցաղ. բա-
րելավող ֆոնդից 72,000 » 20,000 »

Ընդամենը 314,850 ուր. 162,450 ուր.

1927 թ. բնակողամիությունը ստանալու յե կենսկոմբան-
կից մոտ 200,000 ու. չերկարատև վարկ:

Յեղած և բաց թողնվելիք միջոցները գործադրվելու յեն
բացառապես բանվորական բնաշինկոոպներին, վոր տրվելու յե
50 տարի ժամանակով 1⁰/₀-ով:

Շինարար-վերանորոգման 1925—26 տարեշրջանում տարվել են
ռոգչակաճ աշխատանքներ հետևյալ բնաշինարարական աշխատանքներ
սահմաններ — կառուցված ե 1 տուն, 1¹/₂ հարկանի,
չորս բնակարանից բաղկացած, պատրաստ ե 95⁰/₀-ով 1 տուն
յերկհարկանի, 28 սենյակից և կառուցման պրոցեսում են 6
տուն 1—2 հարկանի, 515 սենյակներով, վորոնք կավարտվեն
1927 թ. ընթացքում:

Բնակողամիությունն տեխնիկական ապարատ չունենա-
լու պատճառով կառուցման աշխատանքները կազմակերպվել ե
«Շինարար» բաժնետիրական ընկերության միջոցով:

Տների կառուցումը կատարվում ե համաձայն հատուկ «Մըրց-
ման Ժյուրիի» կողմից ընդունված բանվորական տիպիկ տների
հատակագծերով:

1925—26 տ. տ. վերանորոգման աշխատանքներ տարվել
են 8 բնավարձկոոպներում, վորոնցից 6-ը վարկավորվել են
բնակողամիության միջոցներից, իսկ 2-ը տարել են թեթև
վերանորոգման աշխատանքներ իրենց բնակարանային վարձերի
հաշվին:

Յուսման աշխատանքներ 1927 թ. ծրագրել ե
ա) Ավարտել արդեն սկսած 6 տան կա-
ռուցման աշխատանքները:

բ) Կազմել ընթացիկ տարում կառուցվելիք տների համար
տիպիկ եժանազին բանվորական տների հատակագծեր:

գ) Վարկավորել մի շարք բնաշինկոոպներին:

դ) Պատրաստել մի շարք շինարարական նյութեր (բար,
կիր, ափազ, հում աղյուս և այլն):

ե) Ունենալ կրի սեփական գործարան և քարի, ափազի
հանքեր:

զ) Տանել կազմակերպչական ծրագրած աշխատանքներ:

է) Ուժեղացնել իր ֆինանսական միջոցները:

ը) Ձեռնարկել կուլտ-կրթական աշխատանքների և այլն:

ԶՐՈՒՅՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմի զարգացումն առաջ ե բերում քաղաքների
ազդաբնակչության չափազանց արագ բազմացումը: Նոր բնա-
կարանների շինարարությունը չի կարողանում ազդաբնակչու-
թյան աճման հասնել: Քաղաքային շենքերի և հողի մեծագույն
մասը, վորի վրա կառուցված են տները, ունեոր խավերի մաս-
րավոր սեփականութուն են: Աշխատավորական լայն մասսա-
ների բնակարանային կարիքը կապիտալիստական կարգերի հե-
տևանքն ե և միայն կապիտալիզմի հետ միասին կարող ե հիմ-
նովին վոչնչանալ:

Բնակարանային կոոպերացիան սկիզբ ե առնում մանր
բուրժուական միջավայրում և հիմնվում ե կիսա-կապիտալիս-
տական հիմքի վրա. բնակ. կոոպերատիվների կառուցումը և
անդամներին բնակարան մատակարելը կատարվում ե ի հաշիվ
ընկերության անաշխատ յեկամուտների, հողային չարաշահու-
թյան, կողմնակի անձանց բնակարանների վարձագնի, դանա-
զան ֆինանսական գործարքների և այլն:

Հակառակ գործարանատերերի և զավոգատերերի գործու-
նելության, վորոնք ձգտում են ճորտացնել, կաշկանդել բան-
վոր դասակարգին՝ հատկացնելով բանվորներին իրենց ձեռնար-
կություններին կից կառուցված բնակավայրերում բնակարան-
ներ՝ բանվորական կազմակերպությունների միջոցով ստեղծ-
վում են ինքնագործ և անկախ բնակարանային ընկերություն-
ներ:

Բայց և այնպես, շնորհիվ հողի մասնավոր սեփականու-
թյան և միջոցների բացակայության, այդ ընկերությունները

չնայած մի շարք նվաճումների, անկարող են լինում ընակարանային հարցը և գոնե վորոշ չափով մեղմացնել մասսաների բնակարանային կարիքը:

Պատերազմի ավերածություններից հետո ավելի սրվեց բնակարանային կարիքը:

Խ. Ս. Հ. Միության մեջ բնակարանային կոոպերացիայի զարգացման պայմանները կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունեցող պայմաններից բոլորովին տարբեր են: Մեզանում հողի և քաղաքային շենքերի մեծ մասի վերաբերմամբ վերացված է մասնավոր սեփականությունը, պետության միջոցները գտնվում են բարձրագույն զուգակցական մասսաների ձեռքին:

Շնորհիվ ընդհանուր քայքայման բանվորա-գյուղացիական պետությունը գեռես չի կարող լինում բավարարել բանվորներին բնակարաններով, բայց, մյուս կողմից, բանվորա-գյուղացիական պետությունը կարող է ցույց տալ և իսկապես ցույց է տալիս լայն աջակցություն բանվորների ինքնագործունեությունը՝ հին բնակարանների ոգտագործման և նորերի կառուցման գործում: Բնակարանային ընկերություններին տրված մի շարք արտոնությունները և վարկավորումը բնակարանային կոոպերացիան պրոլետարիատի լայն մասսաներին մատչելի լին դարձնում: Բնակարանային կոոպերացիայի վարկավորման միջոցները գանձվում են ունևոր անվորներից, առևտրական ձեռնարկություններից ու արդյունաբերության հատկացումներից և այլն: Ներկայումս, նմանապես ավելացվում է անդամների փայազրամագուլթը: Բնակարանա-վարձակալակ. և բնակ.-շինարարական կոոպերատիվների կատարած փորձը լինում ապացուցանում են այդ ձեռնարկության կենսունակությունը: Խ. Ս. Հ. Միության 48 քաղաքներում կային (1924 թ.) 22,500 բնակ.-վարձակալական ընկերություններ 615,000 անդամով և 2,225,000 փայազրամագուլթով: Բնակարանա-շինարարական 790 ընկեր. 166,700 անդամներով և 2,120,000 զրամագուլթով: Բնակարանային կոոպերատիվները կառուցել են 15,000,000 ուղբլի արժողությամբ շենքեր և 87,000 խ. սաժեն տարածությամբ: Կուսակցական

համագումարը կարևոր համարեց լինում աջակցել բանվորական բնակ. կոոպերացիային:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչից է ստեղծվում բանվորական մասսաների բնակարանային կարիքը:

2. Վճրքան խոշոր է բնակ. կարիքը կապիտալիզմի շրջանում:

3. Ինչո՞ւ համար գործարանատերը և զավոդատերերը բանվորների համար բնակարաններ ելին կառուցում:

4. Ինչո՞ւ այդ բնակարանները ձեռնառու չեյին բանվորներին:

5. Ի՞նչ միջավայրում են առաջ գալիս սկզբում բնակար. կոոպերացիան:

6. Ի՞նչպես են հիմնվում գերմանական տիպի բնակ. կոոպերատիվները:

7. Ի՞նչպես կազմակերպվեցին առաջին բնակ. կոոպերատիվները:

8. Բանվորական վճր կազմակերպություններն են աջակցում բնակ. կոոպերացիային:

9. Ինչ է «այգեստան-քաղաքը»:

10. Ի՞նչ հիմնական խոչընդոտներ կային կապիտալիզմի շրջանում բնակ. կոոպերացիայի սռաջ:

11. Սորհրդային իշխանության վո՞ր դեկրետները և վո՞ր վորոշումներն են պարզում բնակ. կոոպերացիայի դրությունը Խ. Ս. Հ. Միության մեջ:

12. Ի՞նչ տարբերություն կա բնակ.-վարձակալական և բնակ.-շինարարական կոոպերատիվների մեջ:

13. Ի՞նչպիսի պայմաններում է զարգանում բնակ. կոոպերացիան Խ. Ս. Հ. Միության մեջ:

14. Ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունեն բնակ. վարձակալական ընկերությունները:

15. Ի՞նչ տարբերություն կա բանվորական և համաքաղաքացիական շինարարական կոոպերատիվների մեջ:

16. Նկարագրեցե՛ք բանվորական շինարարական կոոպերատիվի կազմակերպութիւնը:

17. Ի՞նչպէս են կազմվում բնակ. կոոպերատիվները միջոցները:

18. Խորհրդային իշխանութիւնն ի՞նչպիսի արտոնութիւններ ե տվել բնակ. կոոպերացիային:

16. Ո՞վ և ի՞նչ պայմաններով ե վարկավորում բնակ. կոոպերացիային:

20. Նկարագրեցե՛ք Խ. Ս. Հ. Միության բնակ. կոոպերացիայի ժամանակակից դրութիւնը:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՅՑՈՒՆՆԵՐ

Արտադրական ընկերութիւններն այնքան հին են, վորքան սպառողականը:

Առաջին արտադրական ընկերութիւնները սկիզբն առան բանվորների, արհեստավորների և տնայնագործների շրջանում XIX դարի սկզբում: Հետագայում, այդ ընկերութիւնները տարածվեցին ուրիշ շերտերներում ևս (Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում և այլ յերկիրներում):

Արտադրական կոոպերատիվների սկզբնավորման ժամանակ մեքենայական արտադրութիւնը սկսել եր ասպարեզից դուրս մղել անկախ արհեստավորների և տնայնագործների ձեռագործ աշխատանքը: Տնայնագործները միմյանց հետ միանում են իրենց արհեստը պահպանելու նպատակով: Սրանց որինակին հետևեցին գործազուրկները, վորոնք գործաշաննելով աշխատանք չէին կարողանում գտնել: Կոոպերացիայի ղեկավարները շարժման հաջողութեան հավատում եին հետևյալ նկատառումներով. —

Արտադրական ընկերութիւնների մեջ, ասում եին նրանք, չկան մասնավոր տերեր, այլ գործի տերը բոլոր բանվորներն են: Բանվոր-տերերը պարտավոր չեն իրենց արտադրութեան

տգուտը վճարելու գործարանատիրոջ կամ զավոդատիրոջ, այդ իսկ պատճառով նրանք չեն կարող իրենց ապրանքների վրա նշանակել մասնավոր արդիւնաբերութիւնից ավելի բարձր գներ:

Այդ պատճառով արտադրական ընկերութիւնները կարող եյին հաջողութեամբ մրցել մասնավոր ձեռնարկութիւնների դեմ:

Ընգեցանուր կազմակերպութիւններ Արտադրական ընկերութեան ընդհանուր մակերպութիւնը կազմակերպութիւնը մյուս կոոպերատիվներից այնքան ել չի տարբերվում: Ընկերութեան անդամ կարող ե լինել ամեն վոք, վոր ցանկանում ե աշխատել մյուսների հետ միասին և յենթարկվում ե ընդհանուր ժողովների վորոշումներին: Ընկերութեան անդամները մացնում են փայեր. բայց յուրաքանչյուր անդամ, անկախ իր վերցրած փայերի թվերից ունի միայն մի ձայնի իրավունք: Ընկերութեան ընդհանուր ժողովը հանդիսանում ե բոլոր գործերի տերն ու տրւորենը: Ընթացիկ գործերը տանելու համար ընտրվում ե վարչութիւն, իսկ գործերի ստուգման համար — վերստուգիչ հանձնաժողով:

Ընկերութեան յուրաքանչյուր անդամ պարտավոր ե իր անձնական աշխատանքով մասնակցել կոոպերատիվի արտադրութեան: Ընկերութիւնների մեջ չի թուլատրվում, վորպէս որենք, վարձու աշխատանք: Միայն մասնագետների վերաբերմամբ բացառութիւն ե լինում: Ոգուտը բաժանվում ե յուրաքանչյուր անդամի գործադրած աշխատանքի համաձայն: Ուրինակ, յերբ մի անդամ աշխատել ե 200 ժամ, իսկ մյուսը՝ 100 ժամ, այդ դեպքում առաջինը յերկու անգամ ավելի յետում յերկրորդից:

Արտադրական ընկերութեան Բանվորական ազատագրական շարժման բուրժուաները յեվ պարագլուխներից շատերը խոշոր նշանաբանագրական արտադրական ընկերութիւններին:

Որինակ Կարլ-Մարքսը կազմեց առաջին Ինտերնացիոնալի համագումարի հետևյալ վորոշումները. —

«Արտադրական ընկերութիւնները վոչ թի խոսքով, այլ գործով ապացուցում են, վոր արտադրութիւնը խոշոր չափերով կարելի յե կատարել առանց վարձու աշխատանքից ոգորւ-վող տերերի մասնակցութեան, և վոր վարձու աշխատանքը, վորպես ստրուկների ու ճորտերի աշխատանք, ժամանակավոր յերևույթ լինելով՝ դատապարտված ե կործանման»:

Առաջին Ինտերնացիոնալն ընդունեց այս վորոշումը:

Առաջին Ինտերնացիոնալի կարծիքով արտադրական ընկերութիւնները, արտադրութեան գործիքների ու միջոցների մասնավոր նեփականութիւն չունենալով, ավելի յեն խախտում կապիտալիզմի հիմքերը, քան բոլոր մնացած կոոպերատիվները, վորոնք աշխատում են փոխանակման ասպարիզում և չեն դիպչում արտադրութեան հիմքերին: Այդ պատճառով բանվորներին խորհուրդ եր տրվում կազմակերպել առաջին հերթին մշուս կոոպերատիվների համեմատութեամբ արտադրական ընկերութիւններ:

Սոցիալիստներից շատերի կարծիքով, հեղափոխութիւնից հետո, բոլոր գործարանները վերածվելու յեն արտադրական կոոպերատիվների, վորոնց անդամները լինելու յեն այդ արտադրութիւններին՝ մասնակցող բանվորները:

Մեքսագրական ընկերութիւնները Բայց արտադրական ընկերութիւնների կերութիւններ մի-գարգացումը, հենց սկզբից, հանգիպեց մի ջոցների աղբուր-շարք խոշընդոտների:

Նախ և առաջ, զգացվեց կահավորման, նյութերի հայթալթման և ուրիշ պարագաների պակասութիւն: Սովորաբար ընկերութեան անդամները զուրկ ելին միջոցներից: Նրանք սալիված ելին դիմել փոխառութեան կամ բարեգործութեան ոգնութեան:

Պատմութեան մեջ հայանի յեն մի քանի մարդիկ, վորոնք այդ շարժմանը համակրում ելին և տվել են նրան անագին գումարներ: Այսպես, որինակ, Ֆրանսիացի Ռայտալը կտակեց արտադրական ընկերութիւններին մոտ 400,000 ռուբլի:

Բայց և այնպես, բարեգործութեան միջոցով ստացված

գումարներն այնքան չնչին ելին, վոր չելին կարող բավարարել բոլոր կոոպերատիվների կարիքները:

Այդ պատճառով հարց բարձրացվեց այն մասին, վոր կառավարութիւնից յերկարատե փոխառութիւններ ստացվեն: Բանվորական կառավարութիւններն այդ բանին ի հարկե ընդառաջ չեցին: Բայց 1848 թ. Արևմտյան Յեվրոպայի համարյա բոլոր յերկիրներում հեղափոխութիւն պայթեց, վորը, ստիպեց կապիտալիստներին վորոշ դիջումներ անել բանվոր դասակարգին: Այսպես, որինակ, Ֆրանսիայում, սոցիալիստներին հաջողվում ե կորզել ժամանակավոր կառավարութիւնից՝ արտադրական կոոպերացիայի համար 1,000,000 ռուբլի փոխառութիւն: Բուրժուական «ժամանակավ. կառարութիւնը» իր անդամներից մեկի—Ռիյեոի բերանով այսպես ե հայտնել իր վերաբերմունքը այդ փաստի նկատմամբ. «Յեթե պահանջելիք մեզնից վոչ թե մեկ, այլ տաս միլիոն ռուբլի, —ասում եր նա,—մենք կտայինք այդ տաս միլիոնը, վորպեսզի փորձով համոզելինք ձեր արարմունքի անմտութիւնը»:

Պարզ ե, վոր այսպիսի վերաբերմունքով Ֆրանսիական կառավարութիւնը դիմում եր իրենից կախված բոլոր միջոցներին, վորպեսզի ամեն կերպ մաս հասցնի կոոպերացիային: Յեվ, իսկապես, նրան այդ հաջողեց, Համեմատաբար ամենակարճ միջոցում փակվեցին այսպես կոչված «ազգային արհեստանոցները», կոոպերատիվ հիմունքներով կազմակերպված խոշոր արտադրութիւնը: Բայց արտադրական կոոպերատիվների անագին մեծամասնութեան կործանման պատճառը վոչ թե կառավարական ճնշումն եր, այլ մի ուրիշ հանգամանք:

Կապիտալիզմի ազգեցութիւնը արտադրական ընկերութիւններն առաջ են յեկել կապիտալիզմի գրական կոոպերացիայի վրա շրջանում և գործում են կապիտալիստական տնտեսութեան պայմաններում:

Չնայած այդ ընկերութիւնները խոշոր ոգուտների յետեւից չեն ընկնում, բայց կահավորման պարագաների, հում նյութերի գնման և ուրիշ ծախսերի համար յեղած այն չնչին միջոցները, վոր սովորաբար ունեն ընկ.ները, հնարավորութիւն

չեն տալիս նրանց շուկայից պակաս նշանակել իրենց արտադրանքների գները:

Վորքան ավելի մեծ և արտադրութիւնը, վորքան նա ավելի շատ մեքենաներ ունի, այնքան լավ և աժան է այն ապրանքը, վոր նրանք դուրս են հանում շուկա:

Արտադրական ընկերութիւնները, վոր սովորաբար, ունեին փոքր կիսա-տնայնագործական արտադրութիւններ, դժվար կարող էին յարկել կապիտալիստական գործարանների հետ, վորոնք սարքավորված էին տեխնիկայի վերջին խոսքով:

Արտադրական ընկերութիւններն այնքան փոքր էին, վոր հազիվ թէ կարողանային ազդել կապիտալիստական տնտեսութիւն վրա:

Յերբ արդյունաբերութիւնը զարգացումը դադարեց և արտադրութիւնը կրճատվեց, այդ ժամանակ արտադրական ընկերութիւնները մասնավոր ձեռնարկութիւններից ավելի շատ տուժեցին: Նրանք, բանվորների վորոշ մասը կրճատող մասնավոր ձեռնարկութիւնների նման չէին կարող կրճատել իրենց անդամներին: Այդ պատճառով, ճգնաժամի միջոցին (արտադրութիւնը կրճատման ժամանակ) ընկերութիւնը անդամներն ավելի քիչ էին վարձատրվում, քան մասնավորները:

Այդպիսի հանգամանքներում ոգտագար չէր պահպանել կազմակերպութիւնը, և նա կազմալուծվեց:

Այն դեպքում, յերբ արտադրական ընկերութիւնների գործերը հաջող էին գնում այդպիսի յերևույթ է նկատվում. — հին անդամներն իրենց կազմի մեջ նոր անդամներ չէին ընդունում:

Այդ բանն առաջ էր դալիս մասամբ այն պատճառով, վոր շատ սահմանափակ էր մանր արտադրութիւնը ծավալումը և այդ պատճառով, նույնիսկ բարեհաջող պայմաններում, նոր անդամների համար ընկերութիւնը մեջ տեղ չկար: Մասամբ էլ այն պատճառով, վոր հին անդամները, տանելով իրենց ուսերի վրա ընկերութիւնը ստեղծման բոլոր դժվարութիւնները, չէին ցանկանում իրենց մեջ ընդունել նոր անդամներ, վորոնք գալով՝ ամեն ինչ պատրաստ էին գտնում:

Յեթե բանվորական ձեռքերը չէին բավարարում, այդ դեպքում ընկերութիւնը գերադասում էր ոգտվել վարձու աշխատանքից:

Այդպիսի դեպքում կոոպերատիվ փոխարկվում էր մի քանի տները ունեցող, վարձու աշխատանքը լայն չափով կիրառող մասնավոր ձեռնարկութիւն: Կապիտալիստական ալլափոխման համար հայտնի որինակ կարող է ծառայել Փարիզում ակնոցներ պատրաստող վարպետների ընկերութիւնը:

Այդ ընկերութիւնը հիմնվում է 1848 թ., բայց շատ շուտով կորցնում է իր կոոպերատիվ դեմքը:

Ներկայումս ընկերութիւնը բաղկացած է 58 անդամներից, ունի 400,000 ռ. փայտաշրջագլուխ: Ընկերութիւնը ձեռնարկութիւնների մեջ աշխատում են 1000 հոգուց ավելի վարձու բանվորներ:

Միայն մի բանի արտադրական ընկերութիւններից վճարմանը պահպանել են մինչև որս իրենց կոոպերատիվ բնույթը (Անգլիայում — Նեյլսոնի մանվածային գործարանը, Ռուսաստանում — Պավլովսկու դանակագործ արտելը):

Յեզակացու- Այժմ մեր բոլոր ասածներից հանենք
քուլակներ վորոշ յեզակացութիւններ:

Արտադրական ընկերութիւնները հանդիսանում են ամենահին կոոպերատիվների ամենահին տեսակը: Նրանք առաջ են յեկել բանվորների և աշխատավորների շրջանում: Արտադրական ընկերութիւններում գոյութիւն չունի արտադրութիւնը գործիքների ու միջոցների մասնավոր սեփականութիւն:

Աշխատանքը միասին է տարվում. ստացած ոգուտը բաժանվում է յուրաքանչյուր անդամի կատարած աշխատանքի համաձայն: Ընկերութիւնը ղեկավարում են ընդհանուր ժողովի կողմից ընտրված վարչութիւնը անդամները: Ընկերութիւնները ստանում էին միջոցներ անդամներից՝ բաժնեվճարների ձևով և մասնավոր անձերից, վորոշ դեպքերում նաև պետութիւնից՝ փոխառութիւնների ձևով:

Սոցիալիստներն իր ժամանակին արտադրական ընկերութիւնների վրա մեծ հույսեր էին դրել՝ յենթադրելով, վոր

բանվորներն ընկերություններում սովորելու յեն արտադրությունն առանց կապիտալիստ-տիրոջ ոգնության ղեկավարվել:

Բայց և այնպես, արտադրական ընկերությունները, չկարողանալով արգաքացնել իրենց վրա դրված հույսերը, մեծ մասամբ կազմալուծվեցին կամ կապիտալիստական ձեռնարկությունների վերածվեցին:

Արտադրական ընկերությունները, սովորաբար, չէին կարող պայքարել խոշոր, լավ սարքավորված կապիտալիստական արտադրության դեմ:

Ընկերությունը հաշտության դեպքում՝ այլևս չի ընդունում նոր անդամներ, սկսում է բանվորներ վարձել և այդպիսով վերածվում է կապիտալիստական կազմակերպության:

Արտադրության կոոպերացումը անհնար է դառնում կապիտալիզմի շրջանում:

Արտադրական ընկերությունները կենսաբանորեն անհնար է չկարողացան զարգանալ կապիտալիզմի ժառանգական օրենքով՝ մանակ, այդ դեպքում հարց է ծագում թե արդյոք, նրանք կարող են նշանակություն ունենալ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, խորհրդային տնտեսության համար: Այլևս չի պահանջվում կոոպերացնել միջակ և խոշոր արդյունաբերությունը, վորովհետև բոլոր գործարաններն ու զավոդները կառավարում են բանվոր ղապակարգի ներկայացուցիչներից բաղկացած գործարանային վարչությունները:

Բոլորովին այլ է մանր արդյունաբերության դրությունը:

Պատերազմից առաջ (1913 թ.) մանր-արդյունաբերությունն արտադրում էր մեր արդյունաբերական բոլոր ապրանքների $\frac{1}{5}$ մասը: Պատերազմի և հեղափոխության տարիներին, խոշոր գործարանների ավերման հետևանքով, ավելի բարձրացավ մանր-արդյունաբերության նշանակությունը: 1922 թ. մանր-արդյունաբերությունը տալիս էր, 1913 թ. հետ համեմատած, յերկու անգամ ավելի պակաս ապրանք, բայց այդ ապրանքը կազմում էր բոլոր գործարանային արտադրության $\frac{1}{4}$ մասը: Նե՞ղի շրջանում մանր-արդյունաբերությունը մեծ մասամբ գտնվում էր մասնավոր մարդկանց ձեռքին:

Մինչդեռ հողագործությունը չի կարողանում լիովին ոգտագործել ամբողջ գյուղացական ազգաբնակչության ուժերը: Աճում է գյուղում ազատ ձեռքերի թիվը: Նրանք ձգտում են դեպի քաղաքները: Բայց վորովհետև միջակ և խոշոր արդյունաբերությունը միայն կիսով չափ էն հասել մինչ-պատերազմյան մակարդակին, այդ պատճառով նրանք չեն կարող կյանել բանվորական բոլոր ազատ ձեռքերը: Այստեղից առաջանում է գործազրկությունը:

Վերջապես, մանր արհեստավորների ու տնայնագործների անազին բազմությունը գտնվում է վատթար պայմաններում: Անհատ-տնայնագործը, ձեռնարկությունների փոքր ծավալի և թույլ սարքավորման պատճառով, 1924 թ. արտադրել է 300 ուրբ. վոչ ավելի, մինչդեռ նույն տարում արդյունաբերական բանվորի արտադրանքը հավասար էր 1600 - 2000 ուրբուր:

Բանվորա-գյուղացիական պետության առաջ ծառանում է մի խնդիր — աստիճանաբար հանձնել աշխատավորներին մանր-արդյունաբերությունը, գործազուրկներին զբաղմունք տալ և մանր արհեստավորների և տնայնագործների արտադրության համար մատակարարել կատարելագործված մեքենաներ, գործիքներ և ուրիշ պարագաներ:

Առաջադրած խնդիրը կարելի չէ լուծել, զանազան տեսակ արտադրական ընկերություններ կազմակերպելով: Այդ կոոպերատիվները, պետությունից վարկ ստանալով և ոգտվելով նրա աջակցությունից, կարող են կազմակերպել իրենց շուրջը բավական թվով աշխատավորներ և ձեռք ձգել մանր-արդյունաբերության վորոշ մասը: Ժամանակի ընթացքում, չերբ խորհրդային խոշոր արդյունաբերությունն ընդգրկի վորջ արդյունաբերությունը, այդ դեպքում արտադրական կոոպերատիվները ձուլվելու յեն նրա հետ:

Ինչպես վերևում մատնանշեցինք, արտադրական կոոպերատիվների մեջ, բացի պրոլետարներից, կարող են մտնել մանր արհեստավորներ և տնայնագործներ, մանր ապրանք-արտադրողներ, այսինքն մանր արտադրության տերեր:

Այդ պատճառով, մենք մանրամասնորեն քննելու յենք ար-

տաղրական ընկերություններն ալն պարապմունքներն ընթաց-
քում, վորտեղ խոսվելու յե մանր-ապրանք արտադրողների մա-
սին (16-րդ պարագմունք)։

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուսաստանում մանր արտադրությունը միշտ զարգացած
ե յեղել։ ՆեՊ-ի շրջանում մանր-արդյունաբերությունը մաս-
նավոր մարդկանց ձեռքին եր գտնվում։

Խորհրդային իշխանությունը, վորպեսզի կարողանա գոր-
ծադրականներին աշխատանք տալ, արհեստավորներին ու տնայ-
նագործներին մատակարարել կատարելագործված մեքենաներ,
մանր-արդյունաբերությունը մասնավորներից աշխատավորնե-
րին հանձնի, արտադրական ընկերություններին տալիս ե վարկ
և նրանց ժամե տեսակ աջակցություն ե ցույց տալիս։

Արտադրական կոոպերատիվներն ավելի ուժեղ թափով զար-
գանում են արհեստավորների ու տնայնագործների շրջանում,
քան բանվորների։ Բանվորա-գյուղացիական պետության աջակ-
ցության և հսկողության դեպքում, արտադրական կոոպերա-
տիվները չեն վերածվում կապիտալիստական ձեռնարկություն-
ների։ Խորհրդային խոշոր արդյունաբերության աստիճանական
զարգացմամբ, արտադրական կոոպերատիվները ձուլվելու յեն
ներա հետ։

ՀԱՐՅԵՐ

1. Յերբ և վորտեղ են սկիզբն առել առաջին արտադրա-
կան ընկերությունները։

2. Ի՞նչպիսի պայմաններում և ո՞ւմ շրջանում են կազմա-
կերպվել արտադրական ընկերությունները։

3. Ինչո՞ւ ալ ժամանակ սոցիալիստները կարծում եյին,
վոր արտադրական կոոպերացիան կարող ե հաջողությամբ պայ-
քարել մասնավոր ձեռնարկությունների դեմ։

4. Ի՞նչպես ե կազմակերպվում արտադրական ընկերու-
թյունը։

5. Ի՞նչպես ե բաժանվում նրա յեկամուտը։

6. Ինչո՞ւ [Ինտերնացիոնալը պաշտպանում եր արտադր-
կոոպերատիվները։

7. Վորտեղից են նրանք ձեռք բերում իրենց միջոցները։

8. Ի՞նչպես են վերաբերվում դեպի արտադրական կոո-
պերացիան բուրժուական կառավարությունները։

9. Վորո՞նք եյին արտադրական կոոպերատիվների կործան-
ման պատճառները։

10. Ինչո՞ւ համար ե տեղի ունենում արտադր. կոոպերա-
տիվների կապիտալիստական փոխակերպությունը։

11. Ի՞նչ նշանակություն ունեն արտադրական կոոպերա-
տիվները հեղափոխությունից հետո, խորհրդային իշխանության
ժամանակ։

12. Ի՞նչ ապագա ունեն խորհրդային արտադրական կոո-
պերատիվները։

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐ

Աշխատավորական արտելներն, արտադրական ընկերություն-
ների նման, հանդիսանում են արտադրական ասպարիզում վորպես
կոոպերատիվներ։ Բայց նրանց մեջ գոյություն ունեն եյական
տարբերություններ։ Արտադրական ընկերությունն աշխատում
ե իր սեփական ձեռնարկության մեջ, իր սեփական արտադրա-
կան գործիքներով և ինքն ե ապրանք վաճառում շուկայում։

Աշխատավորական արտելն աշխատում ե ուրիշի ձեռնար-
կության մեջ, հաճախ ուրիշի մեքենաներով ու գործիքներով՝
հանձնելով պատրաստած ապրանքը ձեռնարկատիրոջ։ Աշխա-
տավորական արտելը կազմակերպում ե իր անդամներին՝ իրենց
աշխատանքը հավաքական կերպով, հավաքաբար աշխատելու
համար, բայց վո՞չ միացյալ կերպով տիրելու, սեփականացնե-
լու համար։

Աշխատավորական արտելները բավական շատ տարածված
եյին Ռուսաստանում, ինչպես բանվորների, այնպես ել չքա-
վոր գյուղացիների շրջանում։ Վորպես որինակ կարելի յե մատ-
նանշել ձկնորսների, հյուսների, բեռնակիրների, բարձողների
և ուրիշ արտելներ։ Չուտ բանվորական շրջանում հայտնի ե-
յին «գործարանային արտելներ»-ը։

Այսպես, որինակ, 1890 թ. Բրիտանիայի նահանգի, Մայլ-ցեակի շրջանի, Ձերնյատինո-Ստարսկի գործարանը՝ աշխատեցնելու համար վարձել եր արտելը, վոր իր վրա վերցրել եր գործարանի շենքը պաշտպանելու պարտավորութիւն, Մայլ-ցովսկի գործարանների գրասենյակից ապակու արտադրութեան համար անհրաժեշտ նյութեր ստանալ սահմանված գներով և հանձնել նույն տեղ ել իր արտադրած ապակին՝ սահմանած գներով։ Ամբողջ արտադրութիւնը պետք ե կատարվեր Մայլցի գրասենյակի ցուցմունքներով։ Նման արտելներ գոյութիւն ունեցին մի ժամանակ նաև Ուրալում։

Այդ արտելները շատ չգարգացան, վորովհետև չափազանց ծանր էլին տերերի առաջարկած այն պայմանները, վորոնց մեջ պիտի տարվեր աշխատանքը։

Ձեռնարկատերերը չէին շահագրգռված արտելները պաշտպանել, վորովհետև նրանք վախենում էին գործ ունենալ բանվորների կազմակերպութիւնների հետ, վորոնք կարող էին տերերին վոչ ձեռնառնալ պահանջներ առաջադրել։

Իսկ ինչ վերաբերում ե գյուղացական շրջանում գոյութիւն ունեցող աշխատավորական արտելներին, սրանց մասին դեռ գրող Ի. Ս. Տուրգենևը նկատել եր, վոր գրանք հանդիսանում են չքավոր գյուղացիների աշխատանքը կուլակների կողմից սեփականացնելու միջոցներից մեկը։

Որինակի համար, չեթե վերցնելու լինենք Սպիտակ ծովի վրա գոյութիւն ունեցող ձկնորսական արտելները, կտեսնենք, վոր արտել կազմում են սովորաբար, ուռկանի կամ նավակի տերերն այն ձկնորսներից, վորոնք իրենց ձկնորսական պիտուքները և նավակները չունեն։ Սովորաբար, արտելը դեկավարում ե նավակի կամ ուռկանի տերը։

Նա ստանում ե վորսի մեծ մասը, իսկ մնացած անդամները՝ չնչին բաժինը։

Այդպես ե և հյուսների արտելներում. ընտրված «ըյադ-չիկը», բանակցում ե ձեռնարկատերերի հետ, պայմաններ ե կապում, հաշիվներն ե վերջացնում և, սովորաբար, շահում ե

ահագին դրամ ի հաշիվ մյուս անդամների։ Արտելի ոգնութեամբ «ըյադչիկ»-ը սողոսկում ե բուրժուազիայի շարքերը։

Աշխատավորական արտելները դեռևս տեղ ունեն կապիտալիստական անզարգացած տնտեսութեան մեջ։ Նրանք աստիճանաբար մեռնում են։ Ձեռնարկատերերի առաջ բանվորների շահերի պաշտպանումն իրենց վրա են վերցնում արհեստակցական միութիւնները։

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչ տարբերութիւն կա արտադրական ընկերութեան և աշխատավորական արտելի միջև։

2. Ի՞նչ պայմաններով են աշխատում «գործարանային արտելները»։

3. Ի՞նչու գործարանային արտելները չերկար կյանք չունեցան։

4. Ի՞նչու գյուղացական աշխատավորական արտելներում հնարավոր ե աշխատավորների շահագործումը։

5. Ո՞վ ե այժմ պաշտպանում բանվորների շահերը կապիտալիստների հանդեպ։

ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

III

ՀԱՅԵՐԵՆԻ ՏՆՍՏՆԱՆԱՐՀԱՆՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻԱՆ

ՏՃԱՅՆԱ-ԱՐԽԵՍԱ- Այս տիպի կոոպերացիան սկսել ե կազմակերպվել Հայաստանում միայն 1925 թ.։ Տիպերի առաջ գալը Մեր յերկրի տնայնա-արհեստագործական Հայաստանում արդյունաբերութիւնը դեռևս նոր ե կոոպերացման ուղին բռնել։ Տնայնա-արհեստագործական կոոպերացիայի կարևորութիւնը մեր հետամնաց և աղքատիկ արդյունաբերութեան զարգացման համար չափազանց խոշոր նշա-

նակութիւնն ունի: Հայաստանում գոյութիւնն ունեցող արդիւն-
նաբերական բնույթ կրող բազմաթիւ արհեստներից ամենատա-
րածվածներն են, թե քաղաքներում և թե գյուղերում, գոր-
գագործութիւնը, շուհակութիւնը, փայտի և մետաղների վե-
րամշակութիւնը, կաշեգործութիւնը և բրուտագործութիւնը
և այլն:

Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմխորհը 1925 թ. վորոշում է կազմա-
կերպել հատուկ տնայնագործական կոմիտե, վորի վրա պար-
տականութիւն է դրվում աջակցելու տնայնագործական ար-
հեստների զարգացման և արհեստագործների կոոպերացման
աշխատանքներին:

Տնայնագործական կոմիտեն բաց արեց Յերևանում գոր-
գագործության և շուհակության ցուցադրական դպրոց-ար-
հեստանոց, վորը կարճ ժամանակում ցույց տվեց արդիւնա-
վետ գործունեութիւն:

Միաժամանակ Տնայնագործական կոմիտեն տարաւ կազ-
մակերպչական աշխատանքներ արհեստագործների կոոպերաց-
ման շուրջը: Այդպիսով կարճ ժամանակամիջոցում կազմակերպ-
վեցին Հայաստանում մի քանի տասնյակ տնայնա-արհեստա-
գործական կոոպերատիւներ:

Տնայնագործական Զնայած Հայաստանի չքավոր ու անկազ-
արհեստագործական մակերպ տնայնագործ-արհեստավորները
կոոպերատիւների համար համագործակցութիւնը դեռևս
ցանցը խորթ, անսովոր յերևույթ էր, բայց և
այնպես տարեց տարի խտանում է արտադրական արտեղները
թիւը, վորն ապացուցանում է ներքևի աղյուսակը:

Ինչպես տեսնում ենք՝ կոոպերացումը հաջողութիւնն ունի
գլխավորապես յերկու արհեստների ասպարեզում (շուհակու-
թյան և փայտի վերամշակության), վորոնք զարգանալու տրվ
յալներ ունեն առավելապես գյուղացության շրջանում, վորը
շնորհիւ մեր յերկրի աշխարհագրական ու կլիմայական պայ-
մաններին, միայն հողագործությամբ չի կարող ապրել: Վե-
րոհիշյալ արհեստները կարող են լրացնել մեր գյուղացու բու-
ջիւր բացը:

№	ԱՐՀԵՍՏՆԵՐ	1926 թ.		1927 թ.		ԾԱՆՈԹՈՒ- ԹՅՈՒՆ
		Արտեղ- ների թիւը	Անդամ- ների թիւը	Արտեղ- ների թիւը	Անդամ- ների թիւը	
1.	Վոստալանգոր- ծութիւն (շուհա- կութիւն)	5	46	9	120	Յերևանում, Ն.- Բայազետ. և Եջ- միածնում
2.	Գորգագործութ. .	1	23	1	23	Իջևանում
3.	Փայտի վերամշակ.	4	56	4	101	Դիլիշանի գավ
4.	Յերկաթագործ. .	—	—	3	17	Յերևանում
5.	Վոսկերչութիւն .	2	13	2	13	» »
6.	Ծխախոտագործ. .	1	7	1	9	» »
7.	Ոճառագործութ. .	1	5	2	10	» »
8.	Սննդագործութ. .	—	—	3	15	» »
6.	Ղուսանկարչութ. .	1	5	1	5	» »
10.	Կաշեգործութ. .	1	5	1	43	» »
Ընդամենը .		16	161	27	356	

Տնայնա-արհեստագործական կոոպերա-
ցիայի ցանցի խտացման հետևանքով՝ միու-
թյան անհրաժեշտութիւնն է զգացվում:
«Հայեցարկոոպ»-ը 1926 թ. ոգոստոսի 16-ին Յերևանում գու-
մարվում է արհեստագործական արտեղների լիազորների առա-
ջին համագումարը, վոր կազմակերպում է իր միութիւնը—
«Հայտնարկոոպ»:

«Հայտնարկոոպ» ի հիմնական խնդիրներն են.

ա) Յուլց տալ կազմակերպչական և տնտեսական դե-
կավարութիւն՝ ինչպես իր ցանցի մեջ մտած անգամ-
միավորներին, այնպես ել նորանոր արտեղներին:

բ) Աջակցել իր անդամներին վարկավորման հարցե-
րում:

գ) Հայթիայթել և մատակարարել իր անդամներին
հում նյութեր, գործիքներ և արտադրութիւն անհրաժեշտ
միջոցներ, աջակցել նրանց արտադրութիւն վաճառահան-
ման գործին:

դ) Ամեն կերպ նպաստել կոոպերացած-արհեստա-
գործների կուլտուրական գործին:

Հայաստանի տնայնա-արհեստագործական կոոպերացիան, չնայած իր դեռևս թույլ կազմվածքին, կանգնած է նորանոր անելիքների առաջ և ունի աշխատանքի լայն ասպարեզ և հաջողության հեռանկարներ:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐ ՅԵՎ ՀՈՂԸ ՄՇԱԿՈՂ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ

Հողը մշակող կոմմուններ կայուն չքաղվոր գյուղացին ստիպեցին, որ անհատական ձևով, կամ թե ակամա, կապված մնալ հողի հետ:

Խորհրդային արդյունաբերությունը դեռևս այնքան չի զարգացել, վոր կարողանա տեղավորել իր մեջ գյուղից բոլոր յեկողներին: Բայց չքաղվորը մեն-մենակ չի կարող բարձրացնել իր տնտեսությունը: Այդ բանի համար նա բավականաչափ սերմեր, անասուն, մեքենաներ և այլն չունի:

Հողը մշակելու, ոգտագործելու նպատակով, չքաղվոր գյուղացիները, նրանց հետ և միջակների մի մասը, կազմակերպվում են հողագործական արտելների շուրջ:

Հողագործական արտելների անդամները հողից ոգտվում են միացյալ յեղանակով, միասին են մշակում հողը և ապա ստացած արդյունքը բաժանում են իրենց մեջ՝ համաձայն այն աշխատանքի չափի, վոր յուրաքանչյուր մասնակցող դրել է հողի մշակման մեջ: Որինակի համար, յեթե արտելի անդամն ամբողջ տարում աշխատել է հողի վրա 200 ուր, իսկ մյուսը 100 ուր, այդ դեպքում, արդյունքը բաժանելու ժամանակ, առաջինը յերկու անգամ ավելի յե ստանում յերկրորդից:

Բացի հողագործական արտելներից, մենք գիտենք կոլեկտիվ (հավաքական, միացյալ) հողագործական տնտեսությունների մի ուրիշ տեսակ ևս—կոմմունանները:

Կոմմունաների տարբերությունն արտելներից այն է, վոր արտելների անդամները պահպանում են իրենց անհատական

տնտեսությունները (ապարակը, բանջարանոցը և այլն), իսկ կոմմունայում բոլորը միանում են ընդհանուր կարողության շուրջը: Կոմմունայում բոլորն աշխատում են վորպես միևնույն ընտանիքի անդամներ, և միմյանքի բաշխումը կատարվում է վոշ թե ըստ աշխատավորների, այլ ըստ ուտողների¹⁾:

Գոյություն ունեն հողի հավաքական մշակման ընկերություններ ևս. սրանք ժամանակավոր միություններ են, վորոնք կատարում են հողի վրա վորևե հատուկ աշխատանք (առվույտի, յերեքնուկի ցանքս և այլն):

Հողագործական արտելները, կոմմունաները և ընկերությունները՝ կրճատ կերպով կոչվում են «կոլխոզներ»՝ հավաքական տնտեսություններ: Մենք ծանոթանալու յենք գլխավորապես հողագործական արտելներին, վորովհետև նրանք ավելի շատ տարածված և տարածվել են Խ. Ս. Հ. Մ. մեջ:

Հողագործական արտելները, կոոպերացիա
սեղների աճցալը յի մյուս տեսակների նման, սկիզբն առան հարյուր տարի առաջ, յերբ արդյունաբերական կապիտալիզմն իր առաջին քայլեր եր անում Արևմտյան Յեվրոպայում: Բանվոր դասակարգի չքաղվորությունը ստիպում է բանվորներին վորևե յերբ վորոնել իր անելանելի դրությունից դուրս գալու համար: Բանվոր դասակարգի մի մասը, ավելի դիմացկուն մասը, քաղաքական պայքարի մեջ մտնելով, հասնում եր այն բանին, վոր աշխատավորների շահերի տեսակետից եր վերակազմում պետությունը. մյուս մասը ձգտում եր ստեղծել այնպիսի աշխատավորական տնտեսավարական կազմակերպություններ, վորոնք անկախ լինելին կապիտալիստներից և ունեն իսկ առանց քաղաքական պայքարի բարելավելին բանվորների դրությունը: Շատերը կարծում եյին, վոր Հյուսիսային Ամերիկայի ազատ հողերի վրա, վորտեղ վերաբնակիչներն ամեն

1) Ըստ եյություն, կոմմունան հանդիսանում է ավելի կատարելագործված կազմակերպություն, քան կոոպերատիվը (արտել, ընկերություն): Բայց վորովհետև հողային կոմմունաները մտնում են Խ. Ս. Հ. Մ. կոոպերատիվ ցանցի մեջ, ուստի այս դրույցում չի կարելի ներանց մասին չիոսել:

տեսակի արտոնութիւններ եյին տրվում, կարելի չէ հողային
այնպիսի համայնքներ ստեղծել, վորոնք լիովին կապահովեն
իրենց անդամներին այն պատահարներէր, վոր տեսնում եր պրո-
լետարիատը կապիտալիզմի գարգացման հետեանքով: Իսկապես,
այդ շարժման համակրողներէ կողմից (Ո. Ուլեն, Կաբե և ու-
րիշներ) Հ. Ամերիկայում նման համայնքներ (կոմունաներ և
արտելներ) ստեղծուցին:

Բայց այդ բոլոր կազմակերպութիւնները յերկար չապրե-
ցին և շուտով լուծուցին:

Համայնքներէ կործանման գլխավոր պատճառն այն եր,
վոր կապիտալիստական պայմաններում վոչ-կապիտալիստական
տնտեսութիւններէ ստեղծումն անհնարին ե դառնում: Իսկապես,
հողային համայնքները ստիպված են զանազան հարաբերու-
թիւններէ և պայմաններէ մեջ մտնել շրջապատող աշխարհի
հետ: Հողային համայնքները, սեփական արդյունաբերութիւն
չունենալով, վաճառում եյին իրենց գյուղատնտեսութեան մը-
թերքները և ստացած գրամներով արդյունաբերութեան ար-
տադրանքներ (յերկրագործական գործիքներ, մանուֆակտուրա
և այլն) եյին գնում:

Այդ ժամանակ հնարավոր եր յերկու դեպք.—արտելներն
ու կոմունաները կարող եյին յերկրագործական մթերքներէ
վաճառքից վորոշ ոգուտ ստանալ, այսինքն՝ նրանց վճարելու
եյին հանձնած մթերքի ինքնարժեքից ավելի բարձր, կամ ար-
տելներէր ու կոմունայից կապիտալիստները ստանալու եյին
ոգուտ, չվճարելով մթերքներէ ինքնարժեքը և արդյունաբերա-
կան արտադրանքներէ վրա բարձր գներ սահմանելով:

Առաջին դեպքում հողագործական արտելներն ու կոմուն-
աները վերածվելու եյին սովորական կապիտալիստական և սո-
վակերպութիւններէ, այսինքն՝ նրանք գոյութիւն կունենա-
լին անաշխատ յեկամութեանը, իսկ յերկրորդ դեպքում՝ նրանց
տնտեսութիւնները, վնաս ստանալու դեպքում, պետք ե քայքայ-
վելին:

Ռուսաստանում, հեղափոխութիւնից առաջ, այդ վիճակին
յենթարկվեցին հողագործական արտելներէ մեծ մասը: Այդ

կազմակերպութիւնները մեծ մասամբ գյուղացիներէ ժամա-
նակավոր միութիւններ եյին, վորոնք կազմակերպվում եյին
ծայրյերկիրներէ հողերէ վրա բնակեցնելու, կալվածատիրա-
կան հողերէ գնման կամ վարձկալման ժամանակ, գյու-
ղատնտեսական մեքենաների ու գործիքների ոգտագործման
դեպքում և այլն:

Այսպես, որինակ, Խերսոնի նահանգում, 1894 թ. և 1902
թ. ժամանակամիջոցում, առաջ յեկան մինչև 120 արտել, վո-
րոնց արամագրութեան տակ մոտ 4,000 դեսյատին հող կար¹⁾:
1903 թ. այդ կազմակերպութիւններէ հետքն ել չի մնում:
Դուրս ե գալիս, վոր արտելները միացրել եյին միմյանց հետ
միմիայն անդամներէ ցանքսերը: Յանքսը գրավ եր դրվում մի
վորեւ վարկային հիմնաբկութեան մոտ և, ստացված փողով,
յուրաքանչյուր անդամն առանձին-առանձին իր համար ձեռք
եր բերում մեքենաներ, անասուններ և ուրիշ բաներ: Սրա-
նից հետո, յուրաքանչյուրն անկախ վերցնում եր իր հասած
բերքը:

Անդամներէ տնտեսութիւնն աստիճանաբար հարստանա-
լով՝ վերանում ե արտել ունենալու կարիքը, և վերջ ի վեր-
ջո յեղածներն ել լուծուցին:

Բասրակներէ հողա- Ավելի մնայուն հանդիսացան այն ար-
գործական արեւելքե տեղերը, վորոնք կազմակերպվեցին Իտա-
լիայում, Ռեշո Եմիլիո գավառում, բատրակներէ շրջանում:

Բատրակները նախորդ կազմակերպված լինելով ախա-
տավորական արտելներէ շուրջը, միասին վարձվում եյին կալ-
վածատերերէ մոտ, իրենց սեփական մեքենաներով:

Կալվածատերերէ հետ տեղի ունեցած մի ընդհարումից
հետո, յերբ վերջիններս հրաժարվեցին ընդունել բատրակներին
այն վարձագնով, վոր արտելներն եյին ձեռք բերել, բատրակ-
ներն ինքնուրույն կերպով, վարձկալով վերցնում են մի բանի
կալված ե միացյալ ուժերով սկսում են մշակել:

¹⁾ Այդ «Լիվիցիու արտելներն» եյին, վորոնք իրենց անունը
ստացել եյին մի կողպերատորի ազգանունից, վոր նրանց մեծ ոգնու-
թիւն եր ցույց տվի և զրի առել նրանց գործունեութիւնը:

1913 թ. վերջում Ռեշո-Եմիրիոյում հաշվում էյին այդպիսի 52 արտել՝ 14,024 անդամով, վորոնց արամադրության տակ կար 5,061 հեկտար (հեկտարը մոտ մի դեսյատին) կապալով վերցված հող (միջին թվով 1 արտելին՝ $97\frac{1}{2}$ հեկտար, կամ մի անդամին՝ $\frac{1}{3}$ հեկտար): Կապալավարձը կազմում էր տարեկան 525,785 լիրա՝ այսինքն, մոտ 200,000 ու. (մի հեկտարին 40 ու.): Շատ հետաքրքիր էր Ռեշո-Եմիրիոյում գործող արտելների ներքին կազմակերպությունը: Արտելի գործերի տերն ու տնորենը հանդիսանում է անդամների ընդհանուր ժողովը, վոր ընտրում իր կողմից խորհուրդ, վերստուգիչ հանձնախումբ և նախագահ. նախագահը հանդիսանում է բոլոր աշխատանքների տեսիքական ղեկավարը: Յուրաքանչյուր որ նախագահը, առանձին աշխատանքների վարիչների հետ միասին, կազմում է զբաղմունքի ընդհանուր կարգ՝ արտելի բոլոր անդամների համար:

Բոլոր անդամներն ստանում են աշխատավարձ՝ արհմիության զրույցների համաձայն:

Աշխատավարձը վճարվում է շաբաթը մի անգամ—մի մասը զրամով, մի մասը տնտեսության արտադրանքներով և մի մասը շրջանային սպառկոողներատիվի ապրանքային կտրոններով: Անդամի աշխատավարձի մի մասն էլ յետ է պահվում մինչև տարվա վերջը, յերբ փակվում են անդամի հաշիվները:

Յեթե արտելն ունի գուտ ոգուտ, այդպիսին հատկացվում է պահեստի զրամագլխին (յենթադրվելիք վնասները ծածկելու համար), իսկ մի մասն էլ հատկացվում է ընդհանուր զրամագլխին (նոր մեքենաներ գնելու, ծերունիներին և հաշմանդամներին խնամելու և մանկական մսուրներ կազմակերպելու և այլն): Չուտ ոգուտի մնացորդը բաշխվում է վորպես փայա վճարների տոկոսիք, արվում է անդամներին վորպես գիվիդենտ՝ համաձայն յուրաքանչյուրի կատարած աշխատանքի:

Բայց ճիշտ է, վոր Ռեշո-Եմիրիոյի արտելներն անկարող էյին կլանել իրենց անդամների ամբողջ աշխատանքը: Անդամների չեկամտի գլխավոր աղբյուրը կազմում է դարձյալ դրսից չեկած աշխատավարձը: Հողագործությունը մնում է դարձյալ

վորպես ոժանդակող զբաղմունք և ոգնում է բատրակներին գլխավորապես նրանց գործադրկության ժամանակ:

Այդպիսով, տեսնում ենք, վոր նույնիսկ Ռեշո-Եմիրիոյի պրոլետարական և ավելի գիտակից կազմ ունեցող արտելները չեն կարողանում ազատել իրենց անդամներին կալվածատերի մոտ կատարվող վարձու աշխատանքից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1. Յեթե ձեր շրջանում մինչև հեղափոխությունը հավաքական տնտեսություններ են գոյություն ունեցել, ցույց տվեք, թե յերբ են նրանք հիմնվել:

2. Նկարագրեցե՛ք ձեզ հայտնի, մինչ-հեղափոխական շրջանի, հավաքական տնտեսության կազմակերպությունը:

3. Ի՞նչ արդյունքներ ունեցավ մինչ-հեղափոխական կողմնախոսության գործունեյությունը:

Հողային կոլեկտիվները հոկտեմբերյան հեղափոխության ոգնուցնելու հետքերը հոկտեմբերյան թյամբ կալվածատերերին արտաքսելուց հետո՝ գյուղացության ձեռքին անցան բավականին մեծ քանակության հողեր: Գյուղացությունը սեփական և վարձակալությամբ վերցրած 70% վարելահողերի փոխարեն այժմ սկսեց ոգտվել բոլոր վարելահողերի 96% -ից: Բայց և այնպես, գյուղացական հողամասերի այդ ավելացումով հողի սովը չվերացավ: 1916 թ. յուրաքանչյուր յերկրագործի ընկնում էր, միջին թվով, 1,87 դեսյատին, իսկ 1917 թ. հետո՝ միայն 2,26 դեսյատին հող: Ազգայնակցության տարեց-տարի աճման հետևանքով (յուրաքանչյուր հազար բնակիչին՝ 75 մարդ) $\frac{1}{3}$ դեսյատինով ավելացած հողը կորցնում է իր արժեքը:

Նախկին կալվածատիրական և արքունապատկան 200 միլիոն դեսյատինց ավելի հողերը, բացառությամբ սովխոզներին և կոլխոզներին (խորհրդային և հավաքական տնտեսություններին) հատկացրած 5 միլիոն դես. հողամասերից, գյուղացական նեղ ու մանր հողաշերտերի վերածվեցին: Հենց հողերի նման մանրացման հետևանքով, մեր տնտեսությունը, Հողժողկոմի

հաշվով, տարեկան մոտ 100 միլիոն փութ հացահատիկի կորուստ է ունենում:

Ձնայած այն հանգամանքին, վոր գյուղի չքավոր դասը ձեռք բերեց կալվածատերերից և կուլակներից խլված մեքենաների և անասունների վորոշ մասը, սակայն, սովի և քաղաքացիական կռիվների հետևանքով խիստ քայքայված գյուղատնտեսությունն անարժեք դարձրեց գյուղացիների ձեռք բերած գույքերը: Այդ պատճառով, բանվորա-գյուղացիական կառավարության առաջ հարց բարձրացավ—նպաստել ամեն կերպ գյուղացիական մանր տնտեսությունների խոշորացման և համայնացման գործին, վորովհետև խոշոր գյուղատնտեսության արտադրողականությունն ավելի մեծ է, քան մանր տնտեսությանը: Այդ դեպքում շատ բնական է, վոր գյուղական չքավորությունը, վոր ավելի պակաս չափով էր կապված գյուղի հին կարգերի հետ, ամենից ավելի զգար համախմբման, միության կարիքը և սիրով սկսեց հողային կոլեկտիվներ կազմակերպել, միացյալ ուժերով սեքենաներ ձեռք բերել, շենքեր կառուցել և հողեր մշակել:

Հավաքական տնտեսությունների—«կոլխոզների» զարգացումը յերևում է հետևյալ աղյուսակից.

	1918 ը.	1919 ը.	1920 թ.	1921 թ.	1922 թ.	1923 թ.	1924 թ.
կոմմունաներ	912	1961	1892	3120	1672	1808	1729
Արտելներ	—	3603	7722	10,185	8130	7356	8112
Ընկերութ.	—	622	886	2514	1605	3609	4217
Ընդամենը	912	6186	10.500	15.819	11,407	12 733	14.050

Բացի դրանից, Ուկրաինայում 1924 թ. գոյություն ունեյին մոտ 6000 «կոլխոզներ», վորոնք մյուս կոլխոզների հետ հավասար էին 20,000 կոլեկտիվի:

Բերված աղյուսակից յերևում է, վոր կոլխոզների թիվը բավականաչափ կրճատվում է «ՆեՊ»-ի առաջին տարում (1922 թ.): Բայց 1924 թ. կոլխոզները դարձյալ հավասարվում են նախ-

կին բանակին: Այդ յերևույթը բացատրվում է այն հանգամանքով, վոր սովի տարիներին բանվորներից շատերը, գործարանները և քաղաքները թողնելով վերադառնում են գյուղ, վորտեղ կոլեկտիվ տնտեսություններ են կազմակերպվում: Հետագայում բանվորների վերադարձը դեպի քաղաքները՝ դադարեցնում է կոլեկտիվների աճումը: Իսկ վերջին տարիներս գյուղացության շրջանում նկատվում է հավաքական հողագործություն կազմակերպելու ուժեղ ձգտում, վորի հետևանքով արագ աճում են արտելներ և ընկերություններ: Հողագործական կոլեկտիվների մեջ արտելներն ավելի կայունություն և կենսունակություն են ցուցադրել: Հեղափոխության ընթացքում արտելները կոլխոզների կեսից ավելին էյին կազմում: ԽՍՀ Միության գյուղատնտեսական կոոպորատիվների $\frac{1}{4}$ մասը կազմում են կոլեկտիվները: Նրանց շուրջը համախմբվել են մոտավորապես 1 միլիոն հոգի (Միության ազգաբնակչության $\frac{1}{100}$ -մասը): Մի կոլեկտիվին ընկնում է միջին թվով 55 հոգի, վորոնցից 24-ը չափահաս բանվորներ են:

Արտելների յեվ կոմ- Վոր գյուղացին— չքավորը, միջակը թե մուսուլմանների գասա- կուլակն է մասնակցում արտելին և կոմկարգալից կազմը մոռնալին:

1918 և 1920 թ. թ. ընթացքում կառավարված 447 արտելի և 129 կոմմունայի հետագոտությունից հետևյալն է յերևում. արտելներում ձիազուրկ և միաձի ընտանիքների թիվը հաշված է բոլոր միավորների $\frac{8}{10}$ ($84\frac{0}{10}$)-ից ավելի, իսկ յերկձի և յեռաձի ընտանիքների թիվը հաշված է $\frac{2}{10}$ ($16\frac{0}{10}$)-ից պակաս: Կոմմունաների ձիազուրկ և միաձի ընտանիքների թիվը $\frac{9}{10}$ ($86,8\frac{0}{10}$) մասը, իսկ յերկձի և յեռաձի ընտանիքների թիվը հաշված է մոտ $\frac{1}{10}$ ($13,2\frac{0}{10}$) մասը: Բերած աղյուսակը ցույց է տալիս, վոր կոլխոզներում գերակշռում են չքավոր յեվ միջակ գյուղացիները (ձիազուրկ և միաձի ընտանիքները):

«Կոլխոզ»-ների բնդ- Հողային արտելների ժամանակակից կադ- հաճուս կազմակեր- մակերպությունը հետևյալ պատկերն ունի: պուրբունց կոլեկտիվները գործում են համաձայն ԽՍՀ Միության կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1924 թ. ոգոստո-

սի 24-ի հրատարակած դեկրետի: Ըստ այդ որենքի (և ուրիշ հրահանգների) կոլլեկտիվներին անդամագրվելու իրավունք ունեն **ԽՍՀ Միության** այն բոլոր քաղաքացիները, վորոնք խորհուրդներում ընտրելու իրավունք ունեն և պարապում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ առնչության ունեցող վորևե զբաղմունքով: Հիմնադիրներն իրենց կոլլեկտիվի կանոնադրությունը գրանցելու համար ներկայացնում են նահանգական հոդալին բաժինները: Կանոնադրության մեջ պետք է ցույց տրվի կազմակերպության անունը, նրա գործունեյության շրջանը, կազմակերպության նպատակը, անդամների կոլլեկտիվի մեջ մտնելու և նրանից հեռանալու պայմանները, նրա ղեկավարության կարգը և այլ պայմաններ:

Յեթե արտելի կամ ընկերության կանոնադրությունը չի հակասում գոյություն ունեցող դեկրետներին, նահանգական հոդբաժինը պարտավոր է կարճ միջոցում գրանցել (բեգիստրացիայի յենթարկել) կոլլեկտիվի կանոնադրությունը, վորից հետո իրավունք է տրվում գույքեր և կայքեր ձեռք բերել և տարակայել, պարտավորություններ հանձն առնել, պայմանագրեր կնքել, հարցեր հարուցել և պաշտպանել գատարանում (այդ կոչվում է ձեռք բերել «իրավական անձի» իրավունքներ):

Համաձայն հոդալին որենսգրքի, յերբ կոլխոզն ունի իրեն հատկացրած հողավասը և վոչ թե վարձկալությամբ վերցված հողեր, այդ դեպքում նա ձեռք է բերում «հոդալին ընկերության» իրավունքները: Ուրիշ խոսքով, այդ կոլլեկտիվը մտնում է պետական-հասարակական բնակավայրերի ցանցի մեջ և ռստանում է համապատասխան իրավունքները («Հոդալին Որենսգիրք» հոդված 41 և 90):

Կոլլեկտիվ տնտեսությունը կարող է ստանալ հողբաժիններից այն հողերը, վորոնցից ոգտվում ելին առաջ նրա անդամներն ընդհանուր հիմունքներով կամ նոր հողբաժին՝ մշտական աշխատավորական ոգտագործման նպատակով ծառայեցնելու համար: Հավաքական տնտեսությանը կարող է պայմանագրով հանձնվել՝ վարձակալական հողամասեր՝ ոգտագործելու նպատակով:

Ամբողջ հասարակությունը, կամ ծխերից մի մասը հավաքական տնտեսության վերածելու համար՝ պահանջվում է հասարակության տնտեսությունների $\frac{2}{3}$ մասի կամ նրա իրավասու անդամների կեսի մասնակցությամբ կայացած ընդհանուր ժողովի վորոշումը:

Հասարակության $\frac{1}{5}$ մասի պահանջմամբ, կարելի չե կազմել հավաքական տնտեսություն՝ հակառակ մյուս մեծամասնության ցանկության:

Այս դեպքում, բաժանվող հավաքական տնտեսությանը հողբաժին է հատկացվում՝ գավառական հողբաժնի ցուցմունքներով: Հողային կոլլեկտիվների հողաշինարարությունը կատարվում է առաջին հերթին: Հողկոլլեկտիվը, գյուղատնտեսական հարկեր վճարելիս, $10\frac{0}{100}$ -ից մինչև $25\frac{0}{100}$ գեղչի արտոնություններ ունի: Հողկոլլեկտիվները ստանում են պետական վարկեր՝ արտոնյալ պայմաններով:

Այգալիսով, կոմմունաները, արտելները և ընկերությունները **ԽՍՀ Միության** սահմաններում գտնվում են աջալիսի բացառիկ բարենաշող պայմաններում, վորպիսի պայմաններից վոչ մի կոմմունա չի ոգտվում կապիտալիստական պետությունների մեջ:

Հողային կոլլեկտիվ-Այժմ ծանոթանանք կոլլեկտիվ տնտեսերի (հողագործակ. սո թյուններից ալվիլի տարածված հողատեսելներ) ճերբից գործական արտելների ներքին կազմակերպակերպությունը: Վորովհետև ամբողջ արտելը հիմնված է իր անդամների անձնական աշխատանքի վրա, ուստի արտել մտնող յուրաքանչյուր նոր անդամ ընտրվում է վեց ամիս վորձվելու նախապայմանով և, յերբ այդ ժամանակամիջոցում նոր անդամը ցույց է տալիս աշխատանքի ընդունակություն և պատրաստ է հավաքական պայմանով աշխատել, նա կարող է ընդունվել արտելի մեջ: Արտելի անդամը պարտավոր է լիովին վճարել վորոշված մուտքի և փայի վճարները: Անդամը բաժնեվճարի զիմաց կարող է արտելին հանձնել իր ունեցածից այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ է արտելի տնտեսավարության համար: Արտելն իր անդամներից կարող է ի-

ըրբ ընդունել՝ վորպես ավանդ, նաև դրամ և կայք: Արտելի ախն անդամները, վորոնք կամավոր կերպով հեռանում են կամ հեռացվում են — յետ են ստանում իրենց բաժնեվճարը, ավանդները և պարտավոր են վորոշ ժամանակամիջոցում թողնել արտելի ագարակը: Յուրաքանչյուր անգամ պարտավոր ե իր անձնական աշխատանքով մասնակցել արտելի գործին: Արտելը վարձու աշխատանքին ե դիմում միայն ախ բացառիկ դեպքերում, յերբ կարիք ե զգում մասնագետների ոգնության (դարբինների, հյուսների, ուսուցիչների և այլն), կամ յերբ արտելը չի կարողանում ժամանակին կատարել գյուղատնտեսական աշխատանքները (բերքի հավաքումը և այլն): Յերկու դեպքերումն ել վարձակալումը տարվում ե աշխատանքի որենսդրելի և այլ հրահանգների համաձայն: Արտելի անդամի աշխատանքը վարձատրվում ե ընդհանուր ժողովների վորոշումների համաձայն: Արտելի տերն ու տնորենը հանդիսանում ե նրա անդամների ընդհանուր ժողովը: Բոլոր գործերը վճռվում են ձայների մեծամասնությամբ: Արտելի ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար ընտրվում ե վարչութուն, իսկ գործերը վերահսկելու համար՝ վերստուգիչ հանձնաժողով: Յեթե տարվա վերջն արտելը զուտ ոգուտ ե ունենում, այդ դեպքում նրա մի մասը հատկացվում ե պահեստի դրամագլխին՝ հնարավոր փրամները ծածկելու համար, մի մասն՝ ընդհանուր դրամագլխին՝ գործերն ընդարձակելու համար, իսկ մի մասն ել տրվում ե անդամներին վորպես աշխատանքի լրացուցիչ վարձատրություն, նրանց աշխատաժամերի քանակության համաձայն:

Արտելը փակվում, լուծարքի չե յեթարկվում անդամների ընդհանուր ժողովի վորոշման համաձայն միայն ախ դեպքում, յերբ նրա անդամների թիվն որենքով սահմանված 15 հոգուց պակաս ե կամ արտելը սնանկացել ե (դատարանի վորոշմամբ):

Արտելը կարող ե փակվել նահանգական գործկոմի կարգադրությամբ միայն ախ դեպքում, յերբ արտելը շեղվել ե կանոնադրության մեջ մատնանշած նպատակներից և յերբ «Արտելի գործունեյությունը հակասում ե պետության շահերին»:

Արտելի լուծարքի, փակման դեպքում անդամներին վե-

րապահվում են նրանց բաժնեվճարները և մյուս մուծումները՝ լինի դրամով, թե մթերքներով ու հողամասերով և այլն, իսկ մնացորդ ունեցվածքը հատկացվում ե հանրագուտ նպատակների (դպրոցների և այլն) կամ հանձնվում ե գավգործկոմին:

Այդպիսով, արտելն իր ներքին կառուցվածքով վրջնով չի տարբերվում մյուս կոոպերատիվ կազմակերպություններից: Արտելն ամենից շատ նմանվում ե արտադրական ընկերություններին:


Կոլխոզների ժամանակակից կոլտնտեսությունների
ճակատից վիճակը յերեք քառորդ մասը տեղավորված ե նախկին կալվածատիրական, վանքապատկան, արքունական և այլ հողերի վրա: Կոլխոզների մնացած մասը ձեռք են բերել հողաբաժին յերկրի ծայրամասերում:

Կոմսոնաներին, արտելներին և ընկերություններին հատկացված 1.249.527 դեսյատին հողամասից վարելահող են 562.495 դեսյատին, գյուղացական ընդհանուր վարելահողից $\frac{1}{100}$ -մասով պակաս:

Մի կոլխոզին (50 հոգի) ընկնում միջին թվով 140 դեսյատին հող կամ մի անդամ-աշխատավորին 6 դեսյատին, իսկ մի հոգուն — $2\frac{1}{2}$ -ական դեսյատին հող:

Մի միջակ կոլխոզի հողերը գյուղական հասարակության հողերից մի քիչ ավելի յեն, բայց կոլխոզի կովերի և ձիերի թիվը վերջինից պակաս ե: Այսպես, որինակ, կոլխոզերին պատկանող հարյուր դեսյատին վարելահողին ընկնում ե 23 ձի և կով, մինչդեռ գյուղական հասարակություններին՝ 27 ձի և կով: Դրա փոխարեն, կոլխոզները ավելի շատ մեքենաներ յեվ նորագույն գործիքներ են բանեցնում իրենց տնտեսության մեջ: Այսպես, որինակ, գյուղական հասարակությունների մեջ մի սերմնացանն ընկնում ե 145 դեսյատին ցանքսին, մի հնձող մեքենան — 65 դես., մի կալսող մեքենան — 102 դեսյատին ցանքսին: Իսկ արտելում մի սերմնացանին ընկնում ե 54 դես. ցանք, մի հնձող մեքենային — 48 դես., մի կալսող մեքենային — 77 դես.: Ուրիշ խոսքով, արտելները գյուղատնտեսական մեքենաներով յերեք անգամ ավելի յեն ապահովված, քան գյու-

դական հասարակութիւնները (տես նկար № 7): Կոմմունանե-



Գյուղ. Արտերներ

Գյուղ. Արտերներ

Գյուղ. Արտերներ

Նկար № 7

**Մեքենաների գործադրությունը առեկներում յեվ գյուղացական
հասարակությունների մեջ**

րում ավելի շատ են կիրառվում մեքենաները: Այսպես, որի-
նակ, մի տրակտորն ընկնում է 10 կոմմունայի:

Ընդհանրապես, կոլխոզներում յերկրագործութիւնը ավե-
լի բարձր հիմքերի վրա յե դրված, բան գյուղական հասարա-
կութիւններում:

Կոմմունաների և տեղերի յերեք բառորդ մասն անցել են
բազմացանքի սխտեմին (многосолье): Զարգանում են հա-
տուկ կուլտուրաների մշակույթները: Այսպես, որինակ, գյու-
ղական հասարակութիւնների մեջ զանազան խոտասերմերի
բոլոր ցանքերը $\frac{1}{100}$ ից պակաս են, մինչդեռ կոլեկտիվ-
ներում՝ մինչև $\frac{4}{100}$ մասն են կազմում: Կոլխոզների արտա-
դրականութիւնը սովորական գյուղացական տնտեսութիւն-
ներից բարձր է: Որինակ, Դոնի շրջանի Մորոզովսկի
վիճակում գործող Լենինի անվան կոմմունայում մի գետայտինից
ստացվում էր 81 փութ հաճարի բերք, մինչդեռ շրջակա գյու-
ղացիները ստանում էին 50 փութ (1922 թ.): Նույն կոմմու-
նայում մի գետայտինից ստացվող ցորենի բերքը համասար էր

79 փութ, մինչդեռ, շրջակա գյուղացիների բերքը 47 փութ
և այլն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔ

1. Յերբ ե ձեր շրջանում խորհրդային կոլեկտիվ տնտե-
սութիւն կազմակերպվել:
2. Քանի անգամ ունի այդ տնտեսութիւնը:
3. Վորբան և վորտեղից ե հող ստացել:
4. Վորտեղից ե վերցված կոլեկտիվի սարքավորումը:
5. Ինչպիսի ներքին կազմակերպութիւն նա ունի:
6. Կոլխոզը վորքան բերք ե ստանում:
7. Ինչպես ե գործադրվում ստացված ոգուտը:
8. Կոլխոզն ինչպես ե ոգնում շրջակա գյուղացիներին:

Կոլխոզների շինարարութիւն արդյունք-

ի հաճախությունը ները ցուցադրված են յերկու անգամ, 1919
թ. դեկտ, 3-ին՝ նրանց առաջին համագումարում և 1925 թ.
փետր. 26-ին՝ նրանց յերկրորդ համագումարում: Կոլխոզների
առաջին համագումարում հանդես յեկավ ընկ. Լենինը: Նա շեշտեց
կոմմունաների և արտերների անագին նշանակութիւնը գյու-
ղատնտեսութիւն արտադրողականութիւն բարձրացման գոր-
ծում և մատնանշեց կոլխոզների դերը մեր գյուղացութիւն հա-
մար:

«Յեթե նախկին աղքատ, թշվառ գյուղացական տնտեսու-
թիւնը հնի նման անփոփոխ մնար,—ասում ե ընկ. Լենինը,
այդ դեպքում սոցիալիստական ամրակուռ շենքի մասին խոսք
անգամ չեր կարող լինել: Միայն այն դեպքում, յերբ մեզ
կհաջողվի ցույց տալ գյուղացիներին հողի հասարակական, կոլ-
լեկտիվ, արտելային յեղանակով մշակումը, յերբ մեզ կհաջող-
վի ընկերական, արտելային տնտեսութիւն միջոցով ոգնել
գյուղացիներին, միայն այդ ժամանակ բանվոր դասակարգը,
իր ձեռքն ունենալով պետական իշխանութիւն դեկը, ցույց
կտա գյուղացուն իր իրավացիութիւնը, գյուղացական բազ-
մամիլիոն մասան իսկապես իր կողմը կգրավի հիմնովին»:

«Հողի հասարակական մշակումի առավելութիւնը կարելի չե ապացուցանել վոչ թե գրքով, վոչ թե հրամանով, այլ գործնական հաջող որինակով»: Այդ պատճառով, «այն կոմսունաները և արտելները, վորոնք հուլա են դնում միայն պետական աշակցութիւն վրա և կանոնավոր կերպով չեն տանում իրենց տնտեսութիւնը, վորոնք ցույց չեն տալիս շրջակա գյուղացութեան վորեւե ոգնութիւն, չեն լինում որինակ լավագուցն տնտեսավարութեան, անշատվում են գյուղացիներէրց — այդպիսի կոմսունաները և արտելները, վոչ միայն ոգտակար չեն, այլ վնասակար են»:

Կոլտնտեսութիւնների 2-րդ համագումարը յերեան հանեց արտելների և կոմսունաների ժամանակակից դրութիւնը: Այդպիսով, յերեաց, վոր կոլլեկտիվների մեծ մասը, չնայած իրենց փոքր չափին, հաջող կերպով կովել այն բոլոր աննպաստ պայմանների դեմ, վորոնք իրենց հետ բերել են բաղադրացիական կոիվները և նրա ավերմունքները: Կոլխոզները, ամրապնդելով իրենց տնտեսութիւններին հիմքերը, անցնում են ընկ. Լենինի ավանդների իրագործմանը, տեղական գյուղացութեան շրջանում ոգնութիւն են կազմակերպում ե լայն աշխատանքներ տանում:

ԶՐՈՒՅՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոմսունաներ, հողագործական արտելներ և միացյալ ուժերով հող մշակող ընկերութիւնները հանդիսանում են յերկրագործութեան ասպարիզում վորպիս արտադրական կոոպերատիվներ: Կոմսունան արտելից տարբերվում ե նրանով, վոր նրա անդամների տնտեսութիւնները ձուլված են միմյանց հետ, մինչդեռ արտելի յուրաքանչյուր անդամը վորոշ տնտեսութիւն ունի (բանջարանոց ե այլն): Կոմսունայում և արտելում մթերքներն ել տարբեր կերպով են բաշխվում: Կոմսունայում մթերքները բաշխվում են, ինչպես ընտանիքում, ըստ շնչերի, իսկ արտելում՝ ըստ աշխատավորների քանակի:

Կոմսունաները և արտելները մշտապես գործող կազմակերպութիւններ են, մինչդեռ ընկերութիւնները ժամանակավոր: Կոմսունաները, արտելները և ընկերութիւնները Խ. Ս. Հ. Միու-

թիւն սահմաններում կոչվում են «կոլխոզներ» (կոլլեկտիվ տնտեսութիւն) և մտնում են ընդհանուր կոոպերատիվ ցանցի մեջ:

Կապիտալիստական կարգերում «կոլխոզների» փորձն անհաջող անցավ. նրանք կամ քայքայվում եյին, կամ վերածվում կապիտալիստական կազմակերպութիւնների:

Նրանք անգոր եյին առանձին-առանձին պայքարելու կապիտալիստական ողակման դեմ: Կոլլեկտիվ հողագործութիւն ամենահաջող փորձը կատարվել ե իտալական գյուղատնտեսական բաւրակների շրջանում: Բայց այդ կազմակերպութիւնները չեն ընդգրկում գյուղացական լայն մասսաներին և իրենց անդամների աշխատանքն ամբողջովին չեն ոգտագործում:

Գյուղատնտեսութեան արտադրողականութեան բարձրացման անհրաժեշտութիւնը և գյուղական չքավորութեան դեպի հավաքական յերկրագործութիւնն ունեցած ձգտումը Խ. Ս. Հ. Միութեան մեջ ստեղծեցին լայն շարժում կոլխոզների կազմակերպման համար: 1924 թ. կոլխոզները 20,000-ից ավելի եյին: Արտելները հանդիսանում են ավելի տարածված և ավելի կայուն տեսակի միավորներ: Ձիագուրկ և միաձի գյուղացիները կոլխոզների կազմի $\frac{8}{10}$ մասն են կազմում: Խորհրդային որենսդրութիւն ամեն կերպ խրախուսում և հեշտացնում ե կոմսունաների, արտելների և ընկերութիւնների կազմակերպման գործը (բացման, ծանուցման կարգ, գյուղական հասարակութիւնից դուրս գալու դյուրութիւն, հարկային արտոնութիւններ, վարկեր և այլն):

Հողագործական արտելները և ընկերութիւններն իրենց ներքին կառուցվածքով շատ քիչ բանով են տարբերվում արտադրական կոոպերատիվներից:

ԽՍՀՄ մեջ կոլխոզները ոգտվում են գյուղացական վարելահողերի $\frac{1}{100}$ (462,000) մասից: Մի կոլխոզին, միջին հաշվով, ընկնում ե 50 հոգի և 140 դեսյատին հողամաս: Չնայած կոլխոզների փորրութիւն, նրանք առաջ են կանգնած գյուղացական հետաձնաց տնտեսութիւններից իրենց աշխատանքի արտադրողականութեամբ և լայն չափով գյուղատնտեսական մեքենաների գործադրութեամբ:

Ներկայումս կոլխոզները տնտեսական ուժն ամրապնդվում է և նրանք իրագործում են լենինի ավանդները— շրջակա գյուղացության հետ ստեղծելով լայն կապ, ցույց տալով նրան ոգնություն և միասնական ուժերով բարձրացնելով գյուղատնտեսության արտադրողականությունը:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչ նշանակում «կոլխոզ»:
2. Ի՞նչ տարբերություն կա կոմսունայի, արտելի և հողը մշակող ընկերության միջև:
3. Յերբ և վորտեղ են կազմակերպվել առաջին հողագործական արտելները և կոմսունաները:
4. Ո՞վքեր մտան այդ կազմակերպությունների մեջ:
5. Ի՞նչու արտելները և կոմսունաները չկարողացան գոյություն ունենալ կապիտալիզմի կարգերում:
6. Ի՞նչ գիտեք մինչ հեղափոխության շրջանի կոմսունաների և արտելների մասին:
7. Ի՞նչով են հայտնի իտալական յերկրագործական արտելները:
8. Ի՞նչու համար առաջ յեկան կոլխոզները Խ. Միության սահմաններում:
9. Ի՞նչպես աճեց կոլխոզների թիվը 1918 և 1924 տարիներին:
10. Ներկայումս կոլխոզները քանի՞ անդամ ունեն և մի կոլխոզին քանի՞ հոգի յե ընկնում:
11. Գյուղացության վրձ մասն է միացել կոլխոզներին:
12. Գյուղացիներից վորո՞նք են միանում կոլխոզին՝ կուլակները, միջակները, թե չբավորները:
13. Ժամանակակից կոլխոզներն ի՞նչ ղեկընտով են ղեկավարվում:
14. Ի՞նչպես է կազմակերպվում կոլխոզը, ո՞վ կարող է անդամ լինել նրան:
15. Ի՞նչպես է կոլխոզը հող ստանում:


16. Յերկրագործական ներքին արտելն ինչպիսի կառուցվածք ունի:

17. Ներկայումս կոլխոզները վոր՞քան վարելահողեր ունեն:

18. Ի՞նչու կոլխոզների արտադրողականությունն ավելի բարձր է գյուղական հասարակություններից:

19. Խ. Ս. Հ. Միության մեջ լենինն ի՞նչ ավանդներ է թողել կոլխոզների վերաբերմամբ:





ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գինը

1. Սահմանադրություն	Ինչու համար պետք է կոոպերացիան	— » 25 1
2. Գրեթով	Ինչպես հավաքել փաշավճարները	— » 15 1
3. » »	Գյուղատնտեսական վարչություն	— » 20
4. Գեթով	Կազմակերպեցեք խանութները	— » 2
5. Լեհիս Գ. Ի.	Կոոպերացիայի մասին	— » 2
6. Լեհիս Գ. Ի.	Կոոպերացիայի Այբուրենը, պրակ Ա.	— »
7. Կերմեցեցի	Կազմակերպել ինքդ քեզ	— » 3
8.	Կոոպ. խանութների սարքն ու կարգը	— » 10
9. Մահմուդյան	Խառնուկեցի	— » 15
10. Մ. Յեյլյան	Հայգյուղկոոպը և նրա խնդիրները	— » 30 »
11. Մեյլյան	Ժամանակակից կոոպերացիան	1 ու 10 »
12. Մեյլյան	Կոոպերացիան և գյուղացիական տնտեսությունը	— » 15 »
13. Յեյլյան	Կոոպերացիան և կոոպերացիան	— » 25 »
14. Շեյլյան	Մուրհակ	— » 30 »
15. Ջալալյան	Կոոպերացիայի համառոտ դասընթացը	— » 25
16. Պաշտոնյան	Գյուղատնտեսական վարչություն	— » 25 »
17. Յեյլյան	Ինչ պետք է իմանալ	— » 25 »
18. Պաշտոնյան	Կորչեն չարչիները	— » 8 :

Դիմել Պեհրասի գրախանութներին յեվ բաժանմունքներին



ՀՀ Ազգային գրադարան



NL0193160

